Ա. ԳՅՈՒԼԲՈՒԴԱՂՅԱՆ
Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Տ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

9

Ա. ԳՅՈՒԼԲՈՒԳԱՂՅԱՆ, Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Տ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ԴԱՍԱԳԻՐՔ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱՐ

Վերահրատարակություն

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ • 2018

Երաշխավորված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից

ՀՏԴ 373.167.1:30(075.3)
ԳՄԴ 60g72
Գ 674

Գյուլբուդաղյան Ա.
Գ 674 Հասարակագիտություն: Դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի 9-րդ դասարանի համար/ Ա. Գյուլբուդաղյան, Կ. Հարությունյան, Տ. Թովմասյան.— Եր.: «Զանգակ» հրատ., 2018.— 144 էջ:

ՀՏԴ 373.167.1:30(075.3)
ԳՄԴ 60g72

ISBN 978-9939-68- 313-3

© «Զանգակ-97» ՍՊԸ, 2018
© ԴՏՀՏՇՀ, 2018

ԳԼՈՒԽ 1

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Դաս 1–2

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԱՇԽԱՎՈՐ

8–րդ դասարանի դասընթացից դուք արդեն ծանոթ եք *ժողովրդավարություն* հասկացությանը:

Քննարկում ► *Թվարկե՛ք ժողովրդավարությանը բնորոշ հատկանիշներ:*

Թվարկված հատկանիշերի շուրջ խորհելով՝ կարող եք գալ եզրահանգման, որ *ժողովրդավարության գլխավոր հատկանիշը իշխանության պատկանելն է ժողովրդին:* Իսկ ինչպե՞ս է իրականացվում **ժողովրդաիշխանությունը:**

Ագորայի ավերակները Աթենքում

Հին Աթենքում, օրինակ, քաղաքացիները՝ չափահաս ազատ տղամարդիկ, հավաքվում էին շուկայի հրապարակում և քննարկում քաղաքի համար կարևոր նշանակության հարցեր: Կանայք, անչափահասները, ստրուկները, ոչ քաղաքացի բնակիչները ձայնի իրավունք չունեին:

Այսօր, բնականաբար, կառավարման նման ձևը չի կարող արդյունավետ լինել: Սակայն, ինչպես և Հին Աթենքում, ժողովրդի իշխանությունն իրականացնելու համար անհրաժեշտ են պաշտոնյաներ և նրանց լիազորությունները սահմանող օրենքներ: Առանց հստակ ձևակերպված օրենքների՝ ժողովրդի իշխանությունը կվերածվի կամայականության, անիշխանության, խառնաշփոթի: Իսկ դա ի վերջո կհանգեցնի բռնակալության: Այդ անցանկալի հետևանքից խուսափելու լավագույն միջոցը իրավունքի և օրենքի հաստատումն է, պետական մարմինների

լիազորությունների, քաղաքացիների իրավունքների ու պարտականությունների սահմանումը: Այդ ամենը ձևակերպող, սահմանող, հաստատող կարևորագույն փաստաթուղթը սահմանադրությունն է: Աշխարհի գրեթե բոլոր պետություններն ունեն սահմանադրություն: Այն այնքան կարևոր է, որ շատ հաճախ անվանում են երկրի **մայր օրենք, հիմնական օրենք, գլխավոր օրենք** կամ **օրենքների օրենք:**

Վերհիշե՛ք

Հայաստանի ժողովուրդն իր համընդհանուր կամքն արտահայտող քվեարկությամբ՝ հանրաքվեով, 1995 թվականի հուլիսի 5–ին ընդունեց հանրապետության Սահմանադրությունը, իսկ դրանից տասը տարի անց՝ 2005 թ. նոյեմբերի 27–ին, դարձյալ հանրաքվեով փոփոխություններ կատարեց Սահմանադրության մեջ: 2015 թ. դեկտեմբերի 6–ին տեղի ունեցած հանրաքվեով ՀՀ Սահմանադրության մեջ կատարվեցին նոր՝ էական փոփոխություններ:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն ամրագրում է սահմանադրական կարգի հիմնական դրույթները, մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները, պետական իշխանության հիմնական մարմինների՝ Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի, կառավարության, ինչպես նաև դատական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները:

Քննարկում

► *Ընթերցե՛ք Սահմանադրության 1–ին գլխից ստորև բերված հատվածը և առանձնացրե՛ք ըստ ձեզ առավել կարևոր հասկացությունները:*

Գլուխ 1. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:

Հոդված 2. Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին:

Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով:

Իշխանության յուրացումը որևէ կազմակերպության կամ անհատի կողմից հանցագործություն է:

Հոդված 3. Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները

1. Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է:

2. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են:

3. Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

Հոդված 4. Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը

Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման ու հավասարակշռման հիման վրա:

Հոդված 5. Իրավական նորմերի աստիճանակարգությունը

1. Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ:

2. Օրենքները պետք է համապատասխանեն սահմանադրական օրենքներին, իսկ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը՝ սահմանադրական օրենքներին և օրենքներին:

3. Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

Հոդված 6. Օրինականության սկզբունքը

1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

2. Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր: Լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին:

3. Օրենքները և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ են մտնում օրենքով սահմանված կարգով հրապարակվելուց հետո:

Հոդված 8. Գաղափարախոսական բազմակարծությունը և բազմակուսակցական համակարգը

1. Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են գաղափարախոսական բազմակարծությունը և բազմակուսակցական համակարգը...

Գործնական աշխատանք 1

Կարդացեք տարբեր երկրների սահմանադրությունների նախաբաններից բերված հատվածները: Տետրում նշեք ընդհանրություններն ու առանձնահատկությունները:

ԱՄՆ Սահմանադրության նախաբանը, 1787 թ.

ՄենքՄիացյալ Նահանգների ժողովուրդս, ավելի կատարյալ միություն ստեղծելու, արդարադատություն հաստատելու և ներքին խաղաղությունը համատեղ երաշխավորելու, պաշտպանություն ապահովելու, ընդհանուր բարեկեցությանն աջակցելու և մեզ ու մեր սերունդներին ազատության բարիքներով ապահովելու նպատակով հաստատում և հրապարակում ենք այս Սահմանադրությունը Ամերիկայի Միացյալ Նահանգների համար:

Գերմանիայի Հիմնարար օրենքի նախաբանը, 1949 թ.

(փոփոխվել է Գերմանիայի վերամիավորումից հետո՝ 1990 թ.)

Գերմանիայի ժողովուրդը, Աստծո և մարդկության առջև իր պատասխանատվության գիտակցմամբ տոգորված, աշխարհում խաղաղության համար ծառայելու վճռականությամբ, որպես միացյալ Եվրոպայի իրավահավասար մաս, իրեն տրված իշխանությամբ ընդունում է այս Հիմնարար օրենքը: Գերմանացիները Բադեն–Վյուրտենբուրգում, Բավարիայում, Բեռլինում, Բրանդենբուրգում, Բրեմենում, Համբուրգում, Ներքին Սաքսոնիայում, Սաարլանդում, Մակլենբուրգ–Արևմտյան Պոմերանիայում, Հյուսիսային Հռենոս Վեստֆալիայում և Թյուրինգիայում հասել են Գերմանիայի միասնությանն ու ազատությանընազատ ինքնորոշման ճանապարհով:

Օրենքը սարդոստայն չէ, որի միջից խոշոր ճանճերը ճեղքում դուրս են գալիս, իսկ մանրերը լռվում մնում են:

Օ. Բալզակ

Ֆրանսիայի Սահմանադրության նախաբանը, 1958 թ.

Ֆրանսիայի ժողովուրդը հանդիսավորությամբ հռչակում է իր հավատարմությունը մարդու իրավունքներին և ազգային ինքնիշխանության սկզբունքներին, որոնք ամրագրված են 1789 թ. հռչակագրով և վերահաստատված ու լրամշակված՝ 1946 թ. Սահմանադրության նախաբանով: Այս սկզբունքներից և ժողովուրդների ինքնորոշման իրավունքից ելնելովՀանրապետությունն իր անդրծովյան տարածքներին առաջարկում է իրենց ցանկությամբ հիմնել նոր հաստատություններ հանուն ժողովրդավարության զարգացմանՀիմնված համընդհանուր իդեալներիՀ ազատության, հավասարության և եղբայրության վրա:

Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության նախաբանը, 1993 թ.

ՄենքՀ Ռուսաստանի Դաշնության բազմազգ ժողովուրդս, հավաքված այս հողի վրա ընդհանուր ճակատագրով, երաշխավորում ենք մարդու իրավունքներն ու ազատությունները,

քաղաքացիական խաղաղությունն ու համերաշխությունը՝ պահպանելով մեր երկրի պատմական միասնությունը, ելնելով հավասարության և ազգերի ինքնորոշման համընդհանուր սկզբունքներից և հարգելով մեր նախնիների հիշատակը, ովքեր մեզ են փոխանցել սեր և հարգանք մեր երկրի հանդեպ, հավատք բարու և արդարության, ռուսական պետականության վերածննդի, որն ամրագրում է ժողովրդավարության անուրանալի արժեքներ և ապահովում է Ռուսաստանի բարօրությունը: Որպես համաշխարհային հանրության մասնիկ, գիտակցելով մեր պատասխանատվությունը ներկա և գալիք սերունդների հանդեպ՝ հաստատում ենք Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությունը:

Իրանի Իսլամական Հանրապետության Սահմանադրության նախաբանը, 1979 թ.

Իրանի Իսլամական Հանրապետության Սահմանադրությունը երաշխավորում է իրանական հասարակության մշակութային, հասարակական, քաղաքական և տնտեսական հաստատությունների զարգացումը՝ հենվելով իսլամական սկզբունքների և նորմերի վրա, որն իսլամական Ցումմայի (իսլամական հասարակության կազմակերպման ավանդական ձև) ազնիվ ձգտումն է: Այս ձգտումն արտահայտվում է Իսլամական մեծ հեղափոխության էությամբ և մահմեդական ժողովրդի պայքարով՝ սկզբից մինչև հաղթական ավարտ, որի մեջ արտացոլված են բնակչության բոլոր հատվածների վճռականությունն ու հզոր կամքը: Հիմա՝ այս մեծ հաղթանակի նախաշեմին, մեր ողջ ազգը մեկ մարդու պես սպասում է դրա իրականացմանը...

Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Սահմանադրության նախաբանը, 1949 թ.

Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը բազմազգ միասնական պետություն է՝ կազմված իր ժողովրդի բոլոր ազգություններից: Հաստատված են սոցիալիստական հարաբերություններ՝ հավասարություն, միասնություն և փոխօգնություն, որոնք պետք է շարունակական լինեն և գնալով ավելի ամրանան: Ազգությունների միասնությունը պաշտպանելու համար պետք է պայքարել ինչպես մեծ ազգի, այնպես էլ տեղական շովինիզմի (ազգայնամոլության) դեմ: Պետությունն անում է հնարավորինը՝ ապահովելու բոլոր ազգությունների բարօրությունը... Պետությունը հաստատում է չին ժողովրդի ու բոլոր ազգությունների նվաճումները և օրենքի ուժով սահմանում պետության անելիքներն ու նպատակները: Դա պետության հիմնարար օրենքն է և գերագույն իշխանությունը: Չին ժողովուրդը և մյուս ազգությունները, երկրում գործող բոլոր պետական, հասարակական, քաղաքական, տնտեսական հաստատություններն ու կազմակերպությունները պետք է հետևեն Սահմանադրությանը, պատասխանատու լինեն նրա արժանապատիվ պահպանման և կիրառման համար...

Օրենքը մարդկային իմաստության բարձրագույն դրսևորումն է, որն օգտագործում է մարդկանց փորձը հասարակության բարօրության համար:

Ս. Ջոնսոն

Ճապոնիայի Սահմանադրության նախաբանը, 1946 թ.

ՄենքՄՃապոնիայի ժողովուրդս, գործելով Ազգային Դիետում (ժողովում), մեր կողմից ընտրված ներկայացուցիչների միջոցով որոշեցինք, որ պետք է ապահովենք մեր և մեր սերունդների համար մյուս ազգերի հետ խաղաղ գոյակցության բարիքները և մեր երկրի վրա ազատության օրհնությունը, և վճռեցինք, որ երբևէ այլևս իշխանության գործողությունների պատճառով չենք ենթարկվի պատերազմի արհավիրքներին: Այս Սահմանադրությունը հռչակում է, որ ժողովրդից է ստանում իր լիազորությունները, որոնք կիրառվում են հանուն ժողովրդի իր իսկ ընտրյալների միջոցով: Սա մարդկության կողմից ճանաչված համընդհանուր սկզբունք է, որի վրա հենվում է այս Սահմանադրությունը: Մենք մերժում ենք այլ օրենքներ և սահմանադրություններ, որոնք հակասում են այս Սահմանադրությանը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախաբանը, 1995 թ.

Հայ ժողովուրդը, հիմք ընդունելով Հայաստանի անկախության մասին հռչակագրում հաստատագրված հայոց պետականության հիմնարար սկզբունքները և համազգային նպատակները, իրականացրած ինքնիշխան պետության վերականգնման՝ իր ազատասեր նախնիների սուրբ պատգամը՝ նվիրված հայրենիքի հզորացմանը և բարգավաճմանը, ապահովելու համար սերունդների ազատությունը, ընդհանուր բարեկեցությունը, քաղաքացիական համերաշխությունը, հավաստելով հավատարմությունը համամարդկային արժեքներին, ընդունում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը:

Գործնական աշխատանք 2

Ուսուցչի օգնությամբ ուսումնասիրեք ՀՀ Նախագահի, Ազգային ժողովի, կառավարության հիմնական գործառույթները՝ օգտվելով ՀՀ Սահմանադրության համապատասխան գլուխներից:

ՀՀ Սահմանադրության տեքստը տես http://www.arlis.am/ իրավական տեղեկատվական կայքում:

ՕՐԵՆՔԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Վերընթերցենք ՀՀ Սահմանադրության առաջին հոդվածը, որը, ի թիվս այլ հատկանիշների, մեր հանրապետությունը բնութագրում է որպես իրավական պետություն:

Իսկ ինչն է բնորոշ իրավական պետությանը:

Իրավական է այն պետությունը, որտեղ օրենքներն ընդունվում և փոփոխվում են միայն օրինական ճանապարհով: Իրավական պետությունը քաղաքացուն տալիս է պաշտպանվածություն և բացառում կամայականությունները:

ՀՀ Սահմանադրական դատարանի շենքը

Իրավական պետությունում մարդն ազատ է անելու այն, ինչ արգելված չէ օրենքով, մասնավորապես՝ կարող է օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանել իր իրավունքները և ազատությունները: Նման պետությունում երաշխավորվում է մարդու բոլոր իրավունքների և ազատությունների լիակատար դատական պաշտպանությունը:

Օրենքի և իրավունքի գերակայությունն ապահովում է վստահություն: Այն դառնում է ամուր հենարան, հիմք, և հասարակության յուրաքանչյուր անդամ պաշտպանված է լինում իր երկրում:

Օրենքի և իրավունքի գերակայության դեպքում բոլոր պետական մարմինները, կազմակերպությունները, պաշտոնատար անձինք և քաղաքացիները՝ անկախ քաղաքական հայացքներից և հասարակության մեջ զբաղեցրած դիրքից, հարգում են երկրի Սահմանադրությունն ու օրենքները և հավասար պատասխանատվություն կրում օրենքի առաջ: Օրենքն է սահմանում մարդկանց իրավունքները և նախատեսում նրանց պարտականությունները: Օրենքները կոչված են՝ հաստատելու կարգուկանոն, պաշտպանելու քաղաքացիների ազատությունը, անվտանգությունը, իրավունքները և պայմաններ ստեղծելու բարեկեցիկ կյանքի համար:

Օրենքի գերակայության բնութագրիչն այն է, որ անկախ այն բանից՝ օրենքը «լավն է», թե «վատը», նպաստում է հանրային այս կամ այն խնդրի լուծմանը, թե ոչ, միանշանակ ընդունելի պետք է լինի բոլորի համար, քանի դեռ այն չի փոխվել:

Քննարկում ► *Համապատասխանո՞ւմ է արդյոք իրականությանը իրավական պետության՝ վերը նշված սահմանադրական դրույթը: Ի՞նչ խոչընդոտներ կան մեր երկրում իրավական պետության կայացման ճանապարհին, և ինչպե՞ս կարելի է հաղթահարել դրանք:*

Քննարկման ընթացքում կարող եք օգտագործել ՀՀ Սահմանադրության 2–րդ գլխից ստորև բերված քաղվածքը:

Հոդված 23. Մարդու արժանապատվությունը
Մարդու արժանապատվությունն անխախտելի է:

Հոդված 24. Կյանքի իրավունքը
1. Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք:
2. Ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել կյանքից:
3. Ոչ ոք չի կարող դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի:

Հոդված 25. Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը
1. Յուրաքանչյուր ոք ունի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունք:
2. Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: ...

Հոդված 27. Անձնական ազատությունը
1. Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝
1) անձին իրավասու դատարանը դատապարտել է հանցանք կատարելու համար.
2) դատարանի իրավաչափ կարգադրությանը չենթարկվելու համար.
3) օրենքով սահմանված որոշակի պարտականության կատարումն ապահովելու նպատակով.
4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է: ...
2. Անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է ազատությունից զրկվելու պատճառների, իսկ քրեական մեղադրանք ներկայացվելու դեպքում՝ նաև մեղադրանքի մասին:
3. Անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որ այդ մասին անհապաղ տեղեկացվի իր ընտրած անձը: Այս իրավունքի իրականացումը կարող է հետաձգվել միայն օրենքով սահմանված դեպքերում, կարգով և ժամկետով՝ հանցագործությունների կանխման կամ բացահայտման նպատակով:
4. Եթե սույն հոդվածի 1–ին մասի 4–րդ կետի հիմքով ազատությունից զրկված անձի վերաբերյալ ազատությունից զրկվելու պահից ողջամիտ ժամկետում, սակայն ոչ ուշ, քան յոթանասուներկու ժամվա ընթացքում դատարանը որոշում չի կայացնում անազատության մեջ նրան հետագա պահելը թույլատրելու մասին, ապա նա անհապաղ ազատ է արձակվում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ձեր կարծիքով ինչպե՞ս են մեր երկրի քաղաքացիները վերաբերվում օրենքին. օրինապա՞ հ ենք արդյոք: Եթե ոչ, ապա ի՞նչ պատճառներ կարող եք նշել: Ինչո՞ւ ենք անվստահությամբ վերաբերվում օրենքին:

2. Մեր երկիրը օրենսդրական տեսանկյունից համեմատեք որևէ զարգացած, ժողովրդավարական հարուստ ավանդույթներ ունեցող երկրի հետ:

Գործնական աշխատանք 3

Իրավիճակ 1. Տղան պատրաստվում էր դպրոց գնալու, երբ հայրը մտավ խոհանոց և ասաց. «Այսօր ինձ անհրաժեշտ է քո օգնությունը. դու պետք է մնաս տանը և օգնես բերքահավաքին, այլապես չենք հասցնի»: Տղան փորձեց բացատրել, որ իր մասնակցությունն այդ օրվա դասերին չափազանց կարևոր է, քանի որ կիսամյակային ամփոփիչ գրավոր աշխատանք են կատարելու: Հայրը պնդեց իր պահանջը, նաև կշտամբեց որդուն՝ ասելով, որ ընտանիքի հոգսերը նրան բոլորովին չեն հետաքրքրում:

Իրավիճակ 2. Արգամն ու Արեգը 15 տարեկան էին: Սովորում էին նույն դպրոցում: Ճանաչում էին իրար երկար տարիներ, սակայն երբեք մտերիմ չէին եղել: Մի անգամ Արգամի բջջային հեռախոսը դպրոցում կորչում է: Արգամը մեղադրում է Արեգին՝ չունենալով ապացույցներ: Բանը հասնում է նրան, որ դասերի ավարտից հետո դպրոցի բակում կռիվ է սկսվում: Արգամը կանչում է ընկերներին, որ միասին պատժեն Արեգին: Տղան արդարանում է, որ ինքը կապ չունի այդ ամենի հետ, սակայն անիմաստ: Ծեծկռտուքից հետո խումբը փախչում է՝ Արեգին թողնելով շատ վատ վիճակում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Վերլուծեք ներկայացված իրավիճակները և գնահատեք իրավական տեսանկյունից:

2. Իրավացի՞ էր արդյոք առաջին իրավիճակում հայրը, իսկ երկրորդում՝ Արգամը:

Դաս 3

ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՍԵՌԱՅԻՆ ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ

Հոդված 25. Օրենքի առջև ընդհանուր հավասարությունը

Բոլորը հավասար են օրենքի առջև:

Հոդված 29. Խտրականության արգելքը

Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

<< Սահմանադրություն

Տունը պետք է լինի կնոջ աշխարհի կենտրոնը, բայց ոչ սահմանը:

Մ. Թեթչեր

Աշխարհի գրեթե բոլոր երկրներում բնակչությունը բազմազան է, այսինքն՝ կազմված է տարբեր ազգություններից, կրոնական ուղղությունների հետևորդներից և այլն: Մարդիկ իրարից տարբերվում են լեզվով, ավանդույթներով, մշակութային և ռասայական հատկանիշերով:

Ցանկացած երկրի բնականոն զարգացման համար շատ կարևոր է, որ այդ տարբերությունները մարդկանց նկատմամբ իրավական, հասարակական և այլ կարգի խտրականության հիմք չդառնան:

Խտրականությունը հակասում է մարդու իրավունքների հիմնարար սկզբունքներին:

Խտրականություն դնել նշանակում է անձին զրկել իր քաղաքական, քաղաքացիական, հասարակական և մշակութային իրավունքներից ու ազատություններից օգտվելու հնարավորությունից:

Բոլոր մարդիկ հավասար են արժանապատվությամբ և ունեն միևնույն հիմնական իրավունքները:

Խտրականության հիմքում հաճախ ընկած են տգիտությունը, կանխակալությունը և բացասական կարծրատիպերը: Քանի որ մարդկանց մեծ մասը վախենում, խու-

Աֆրոամերիկացի երեխան «գունավորների» համար նախատեսված ցայտաղբյուրի մոտ. ԱՄՆ, 1938 թ.

սափում է այն ամենից, ինչ անծանոթ է կամ օտար, նրանց արձագանքը, որպես կանոն, լինում է կասկածամիտ վերաբերմունքը կամ բռնությունը այն մարդկանց նկատմամբ, որոնց արտաքինը, մշակույթը կամ վարքագիծն արտասովոր են:

Այն վերաբերմունքը, գործողությունը կամ գործելակերպը, որոնք ընկճում, մեկուսացնում են մարդուն, կարող է համարվել խտրականություն: Մասնավորապես՝ պատմական արմատներ ունի ռասիստական այն համոզմունքը, թե մարդկանց ինչ-որ խումբ առավել կամ գերակա է մեկ այլ խմբի նկատմամբ: Այս համոզմունքը մի ժամանակ օգտագործվել է՝ «ցածրակարգ» մարդկանց նկատմամբ խտրականությունն արդարացնելու համար:

Խտրականությունը կարող է կիրառվել բացահայտորեն, երբ խմբի կամ անհատի հանդեպ միտումնավոր խտրական վերաբերմունք է դրսևորվում: Օրինակ՝ երբ որևէ ազգային խմբի ներկայացուցչի երեխայի դպրոց չեն ընդունում: Այսօրինակ խտրականությունն անվանում են նաև *ուղղակի խտրականություն:*

Անուղղակի խտրականությունը որոշակի քաղաքականության կամ միջոցառումների արդյունք է: Դրանք առաջին հայացքից չեզոք են, բայց իրականում հետևողականորեն սահմանափակում են որոշակի փոքրամասնությունների ներկայացուցիչների իրավունքները: Օրինակ՝ երբ որոշ խանութներում աշխատանքի չեն ընդունում գլխաշորով կամ երկարափեշ տարազով կանանց:

Քննարկում

► *Համաձա՞յն եք արդյոք ստորև բերված նամակի բովանդակությանը: Մեր երկրում իրականում հարգվո՞ւմ են փոքրամասնությունների իրավունքները:*

«Դպրոցում սովորելիս իմ հասարակագիտության ուսուցչին երբ հարցրի, թե ինչպես կնկարագրի ժողովրդավարական արդյունավետ համակարգը, նա առանց երկար մտածելու ասաց. *«Մեծամասնության կանոններ, փոքրամասնության իրավունքներ»:* Նա ընդամենը չորս բառով արտահայտեց այդ միտքը: Ասեմ, որ սկզբում շատ տպավորված էի այս ձևակերպումից, բայց աստիճանաբար սկսեցի նկատել որոշ անհամապատասխանություններ իրական վիճակի հետ:

Անդրադառնանք մեր երկրին ու տեսնենք, թե որքանով է կիրառելի այս բանաձևը մեզ համար հիմա և որքանով կիրառելի կլինի, ասենք, մի տասը տարի հետո: Փորձենք խորանալ այս ձևակերպման իրական իմաստի մեջ: Չգիտեմ՝ ով ինչպես, բայց ես դա ընկալում եմ հետևյալ կերպ. հասարակության մեծամասնություն կազմող մասը սահմանում է որոշակի կանոնների համակարգ՝ ելնելով տվյալ հասարակությանը բնորոշ հոգեկերտվածքից, պատմամշակութային, բարոյական և այլ առանձնահատկություններից: Այսպիսով ձևավորվում է որոշակի բարոյահոգեբանական մթնոլորտ, հասարակական կանոնների ամբողջություն, որին քիչ թե շատ պետք է հարմարվեն հասարակության անդամները: Այս ամենի հետ մեկտեղ հաշվի են առնվում հասարակության մեջ ապրող փոքրամասնությունների իրավունքները, և քանի դեռ դրանք ուղղակի կերպով չեն բախվում մեծամասնության կանոններին, պաշտպանվում ու պահպանվում են:

Սա իդեալական տարբերակն է, սակայն վերլուծելով մեր իրականությունը՝ ես տեսնում եմ գրեթե հակառակ պատկերը»:

Նախկին շրջանավարտ

Եթե կինն իրավունք ունի բարձրանալու կառափնարան, ապա իրավունք ունի նաև բարձրանալու ամբիոն:

Օլիմպիա դը Գուժ
«Կնոջ և քաղաքացուհու իրավունքների հռչակագիր», 1792 թ.

ՍԵՌԱՅԻՆ (ՍԵՌԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ) ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ

Կանայք և տղամարդիկ իրավահավասար են:
ՀՀ Սահմանադրություն, հոդված 30

Սեռային հավասարություն հասկացությունն առաջինը 1968 թ. կիրառել է ԱՄՆ–ի Կալիֆոռնիայի համալսարանի հոգեբանության դասախոս Ռոբերտ Սթոլերը՝ կանանց և տղամարդկանց հասարակական–հոգեբանական առանձնահատկություններն ընդգծելու համար: Դա ցույց է տալիս, թե ինչպես են ներկայացված կանայք կամ տղամարդիկ հասարակության մեջ կամ ինչ դիրք են գրավում:

Կանայք և տղամարդիկ տարբերվում են թե՛ կենսաբանական, թե՛ հասարակական տեսանկյունից:

Սեռական ասելով՝ հասկանում ենք կանանց և տղամարդկանց կենսաբանական, բնախոսական առանձնահատկությունները, իսկ *սեռային* ասելով՝ նրանց բնորոշ առանձնահատկությունները հասարակական դերեր կատարելիս:

Տարբեր են նաև հասարակության սպասելիքները նրանցից: Օրինակ՝ ակնկալվում է, որ կանայք լինեն համեստ, զիջող, խոնարհ, իսկ տղամարդիկ՝ համարձակ, ձեռներեց, համառ, իշխանատենչ և այլն:

Կնոջ և տղամարդու կենսաբանական տարբերություններից մեկն այն է, որ միայն կինը կարող է երեխա ծնել: Սակայն դա չի նշանակում, որ միայն նա պետք է զբաղվի երեխայի դաստիարակությամբ: Հասարակական կարևոր նշանակություն ունեցող գործառույթներին կինը և տղամարդը պետք է մասնակցեն հավասարապես, և դա պայմանավորված է արդեն նրանց սոցիալական դերերով:

Կնոջ և տղամարդու հասարակական (սոցիալական) դերը պայմանավորված է մասնագիտության, գործունեության ոլորտի, աշխատանքի ընտրության և այդ ընտրությունն իրականացնելու հնարավորություններով: Մարդիկ հավասար են օրենքի առջև և ունեն հավասար իրավունքներ ու ազատություններ՝ անկախ այն հանգամանքից, թե որ սեռին են պատկանում: Նրանց կենսաբանական տարբերությունները չեն կարող խտրականության պատճառ դառնալ:

Մարդաբանները, ազգագրագետներն ու պատմաբանները վաղուց հաստատել են, որ «տղամարդկային» և «կանացի» հատկանիշերի մասին պատկերացումները հարաբերական են. այն, ինչ մի հասարակությունում պատմական որոշակի ժամանակաշրջանում համարվում է տղամարդկային զբաղմունք, մեկ այլ հասարակությունում կարող է բնութագրվել որպես կանացի:

Սեռային դերերը պայմանավորված են տվյալ հասարակության մշակույթով, քաղաքակրթվածության աստիճանով, հոգեբանությամբ, ժողովրդի ավանդույթներով և կրոնական պատկերացումներով: Սեռային դերերը ձևավորվում են նաև տվյալ ժողովրդի կուտակած փորձի, պատմական անցյալի, հանրության հասարակական կազմի, երկրի աշխարհագրական դիրքի և աշխարհաքաղաքական պայմանների ազդեցությամբ: Սեռային դերերը բազմազան են, քանի որ տարբեր ու փոփոխական է մշակույթը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ ազգային փոքրամասնություններ կան մեր երկրում: Լրացուցիչ աղբյուրներից տեղեկություններ հավաքեք նրանց մշակույթի, ավանդույթների մասին:

2. Ի՞նչ եք կարծում, ընտանիքում ի՞նչ դեր ունի կինը, իսկ ի՞նչ դեր՝ տղամարդը:

3. Ինչպիսի՞ն է ընտանիքում վերաբերմունքը տարբեր սեռի ներկայացուցիչ երեխաների նկատմամբ: Տվե՛ք ձեր գնահատականը:

4. Տետրում ինքնուրույն գրե՛ք, այնուհետև քննարկե՛ք, թե միջոցառումների ժամանակ ինչ են մաղթում կնոջը (աղջկան), իսկ ինչ՝ տղամարդուն (տղային):

Դաս 4

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչ դեր ունի ընտրությունը մեր կյանքում: Ինչո՞ւ է դա կարևոր, ընդ որում՝ այնքան, որ ըստ ստորև բերված ասույթի հեղինակ Մաքս Ֆրիշի՝ կապված է մարդու արժանապատվության հետ: Ձեր կարծիքով ինչ նկատի ունի հեղինակը:

Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին:

Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով:

Իշխանության յուրացումը որևէ կազմակերպության կամ անհատի կողմից հանցագործություն է:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 2

ԻՆՉ Է ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Մարդու արժանապատվությունն ազատ ընտրության մեջ է:

Մաքս Ֆրիշ

Ընտրությունն այն գործընթացն է, որի միջոցով տվյալ երկրի քաղաքացիներն ընտրում են իրենց ներկայացուցիչներին և ղեկավարներին՝ նրանց լիազորելով իշխանությամբ: Ընտրությունը պետք է պարբերական բնույթ կրի, որպեսզի ընտրված պաշտոնյաները հաշվետու լինեն ժողովրդի առջև: Եթե նրանք պատշաճ կերպով չկատարեն իրենց պարտականությունները, ապա ընտրողները հաջորդ ընտրությանը այլևս չեն քվեարկի նրանց օգտին: Ընտրության միջոցով ձևավորված պետական իշխանությունը համարվում է օրինական: Սակայն ընտրությունն ինքնին դրա երաշխիքը չէ: Երաշխիք կարող է լինել միայն *ազատ* և *արդար* ընտրությունը:

Ընտրությունը նաև *հաշվետվողականության* կարևորագույն միջոց է, քանի որ ընտրողը կարող է իր վերաբերմունքն արտահայտել ընտրված ներկայացուցչի հանդեպ՝ հաջորդ անգամ չընտրելով նրան, եթե նա պատշաճ կերպով չի կատարել իր պարտականությունները:

Այսպիսով՝ ընտրությունը կարևորագույն դեր ունի ժողովրդավարական ներկայացուցչական իշխանություններ ձևավորելու համար:

Ազգային ժողովի և համայնքների ավագանիների ընտրությունները, ինչպես նաև հանրաքվեներն անցկացվում են ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 7

Գործնական աշխատանք 1

Տետրում կամ գրատախտակին պատկերեք նախագահական ընտրության թեկնածու–ներկայացուցչի և նրան բնութագրեք երեք հատկանիշով (օրինակ՝ ներկայացուցիչը պետք է լավ տեսք ունենա): Այնուհետև դասարանական քննարկման միջոցով պարզեք՝ արդյոք ընդունելի են ձեր նշած հատկանիշերը բոլորի համար:

Քննարկում ► *Ընտրությունը պետք է լինի ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ: Ինչ է դա նշանակում:*

Ընդհանուր ընտրական իրավունք

Սա ընտրական իրավունք է տալիս տվյալ երկրի չափահաս քաղաքացիներին՝ բացառությամբ անգործունակ ճանաչվածների ու ազատազրկման դատապարտված և քրեակատարողական հիմնարկում պատիժը կրող քաղաքացիների: Այսինքն՝ ընտրական իրավունք ունեցող քաղաքացիները, անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, հասարակական (սոցիալական) ծագումից, գույքային կամ այլ դրությունից, ունեն ընտրելու և ընտրվելու իրավունք:

Ուղղակի ընտրական իրավունք

Ազգային ժողովի պատգամավորները, տեղական ինքնակառավարման մարմինները, բացառությամբ Երևանի, Գյումրիի և Վանաձորի քաղաքապետերի, ընտրվում են անմիջականորեն:

Հավասար ընտրական իրավունք

Ընտրողներն ընտրությանը մասնակցում են հավասար հիմունքներով: Դա նշանակում է, որ յուրաքանչյուր ընտրող քվեարկության ժամանակ ունի մյուսներին հավասար թվով ձայն:

Գաղտնի քվեարկություն

Ընտրողի համար քվեարկության գաղտնիությունը ոչ միայն իրավունք է, այլև պարտականություն: Դա նշանակում է, որ ընտրողը քվեարկելուց հետո իրավունք չունի քվեաթերթիկը ցույց տալու որևէ մեկի: Քվեարկողի կամքի ազատ արտահայտման նկատմամբ վերահսկողությունն արգելվում է: Ընտրական իրավունքի կարևոր նշանակությունը քաղաքացու մյուս իրավունքների ապահովման գլխավոր երաշխիքներից մեկն է:

Ազգային ժողովի ընտրության կամ հանրաքվեի օրը տասնութ տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեին մասնակցելու իրավունք:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 48, մաս 1

ԸՆՏՐՈՂՆԵՐԸ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Կազմակերպե՛ք քննարկում ստորև ներկայացված նախընտրական դիրքորոշումների հիման վրա:

Քննարկում

- *Ընտրությունը միաժամանակ և՛ իրավունք է, և՛ պարտականություն:*
- *Քվեարկելը իրավունք է, բայց ոչ պարտականություն: Ոչ ոք ստիպողաբար չպետք է քվեարկի:*
- *Ոչ ոք չի կարող ընտրողներին ստիպել քվեարկել առաջադրված թեկնածուի օգտին:*
- *Իմաստ չկա քվեարկելու, միևնույնն է, ոչինչ չի փոխվի: Իմ ձայնը ոչինչ չի որոշում:*

Խմբային քննարկում

Ըստ տրված նախընտրական ելույթի տեքստի՝ կազմակերպե՛ք խմբային քննարկում՝ կազմելով կողմնակիցների և հակառակորդների երկու ընդդիմադիր խմբեր:

«Քաղաքացիներ: Հարգելի՛ ընտրողներ:

Չմասնակցելով ընտրություններին, չքվեարկելով առաջադրված թեկնածուներից որևէ մեկի օգտին՝ թույլ եք տալիս ուրիշներին ձեր փոխարեն կայացնել որոշումներ: Դուք նաև իշխանության ձևավորման ձեզ տրված օրինական հնարավորությունն եք հանձնում ուրիշներին: Դրանով իսկ կորցնում եք ընտրված ներկայացուցիչներից իրենց արածի կամ չարածի համար հաշվետվություն պահանջելու ձեր իրավունքը»:

Քննարկում ► *Ինչպե՞ս կարելի է ընդլայնել մասնակցությունը և քվեարկելու նկատմամբ հետաքրքրությունը:*

ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Ընտրությունը նախապատրաստվում և անցկացվում է հրապարակայնորեն:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կանոնարկող (նորմատիվ) որոշումները հրապարակվում են կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական համացանցային կայքում. *http://www.elections.am*

ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԵՐ ԵՎ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ

Ընտրական տեղամասերը կազմավորվում են հերթական համարակալմամբ: Ընտրական տեղամասերի համարակալման կարգը սահմանում է կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

Ընտրական տեղամասը կազմավորման պահին չպետք է ունենա ավելի քան 2000 ընտրող: Ընտրական տեղամասը չի կարող ընդգրկել տարբեր բնակավայրեր:

Քվեարկությունն անցկացվում է տեղամասային կենտրոնում: Տեղամասային կենտրոնը պետք է հնարավորին չափ մոտ լինի ընտրական տեղամասում ընդգրկված բնակելի շենքերին և տներին:

Տեղամասային կենտրոնը չի կարող լինել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ռազմական ուսումնական հաստատությունների, զորամիավորումների և առողջապահության հիմնարկների զբաղեցրած շենքերում:

Համապետական ընտրությունների ժամանակ տեղամասային կենտրոններ կազմավորվում են նաև կալանավայրերում:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի շենքը

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ընտրությունը ժողովրդավարության իրականացման կարևորագույն գործիքն է: Դրանում մեծ է քաղաքական կուսակցությունների դերը: Ընտրության միջոցով քաղաքական կուսակցությունները ցանկանում են իշխանության հասնել կամ պահպանել իրենց դիրքերը: Կարևոր է, որ ընտրությունից առաջ, ընտրության ընթացքում և ընդհանրապես կուսակցությունների միջև քաղաքական պայքարն ընթանա քաղաքակիրթ ձևով, պահպանվեն բարեկրթության կանոնները, չկիրառվեն միմյանց վարկաբեկելու «սև տեխնոլոգիաներ»:

Քաղաքական կուսակցությունները մեր երկրում կարող են մասնակցել բոլոր մակարդակների ընտրություններին՝ նախագահականից մինչև տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունը: Ընտրության ընթացքում կուսակցությունները ներկայացնում են ոչ միայն իրենց անդամների, այլև հասարակության որոշակի շերտերի շահերը, այն շերտերի, որոնք ընդունում են քաղաքական տվյալ ուժի՝ կուսակցության, դաշինքի, այլ քաղաքական միավորումների տեսակետերը:

Գործնական աշխատանք 2

Լրացրեք համապատասխան աղյուսակը ստորև տրված և լրացուցիչ այլ նյութերի հիման վրա:

1. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Հանրապետության նախագահն ընտրվում է յոթ տարի ժամկետով:

Հանրապետության նախագահ կարող է ընտրվել քառասուն տարին լրացած, վերջին վեց տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին վեց տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք:

Նույն անձը Հանրապետության նախագահ կարող է ընտրվել միայն մեկ անգամ:

Հանրապետության նախագահն իր լիազորությունների իրականացման ընթացքում չի կարող լինել որևէ կուսակցության անդամ:

Հանրապետության նախագահն ընտրվում է Ազգային ժողովի կողմից:

Հանրապետության նախագահի թեկնածու առաջադրելու իրավունք ունի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդը:

Հանրապետության նախագահ է ընտրվում այն թեկնածուն, որը ստացել է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք քառորդը:

ՀՀ Ազգային ժողովի շենքը

2. << ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Ազգային ժողովը կազմված է առնվազն հարյուր մեկ պատգամավորից:

Ազգային ժողովում Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով տեղեր են հատկացվում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին:

Ազգային ժողովն ընտրվում է հինգ տարի ժամկետով:

Ազգային ժողովի պատգամավոր կարող է ընտրվել քսանհինգ տարին լրացած, վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք:

Ազգային ժողովի հերթական և արտահերթ ընտրությունները նշանակում է Հանրապետության նախագահը:

Ազգային ժողովն ընտրվում է համամասնական ընտրակարգով: Ընտրական օրենսգիրքը երաշխավորում է կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորումը: Եթե ընտրության արդյունքով կամ քաղաքական կոալիցիա կազմելու միջոցով կայուն խորհրդարանական մեծամասնություն չի ձևավորվում, ապա կարող է անցկացվել ընտրության երկրորդ փուլ: Երկրորդ փուլի անցկացման դեպքում թույլատրվում է նոր դաշինքների ձևավորումը:

Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեն ընտրության օրը (քվեարկության օրը) 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:

Ազգային ժողովի պատգամավորների նվազագույն թիվը 101 է:

Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ յուրաքանչյուր ընտրող ունի մեկ ձայն:

3. << ՎԱՐՉԱՊԵՏԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ

Հանրապետության նախագահը նորընտիր Ազգային ժողովի լիազորությունների ժամկետը սկսվելուց հետո անհապաղ վարչապետ է նշանակում խորհրդարանական մեծամասնության ներկայացրած թեկնածուին:

Վարչապետի հրաժարական ներկայացնելու կամ վարչապետի պաշտոնը թափուր մնալու այլ դեպքերում Կառավարության հրաժարականն ընդունվելուց հետոՅոթնօրյա ժամկետում, Ազգային ժողովի խմբակցություններն իրավունք ունեն առաջադրելու վարչապետի թեկնածուներ: Ազգային ժողովը վարչապետին ընտրում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Վարչապետ չընտրվելու դեպքում քվեարկությունից յոթ օր հետո անցկացվում է վարչապետի նոր ընտրություն, որին մասնակցելու իրավունք ունեն պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի առաջադրած վարչապետի թեկնածուները: Եթե պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ վարչապետ չի ընտրվում, ապա Ազգային ժողովն արձակվում է իրավունքի ուժով:

Վարչապետի ընտրությունն անցկացվում է անվանական քվեարկությամբ:

Հանրապետության նախագահն անհապաղ վարչապետ է նշանակում Ազգային ժողովի կողմից ընտրված թեկնածուին:

4. ՀՀ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տեղական ինքնակառավարման մարմիններն են համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, որոնք ընտրվում են հինգ տարի ժամկետով:

Համայնքի ղեկավարի ուղղակի ընտրություններն անցկացվում են ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու և ընտրվելու, տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեն ընտրության կամ հանրաքվեի օրը տասնութ տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:

Օրենքով կարող է սահմանվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձանց՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին և տեղական հանրաքվեներին մասնակցելու իրավունքը:

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեն քվեարկության օրը 18 տարին լրացած՝ ընտրությունն անցկացվող համայնքի բնակչության ռեգիստրումՄ

1) մինչև քվեարկության օրն առնվազն 6 ամսվա հաշվառում ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները.

2) մինչև քվեարկության օրն առնվազն վեց ամսվա հաշվառում չունեցող Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, որոնք համայնքում հաշվառվել են պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրվելու կամ ազատազրկման ձևով պատիժը կրելուց ազատվելու հանգամանքներով պայմանավորված.

3) մինչև քվեարկության օրն առնվազն մեկ տարվա հաշվառում ունեցող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձինք (քաղաքացիություն չունեցող ընտրող):

Իշխանության մարմինը	Ով կարող է ընտրվել	Ինչ ժամկետով է ընտրվում	Քանի անդամից է կազմված իշխանության մարմինը
ՀՀ նախագահ			
ՀՀ Ազգային ժողով			
Համայնքի ղեկավար			
Ավագանի			

Հարցեր և առաջադրանքներ

1. Ընտրությունն ինքնին օրինական իշխանության ձևավորման երաշխիք չէ: Ո՞ր դեպքում դա կարող է երաշխիք լինել:

2. Բացատրե՛ք տրված հասկացությունների նշանակությունը.

• ընդհանուր ընտրական իրավունք,

• հավասար ընտրական իրավունք,

• ուղղակի ընտրական իրավունք,

• գաղտնի քվեարկություն:

3. Ինչպե՞ս է մեր հանրապետությունում ապահովվում ընտրությունների հրապարակայնությունը: Բավարա՞ր եք համարում ընտրությունների հրապարակայնության աստիճանը մեր երկրում: Ինչո՞ւ:

4. Ընտրական գործընթացներում քաղաքական կուսակցությունների կարևոր դերը հատկապես ակնառու է Ազգային ժողովի ընտրության ժամանակ: Հիմնավորե՛ք այս դրույթը՝ բերելով առնվազն երկու փաստարկ:

Դաս 5

ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՐԻՔ ԵՎ ԱՆՁԻ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Քննարկում

- *Ի՞նչ բարիքներ գիտեք:*
- *Որո՞նք են հանրային բարիքներն ըստ ձեզ: Ինչո՞ւ են դրանք հանրային:*

ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՐԻՔ

Հանրային են այն բարիքները, որոնք օգտագործվում են բոլորի կողմից այնպես, որ յուրաքանչյուր անհատի կողմից դրա օգտագործումը չի նվազեցնում մյուսների համար նույն ապրանքի օգտագործման հնարավորությունը: Հանրային բարիքի մյուս առանձնահատկությունն այն է, որ հնարավոր չէ որևէ մեկի համար բացառել դրա օգտագործումը: Օրինակ՝ հանրային հեռուստատեսությունը և ռադիոն բոլորի համար են, և որևէ մեկը չի կարող սահմանափակում մտցնել դրանցից օգտվելու հարցում: Բացի այդ՝ բնակչության մի մասի կողմից որևէ հեռուստահաղորդում դիտելը չի խոչընդոտում մյուսներին:

Բարիքներն իրենց բնույթով լինում են *մրցակցային* և *ոչ մրցակցային:* Մրցակցային է այն ապրանքը, որի սպառումը մեկի կողմից բացառում է դրա միաժամանակյա սպառումը մյուսների կողմից: Ոչ մրցակցային են այն ապրանքները, որոնց արտադրման որևէ փուլում նոր սպառողների ի հայտ գալու դեպքում արտադրանքի գինը չի բարձրանում: Օրինակ՝ տանը մեկի կողմից հեռախոսի, խոհանոցային դանակի, հագուստի օգտագործումը լուրջ խոչընդոտ է ընտանիքի մյուս անդամների համար, եթե նրանք ցանկանում են միաժամանակ օգտագործել դրանք: Հետևաբար, դրանք մրցակցային ապրանքներ են: Մրցակցային են բոլոր մասնավոր ապրանքները: Մինչդեռ փողոցային լուսավորությունից կարող են միաժամանակ օգտվել բոլորը: Իր բնույթով այն ոչ մրցակցային է:

Բարիքները լինում են նաև *զատվող* և *չզատվող:* Զատվող ապրանքների կամ ծառայությունների դեպքում հնարավոր է սպառողներին կանխարգելել դրանց օգտագործումից կամ մատչելիությունից: Ի հակադրություն դրան՝ չզատվող բարիքների դեպքում հնարավոր չէ սպառողներին արգելել օգտագործել տվյալ ապրանքները, ծառայությունները կամ սահմանափակել դրանց մատչելիությունը:

Սասունցի Դավթի արձանը
Քանդակագործ՝ Երվանդ Քոչար

Ճարտարապետական բազմաթիվ կառույցներ, ինչպիսիք են, օրինակ՝ Հանրապետության հրապարակը, Սասունցի Դավթի արձանը կամ Մատենադարանի շենքը, Գառնու տաճարը, Սանահինի եկեղեցին, մատչելի են բոլորի համար, այսինքն՝ չզատվող բարիքներ են, բոլորը կարող են զմայլվել դրանցով: Իսկ, օրինակ՝ մենք չենք կարող կարդալ մի ամսագիր, որի համար չենք վճարել, կամ չենք կարող դիտել մասնավոր հեռուստատեսությունների հաղորդումները, եթե չենք կատարել սեփականատիրոջ կողմից պահանջվող համապատասխան վճարը: Սրանք զատվող բարիքներ են: Կամ՝ մրգերն ուտելուց հետո հնարավոր չէ դրանք այլևս օգտագործել, իսկ թթվածին շնչելիս հնարավոր չէ մյուսներին արգելել նույն գործողությունը կատարել: Ուստի թթվածինը չզատվող բարիք է: Հետևաբար, *հանրային բարիքն այն է, որի ստեղծվելուց հետո այն կարող է սպառվել բոլորի կողմից առանց հավելյալ ծախսի:* Ընդ որում՝ հանրային բարիքի ստեղծումից հետո հանրության մյուս անդամներին հնարավոր չէ զրկել, բացառել դրանք սպառելուց: Ուստի հանրային բարիքը չզատվող է և ոչ մրցակցային:

Ելնելով վերը շարադրվածից՝ կարելի է ասել, որ բարիքները լինում են չորս տեսակի՝ մասնավոր, ընդհանուր, խմբային և հանրային:

Մասնավոր բարիքի օգտագործումը մեկի կողմից բացառում է դրա միաժամանակյա սպառումը մյուսների կողմից (մրցակցային զատվող):

Օրինակ՝ սնունդը, հագուստը, ավտոմեքենաները, անձնական օգտագործման էլեկտրատեխնիկան:

Ընդհանուր բարիքը նախատեսված է բոլորի համար (մրցակցային չզատվող):

Օրինակ՝ ձկան պաշարները, փայտանյութը, քարածուխը:

Խմբային բարիքը նախատեսված է օգտագործման որոշակի կանոնների համաձայն (ոչ մրցակցային զատվող):

Օրինակ՝ կինոթատրոնը, մասնավոր այգիները, արբանյակային հեռուստատեսությունը:

Հանրային բարիքի օգտագործումը մեկի կողմից չի բացառում մյուսների միաժամանակյա օգտագործումը (ոչ մրցակցային չզատվող):

Օրինակ՝ օդը, ջուրը, անվճար հեռուստատեսությունը, բնակչության անվտանգությունն ապահովող ոստիկանական ծառայությունը:

ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՐԻՔԸ ՄԵՐ ԿՅԱՆՔՈՒՄ

Հին աշխարհի հրաշալիքներից մեկը՝ Ալեքսանդրիայի փարոսը

Փարոս: Հանրային բարիքի դասական օրինակ է փարոսը: Այն չզատվող է, քանի որ հնարավոր չէ ծովափին մոտեցող որոշ նավերի զատել փարոսից օգտվելու հնարավորությունից (օրինակ՝ նրանց, ովքեր փարոսի համար նախատեսված վճարներ չեն կատարել): Այն նաև ոչ մրցակցային է, քանզի երբ սկսում է ծառայություններ մատուցել նավերի մի մասին, ապա մյուս նավերի համար այդ նույն ծառայության գինը չի ավելանում:

Ռադիո և հեռուսատատեսություն: Այսօր ռադիոհաղորդումներ և հեռուստահաղորդումներ հեռարձակող ընկերությունները չեն զատում որևէ մեկին իրենց ծառայությունից օգտվելու համար, և հեռարձակման գինը կախված չէ այն մարդկանց քանակից, ովքեր իրենց ալեհավաք սարքերով հաղորդումներ են ստանում: Տարիներ առաջ ռադիո– և հեռուստատեսային հաղորդումներ ստացողներին զատելը տեխնոլոգիապես հնարավոր չէր: Սակայն հեռարձակվող ազդանշանների կոդավորման կիրառումից հետո հեռարձակողների կողմից հնարավոր եղավ վճար գանձել և առանձնացնել չվճարողներին: Հետագայում կոդավորման տեխնոլոգիան փոխարինվեց մալուխային և արբանյակային հեռարձակմամբ, որը հնարավորություն է տալիս առանձնացնելու օգտատերերին:

Մաքուր օդ, աղտոտվածության նվազեցում: Մեր շնչած օդը ոչ մրցակցային և չզատվող բարիք է: Հետևաբար, օդի աղտոտվածության նվազեցումը հանրային բարիք է: Սևանա լճի մակարդակի բարձրացումը կամ վնասակար միջատների դեմ պայքարը ևս հանրային բարիքի օրինակներ են: Աղտոտվածության մակարդակի փոփոխությունը դրական կամ բացասական անդրադարձ է ունենում բոլորի վրա:

Եթե ոչ մրցակցային բարիքն ունի չզատվող հատկություն, ապա այն նաև հանրային բարիք է, ինչպես, օրինակ՝ լճի մակարդակի բարձրացումը: Սակայն տեխնոլոգիաների զարգացմանը զուգահեռ հնարավոր դարձավ բարիքին վերագրել զատելու հատկանիշ (ինչպես տեղի ունեցավ հեռուստատեսության հետ՝ մալուխային և արբանյակային կապի գործածության մեջ մտնելով):

Մայրուղիների, զանգվածային փոխադրման, կրթական համակարգեր: Այս համակարգերից օգտվողները միևնույն ձևով են շահում կամ տուժում: Տվյալ համակարգերի առանձնահատկությունները՝ կրթության որակը դպրոցում, երթևեկելի փողոցում առկա ողողափոսերը, Երևան–Գյումրի երթուղու միկրոավտոբուսով մարդկանց տեղափոխման ժամանակահատվածը, միևնույնն են բոլորի համար: Այս հանրային բարիքների օգտագործումը կարող է հանգեցնել կուտակումների, գերբեռնվածության, երբ մեծ թվով մարդիկ են օգտվում կամ օգտագործում: Վերջին հանգամանքը կարող է նաև հանգեցնել հանրային բարիքի որակի անկման: Նմանատիպ իրավիճակների կարող ենք հաճախակի հանդիպել հետևյալ հանրային բարիքների ծանրաբեռնվածության դեպքում՝ կամուրջ, հանրային լողավազան, օդանավակայան և այլն:

Տան, սենյակի բնութագրիչներ: Հեռուստացույցի կամ սառնարանի չափը, հյուրասենյակի գույնը, լողավազանի չափը, լողավազանի ջրի ջերմաստիճանը, համացանցի աշխատանքի արագությունը հանրային բարիքներ են: Ջերմաստիճանը դասասենյակում կամ գրասենյակում բոլորի համար միևնույնն է, մենք չենք կարող այն որոշ մարդկանց համար ավելի տաք կամ զով դարձնել:

Ոստիկանություն: Ոստիկանների կողմից մեր ապահովությունն ու իրավունքների պաշտպանությունը հավասարաչափ է բոլորի համար: Սակայն ոստիկանական պաշտպանվածությունը ենթակա է գերբեռնվածության. մեծաքանակ բնակչության համար պահանջվում են ոստիկանական ավելի մեծ ուժեր՝ միևնույն որակի պաշտպանություն ապահովելու նպատակով:

Գրքեր: Եկե՛ք դիտարկենք գրքում առկա տեղեկույթը: Գիրքը գրելուց և տպագրելուց հետո սովորաբար հեղինակները գրքի բովանդակությունը չեն փոխում՝ բոլոր ընթերցողների կարիքներին համապատասխանեցնելու համար: Հետևաբար, այս առումով գիրքն ինքնին մրցակցային չէ: Բայց մինչև վերջերս, երբ անհրաժեշտ էր, որ գիրքը տպագրվեր, փաթեթավորվեր և առաքվեր հասցեատիրոջը, յուրաքանչյուր լրացուցիչ օրինակի տպագրությունը պահանջում էր լրացուցիչ միջոցների ծախս: Ուստի ըստ իր բովանդակության՝ գիրքը ոչ մրցակցային էր, իսկ ըստ արտադրման եղանակի՝ բնութագրվում էր որպես մասնավոր բարիք: Այսօր իրավիճակն ամբողջովին փոխվել է. գիրքը հրատարակելուց հետո կարելի է դրա էլեկտրոնային տարբերակը առաքել սպառողին գրեթե զրոյական ծախսով: Հետևաբար, մեր օրերում գիրքը կարող է հանրային բարիք լինել, ինչպես հեռուստատեսության հեռարձակումը: Միևնույն

ժամանակ, գրքին հնարավոր է տալ զատելու հատկանիշ, որով կփոխվի նրա հանրային բնութագրիչը:

Տեղեկություն: Այն, ինչ ասվեց գրքերի մասին, վերաբերում է նաև գրառված երաժշտությանը, ֆիլմերին, թերթերին և ամսագրերին: Ոչ վաղ անցյալում այս բարիքների լրացուցիչ օրինակների արտադրությունը և բաշխումը բավականին ծախսատար էր: Այսօր, սակայն, համացանցի օգտագործման ընդլայնմանը զուգահեռ տվյալ տեղեկատվության մատչելիության աստիճանը անհամեմատ մեծացել է:

Որոշումների կայացում: Որոշումների կայացումը հանրային մարմինների, բիզնեսի և հասարակական կազմակերպությունների ղեկավար մարմինների կողմից կարող է տարբեր արդյունքների հանգեցնել: Չնայած այն հանգամանքին, որ մարդիկ կարող են տարբեր նախընտրություններ ունենալ և ռիսկի տարբեր աստիճաններ ցուցաբերել, հասարակական մարմնի կամ բիզնես կառույցի աշխատանքի արդյունքը միևնույնն է բոլորի համար: Այս դեպքում կայացված որոշումը հանրային բարիք է հասարակական կառույցի բոլոր անդամների կամ բիզնեսի բոլոր սեփականատերերի համար:

Քննարկում

- *Բերե՛ք հանրային բարիքի այլ օրինակներ: Խմբերով քննարկե՛ք և պարզաբանե՛ք, թե դրանցից որոնք են զատվող, որոնք՝ չզատվող:*
- *Ո՞ր հանգամանքների դեպքում դրանք կարող են փոխել իրենց՝ հանրային բարիք լինելու բնութագիրը:*

Գործնական աշխատանք

Տրանսպորտի բարելավումը՝ որպես հանրային բարիք

Աշխատանքը կարելի է կատարել խմբով կամ անհատապես:

Դուք համայնքի ավագանու անդամ եք և պետք է որոշում կայացնեք հանրային բարիքի ստեղծումը ֆինանսավորելու վերաբերյալ: Այն կարող է վերաբերել փողոցների բարեկարգմանը, հանրային տրանսպորտային համակարգի ստեղծմանը, ավտոբուսային տրանսպորտի բարելավմանը կամ տրանսպորտային համակարգի հետ առնչվող այլ նախագծերի: Դուք կարող եք նաև քննարկել այնպիսի հիմնախնդիր, որի շուրջ ներկայումս բանավիճում են ձեր համայնքում:

Օգտագործե՛ք հետևյալ աղյուսակը՝ հիմնախնդրի նկարագրության, հետազոտության և այլընտրանքային լուծումների որոնման ու դրանց գնահատման նպատակով կիրառելով ժողովրդավարության հիմնարար սկզբունքները: Կատարե՛ք որոշակի հետազոտություն ձեր հիմնախնդրի վերաբերյալ՝ օգտագործելով համացանցը, ուսումնասիրելով մամուլը կամ անցկացնելով հարցազրույցներ:

Հանրային քննարկում և որոշումների կայացում

Հիմնախնդրի նկարագրությունը	
Հիմնախնդրի պատճառները	Հիմնախնդրի լուծման այլընտրանքային եղանակներ
Ժողովրդավարության հիմնարար արժեքներ, որոնք կիրառվել են տվյալ լուծումն առաջարկելիս	Հիմնախնդրի լուծմանն ուղղված գործողություններ
Հիմնախնդրի լուծման տարբերակներ, գործողությունների հիմնավորումներ	
Հիմնախնդրի լուծման վերաբերյալ տեղեկությունների տարածման ձևեր	

Այլընտրանքային լուծումների նկարագրության ժամանակ պետք է հաշվի առնել հանրային բարիքի ֆինանսավորմանն առնչվող գործող օրենսդրությունը և հանրային բարիքը չարաշահողների խնդիրը:

Օրինակ՝ *շատ երկրներում գործում է տրանսպորտային երթևեկության կտրոնային համակարգը, և վարորդները փոխադրման ժամանակ գումարներ չեն գանձում ուղևորից: Ուղևորներն ինքնուրույն են գնում կտրոններ կամ երթևեկության համար նախատեսված այլ միջոցներ, դրանք դակում են հանրային տրանսպորտ բարձրանալիս: Ձեր կողմից պետք է լուծում առաջարկվի այն դեպքերի համար, երբ ուղևորները բարեխիղճ չեն և չեն դակում իրենց կտրոնները տրանսպորտից իջնելիս:*

- Հակիրճ շարադրության տեսքով ներկայացրեք, թե ինչու եք որդեգրել հիմնախնդրի լուծման տվյալ մոտեցումը՝ բերելով հիմնավոր դատողություններ: Նշեք նաև, թե ինչ ընթացք և զարգացում կունենա հիմնախնդիրը, եթե չընդունվի լուծման ձեր տարբերակը:
- Ներկայացրեք նաև գործողությունների հաջորդականություն, որոնց միջոցով հնարավոր կլինի կյանքի կոչել ձեր առաջադրած լուծումը կամ կբարձրացնի հանրության իրազեկվածությունը տվյալ հիմնախնդրի

վերաբերյալ: Գործողությունների հաջորդականությունը կարող եք շարադրել նամակի ձևով՝ հասցեագրված իշխանության համապատասխան մարմիններին, թերթի խմբագրին կամ այլ պատասխանատու անձի: Կարող եք նաև պատրաստել պաստառ կամ ստեղծագործական մեկ այլ աշխատանքի միջոցով հանրության ուշադրությունը հրավիրել ձեր բարձրացրած հիմնախնդրի վրա:

Աշխատանքի գնահատման չափանիշեր

- **Դիրքորոշում**

Հստակ և խորությամբ ներկայացվում է հիմնախնդրի նկատմամբ խմբի կամ անհատի դիրքորոշումը:

- **Հիմնավորվածություն**

Դիրքորոշումը հիմնավորվում է փաստերով:

- **Ծագման աղբյուրներ**

Դիրքորոշումն աջակցող հիմնավորումները բխում են հիմնախնդրի ծագման պատճառներից:

- **Փաստեր**

Արդյունավետորեն օգտագործվում է փաստերի վրա հիմնված տեղեկատվությունը:

- **Տվյալներ**

Դիրքորոշումը հիմնավորելու նպատակով արդյունավետորեն օգտագործվում են տվյալներ, ճիշտ են մեջբերվում աղբյուրները:

- **Ժողովրդավարության հիմնարար արժեքներ**

Դիրքորոշումը հիմնավորելու համար օգտագործվում են ժողովրդավարական տարբեր արժեքներ և սկզբունքներ:

- **Այլընտրանքներ**

Բացահայտվում են այլընտրանքային լուծումներ, կատարվում են համոզիչ հերքումներ:

Դաս 6

ՄԱԿ–Ի ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԴԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

«Միավորված ազգեր» անվանումն առաջարկել է ԱՄՆ–ի նախագահ Ֆրանկլին Ռուզվելտը: Այն առաջին անգամ կիրառվել է Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ «Միավորված ազգերի հռչակագրում» (1942 թ. հունվարի 1), երբ քսանվեց պետությունների ներկայացուցիչներ պարտավորվեցին շարունակել համատեղ պայքարը ֆաշիստական դաշինքի երկրների դեմ:

1945 թ. հիսուն պետությունների ներկայացուցիչներ հավաքվեցին Սան Ֆրանցիսկոյում՝ Միավորված ազգերի համաժողովում՝ մշակելու Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությունը:

ՄԱԿ–ի գլխավոր գրասենյակը Նյու Յորքում

Մենք՝ Միավորված ազգերի ժողովուրդներս, լի վճռականությամբ՝

փրկելու գալիք սերունդներին պատերազմի արհավիրքից, որը մեր կյանքի ընթացքում երկու անգամ անասելի վիշտ է պատճառել մարդկությանը, և վերահաստատելու հավատը մարդու հիմնական իրավունքների, անհատի արժանապատվության և արժեքի, տղամարդու և կնոջ, ինչպես նաև մեծ ու փոքր ազգերի հավասար իրավունքների նկատմամբ, և ստեղծելու այնպիսի պայմաններ, որոնք ապահովեն արդարությունն ու դաշինքներից և միջազգային իրավունքի այլ աղբյուրներից բխող պարտավորությունների հանդեպ հարգանքը, և ավելի մեծ ազատության պայմաններում խթանելու հասարակական առաջընթացն ու կենսամակարդակի բարելավումը.

Եվ հանուն այդ նպատակների՝

ցուցաբերելու հանդուրժողություն ու միմյանց հետ ապրելու խաղաղությամբ՝ որպես բարի դրացիներ, և միավորելու մեր ուժերը՝ միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը պահպանելու համար, և համապատասխան սկզբունքների ընդունման ու մեթոդների սահմանման միջոցով երաշխավորելու զինուժի գործադրումը բացառապես ընդհանուր շահերին համապատասխան, և միջազգային լծակները գործադրելու բոլոր ժողովուրդների տնտեսական ու հասարակական առաջընթացը խթանելու համար,

Որոշել ենք միավորել մեր ջանքերն այդ նպատակներին հասնելու համար,

ըստ այդմ՝ մեր համապատասխան կառավարությունները, ժողովված Սան Ֆրանցիսկոյում, բավարար ու պատշաճ կերպով իրենց լիազորությունները փաստած ներկայացուցիչների միջոցով համաձայնել են ընդունելու Միավորված ազգերի կազմակերպության սույն Կանոնադրությունը և հիմնում են «Միավորված ազգեր» անվանումով միջազգային կազմակերպությունը:

Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրություն,
1945 թ. հոկտեմբերի 24

Կանոնադրությամբ հաստատված ՄԱԿ–ի *նպատակներն* են՝

- պահպանել միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը,
- զարգացնել պետությունների բարեկամական հարաբերությունները՝ հիմնված հավասար իրավունքների և ժողովուրդների ինքնորոշման սկզբունքի վրա,
- նպաստել միջազգային համագործակցությանը տնտեսական, հասարակական, մշակութային և մարդասիրական խնդիրների լուծման հարցում և խթանել մարդու իրավունքների ու հիմնական ազատությունների նկատմամբ հարգանքը,
- լինել ազգերի՝ այս նպատակներին ուղղված գործողությունների համադասման կենտրոն:

ՄԱԿ–ը գործում է հետևյալ *սկզբունքների* համաձայն.

- հիմնված է բոլոր անդամների ինքնիշխան հավասարության վրա,
- բոլոր անդամները պետք է բարեխղճորեն կատարեն Կանոնադրությամբ իրենց ստանձնած պարտավորությունները,
- բոլոր անդամները պարտավոր են միջազգային վեճերը կարգավորել խաղաղ միջոցներով՝ չվտանգելով միջազգային խաղաղությունը, անվտանգությունն ու արդարությունը,
- ՄԱԿ–ի անդամները պետք է խուսափեն որևէ պետության դեմ ուժի գործադրումից կամ դրա սպառնալիքից:

ՄԱԿ–ի Գլխավոր ասամբլեայի նիստերի դահլիճը

ՄԱԿ–ի անդամակցությունը բաց է բոլոր խաղաղասեր ժողովուրդների համար, որոնք ընդունում են Կանոնադրությամբ հաստատված պարտավորությունները, ցանկանում են ու ի վիճակի են կատարելու այդ պարտավորությունները:

ՄԱԿ–ի գործողությունների դերն ու նշանակությունը մարդու իրավունքների պաշտպանության գործում շարունակում է մեծանալ, և հիմնական նպատակը մնում է նույնը՝ ապահովել, որ լիովին հարգվի «Միավորված ազգերի կազմակերպության ժողովուրդների» մարդկային արժանապատվությունը, ում անունից գրվել է Կանոնադրությունը: ՄԱԿ–ն ապահովում է, որ անդամ երկրներում մարդու իրավունքները ոչ միայն վերացականորեն սահմանվեն, այլև գործածության մեջ դրվեն:

Գործնական աշխատանք

Օգտվելով համացանցից և այլ աղբյուրներից՝ տետրում լրացրեք աղյուսակը:

Միջազգային կառույցներ	Ստեղծման տարեթիվը	Հիմնական նպատակները
Միավորված ազգերի կազմակերպություն		
Եվրոպական միություն		
Եվրոպայի խորհուրդ		
Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն		
Կարմիր խաչի միջազգային կոմիտե		

Հարցեր և առաջադրանքներ

1. ՀՀ Սահմանադրությունից նշեք այն հոդվածները, որոնք համապատասխանում են ՄԱԿ-ի նպատակներին և սկզբունքներին:

2. Համացանցից գտեք Կարմիր խաչի միջազգային կոմիտեի կամ միջազգային մարդասիրական այլ կառույցի գործունեության օրինակներ մեր երկրում:

Տեղեկատու նյութ

Եվրոպական միության ընդլայնումը 1957–2013 թթ.

Անդամակցության տարեթիվը	Անդամ երկրները	Անդամ երկրների թիվը
1957 թ.	Բելգիա, Գերմանիա (Գերմանիայի Դաշնային Հանրապետություն), Իտալիա, Լյուքսեմբուրգ, Նիդերլանդներ, Ֆրանսիա	6
1973 թ.	Մեծ Բրիտանիա, Դանիա, Իռլանդիա	9
1981 թ.	Հունաստան	10
1986 թ.	Իսպանիա, Պորտուգալիա	12
1995 թ.	Ավստրիա, Ֆինլանդիա, Շվեդիա	15
2004 թ.	Կիպրոս, Չեխիայի Հանրապետություն, Հունգարիա, Էստոնիա, Լատվիա, Լիտվա, Մալթա, Լեհաստան, Սլովակիա, Սլովենիա	25
2007 թ.	Բուլղարիա, Ռումինիա	27
2013 թ.	Խորվաթիա	28

Եվրոպական ինտեգրման պատմական նախադրյալները

Եվրոպական ինտեգրումն այն տեսքով, որ գոյություն ունի ներկայումս, դժվար թե առաջանար երկրագնդի մեկ այլ մասում: Նրա յուրահատուկ բնույթը բացատրվում է առաջին հերթին արևմտաեվրոպական քաղաքակրթության ինքնատիպությամբ, ինչն իր հերթին յուրահատուկ բնական պայմանների և պատմական զարգացման արդյունք է:

Արևմտյան Եվրոպայի բնությունն աչքի է ընկնում համեմատաբար մեղմ կլիմայով, ցամաքի կտրտվածությամբ և բազմաթիվ բնական սահմաններով, ծովին մոտ լինելով, նավարկելի գետերի առկայությամբ և այլ հատկանշական կողմերով: Այդ առանձնահատկություններից յուրաքանչյուրը հասարակական խոր հետևանքներ է ունեցել:

Միքելանջելո. «Ահեղ դատաստան»
1541 թ., Վատիկան

Արևմտաեվրոպական քաղաքակրթության ձևավորումն առաջին հերթին պայմանավորված էր **անտիկ ժառանգության** տևական և խոր ազդեցությամբ: Հռոմի անկումից հետո Արևմտյան Եվրոպան վեց երկար հարյուրամյակներ թաղվեց «անժամանակության» խավարի մեջ: Թվում էր, թե հռոմեական փառահեղ մշակույթից փշրանքներ են միայն մնացել: Սակայն պարզվեց, որ Արևմտյան Եվրոպայի «ընդերքում» այնուամենայնիվ պահպանվել էր գիտելիքի, տեխնոլոգիայի և մշակույթի որոշակի սահմանային զանգված: Այդ բաղադրատարրերից մեկը անհատապաշտությունն էր:

Անտիկ ժառանգության գլխավոր բաղադրատարրը **քրիստոնեությունն** էր: Արևմտյան Եվրոպայի ճակատագրում հսկայական նշանակություն ունեցավ հատկապես քրիստոնեության ընդունումը: Քրիստոնեության ընդունմամբ ծնունդ առած բարոյական հեղափոխությունն անչափ խորն էր: Քրիստոնեությունը հաստատեց Արարչի հետ անհատի անձնական կապի, Աստծո առաջ յուրաքանչյուրի անձնական պատասխանատ-

վության սկզբունքը, կանխանշեց Ահեղ դատաստանի օրը անձնական փրկության կամ կործանման հեռանկարը: Քրիստոնեությունը մեծապես ընդլայնեց անհատապաշտության սահմանները՝ ներառելով դրանցում յուրաքանչյուրին՝ ինչպես ազատ, այնպես էլ անազատ մարդուն: Եվ չնայած կանայք, աղքատներն ու ստրուկները առաջվա պես զրկված էին քաղաքացիական իրավունքներից, եկեղեցին հաստատեց նրանց հոգիների հավասարությունը հարուստ և արտոնյալ մարդկանց հոգու հետ: Նրանք մյուս քաղաքացիների նման մասնակցում էին միևնույն կրոնական արարողություններին՝ դրանով իսկ մուտք ստանալով դեպի մինչ այդ անմատչելի հասարակական շինություններ: Լիակատար իրավական և հասարակական հավասարության հասնելու համար եվրոպացիները, անշուշտ, դեռ երկար ճանապարհ պիտի անցնեին, սակայն բարոյական հավասարությունը՝ Աստծո առջև ունեցած հավասարության ձևով, հաստատվեց արդեն վաղ միջնադարում: Խոստանալով ամենքին արդարություն հանդերձյալ կյանքում՝ քրիստոնեությունը միաժամանակ ընդգծում էր յուրաքանչյուրի բարոյական պատասխանատվությունը իրական կյանքում:

Նոր տնտեսվարման և նոր բարոյականության հասարակական հիմքերը դրվեցին ավատատիրության ներսում: Ավատատիրությանը՝ որպես հասարակարգի, բնորոշ էր դասային անհավասարությունն ու շահագործումը, աստիճանակարգված (հիերարխիկ) ենթակայության խստիվ սկզբունքը: Այնուամենայնիվ, ի տարբերություն այլ տարածաշրջանների, ավատատիրությունն Արևմտյան Եվրոպայում հենվում էր ոչ միայն ուժի, այլև հասարակության բավականին ամուր իրավագիտակցության վրա: Ավատատիրության ընդերքում ծնունդ առան **օրենքի գերակայության, օրենքի առաջ բոլորի հավասարության, մարդու իրավունքների իրավական պաշտպանության սաղմերը:**

«Կապիտալիզմ ծնած գործոններն էին խելամիտ մշտական ձեռնարկությունը, խելամիտ հաշվապահական հաշիվը, խելամիտ տեխնոլոգիան և խելամիտ օրենքը, բայց ոչ միայն դրանք: Անհրաժեշտ լրացուցիչ գործոններ էին խելամիտ ոգին, ընդհանուր առմամբ խելամիտ ապրելաձևը և խելամիտ տնտեսական վարվելակերպը»:

Մաքս Վեբեր

Հետագայում արևմտաեվրոպական քաղաքակրթության բնութագրական հատկանիշների ձևավորման կենտրոն դարձան **միջնադարյան քաղաքները:** Հենց քաղաքներում ծնունդ առավ հակադիր տարբեր սկզբունքների՝ անհատապաշտության և կամավոր ընկերակցության, մրցակցության և համագործակցության ստեղծարար միավորումը: Քաղաքը դարձավ տնտեսվարման արդյունավետ տիպի զարգացման ասպարեզ: Այնտեղ սկիզբ առան բարեխիղճ աշխատանքի ավանդույթը, գյուտարարության մղումը, որակյալ արտադրանքի պաշտամունքը՝ հատկանիշներ, որոնք մինչ օրս էլ բնորոշ են եվրոպացիներին:

Արևմտաեվրոպական քաղաքակրթության զարգացման ճանապարհի գլխավոր ուղենիշը արդյունաբերական կապիտալիզմի առաջացումն էր: Նոր հասարակական դասակարգը՝ բուրժուազիան, դարձավ ստեղծողը ժամանակակից եվրոպական քաղաքակրթության՝ իր բոլոր դրական ու բացասական կողմերով հանդերձ: Կապիտալիզմի ձևավորման կարևորագույն նախադրյալներն էին Վերափոխությունը (Ռեֆորմացիա) և բողոքական բարոյականության տարածումը: Դրա շնորհիվ անհրաժեշտ պայմաններ ստեղծվեցին կապիտալիզմի գլխավոր հոգևոր հիմքերից մեկի՝ **խելամիտ** (ռացիոնալիստական) **անհատապաշտության** ձևավորման համար:

Ամփոփելով կարելի է արձանագրել. եվրոպական միասնացման (ինտեգրման) նյութական նախադրյալները ձևավորվել են Արևմտյան Եվրոպայի վերջին երկուհազարամյա պատմության ողջ ընթացքում: Նրա՝ պատմականորեն ձևավորված քաղաքակրթական առանձնահատկությունների թվում են՝

- խելամիտ անհատապաշտությունը,
- անձնական ազատությունը,
- օրենքի գերակայությունը,
- բոլոր քաղաքացիների հավասարությունը օրենքի առջև,
- մասնավոր սեփականության սահմանակարգը (ինստիտուտը),
- տնտեսվարման արդյունավետ եղանակը,
- կամավոր ընկերակցության, ողջամիտ փոխզիջման և համերաշխության ավանդույթը,
- քաղաքացիական հասարակությունը,
- քաղաքական ժողովրդավարությունը և այլն:

ԳԼՈՒԽ 1. ԱՄՓՈՓԻՉ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՀԽԱՏԱՆՔ

Ժողովրդավարական ընտրությունների կազմակերպում

Դասարանի խորհրդի ընտրություն

Ընտրության անցկացման քայլերը

1. Կանոնակարգի մշակում:
2. Կանոնակարգին համապատասխան՝ ընտրական հանձնաժողովի ձևավորում:
3. Դասարանի խորհրդի ընտրության անցկացում:
4. Խորհրդի նախագահի ընտրություն:

Կանոնակարգի մշակման համար ուսուցչի (դասղեկի) մասնակցությամբ կազմել աշխատանքային խումբ: Կանոնակարգի մշակումն ավարտել մեկ շաբաթվա ընթացքում:

Կանոնակարգում արձանագրել ընտրական հանձնաժողով կազմելու պահանջները.

- անդամների թիվը,
- կազմը (տղաներ, աղջիկներ),
- քվեարկությամբ է արվում, թե առաջադրմամբ,
- ինքնաառաջադրմամբ, թե ոչ,
- նույն հանձնաժողովը քանի անգամ կարող է ընտրություն կազմակերպել,
- ընտրության կազմակերպման կանոնները:

Ընտրական հանձնաժողովն իր կազմից գաղտնի քվեարկությամբ ընտրում է խորհրդի նախագահ: Ընտրական հանձնաժողովը մեկ շաբաթ առաջ հայտարարում է դասարանի խորհրդի ընտրության մասին՝ նշելով ընտրության անցկացման տեղը, ժամանակը: Հայտարարությունը ստորագրում է հանձնաժողովի նախագահը կամ նրա հանձնարարությամբ՝ հանձնաժողովի մեկ այլ անդամ:

Ընտրության անցկացումից առաջ խորհրդի անդամի թեկնածուները մեկ էջի սահմաններում ներկայացնում են իրենց նախընտրական ծրագիրը:

Ընտրությունն անցկացնելուց հետո ընտրական հանձնաժողովը ուսուցչի ներկայությամբ ամփոփում է արդյունքները և շնորհավորում խորհրդի նորընտիր անդամներին:

ԳԼՈՒԽ 2

ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐԸ, ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Դաս 7

ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Քննարկում

► *Ի՞նչ եք հասկանում՝ հանրային քաղաքականություն ասելով: Ձեր ասածը պարզաբանե՛ք օրինակներով:*



Սկզբում հեգնում են քեզ, հետո ծիծաղում են վրադ, փորձում են կռվել հետդ, ու դու հաղթում ես:

Մահաթմա Գանդի

Հանրային (պետական) քաղաքականությունն առնչվում է իշխանությունների գործունեությանը և այդ գործընթացի մեջ քաղաքացիների մասնակցությանը: Դա տեղի է ունենում, երբ իշխանությունը փորձում է լուծել հանրության առջև ծառացած հիմնախնդիրները: Ուստի հանրային քաղաքականության գործընթացի մեջ միշտ ընդգրկված են իշխանություններն ու հանրությունը: *Հանրություն* ասելով՝ այստեղ նկատի ունենք բնակչության այն հատվածին, որի վրա ազդում է այս կամ այն քաղաքականությունը: Օրինակ, երբ իշխանությունը կրթական բարեփոխումների միջոցով փորձում է բարելավել կրթության մատչելիությունը և որակը, տվյալ դեպքում հանրության անմիջական անդամներ են համարվում սովորողները, նրանց ծնողները, կրթության վարչական ղեկավարները, ուսուցիչները և դասախոսները:

Իշխանության մարմինները սովորաբար ընտրում են այնպիսի խնդիրներ, որոնք հետաքրքրում են հանրության բազմաթիվ անդամների կամ բարձրաձայնվում մարդկանց մեծամասնության կողմից: Այդ խնդիրները կարող են առնչվել կյանքի տարբեր ոլորտների՝ հասարակական, առողջապահական, կրթական, բնապահպանական և այլն: Օրինակ, երբ իշխանությունները փորձում

են պայքարել կոռուպցիայի դեմ, նրանք ցանկանում են բարձրացնել աշխատանքի արդյունավետությունն ու թափանցիկությունը, ստեղծել հավասար հնարավորություններ հանրության բոլոր անդամների համար:

Այն բոլոր դեպքերը, երբ իշխանության մարմիններն ընդգրկված չեն մարդկանց հիմնախնդիրների լուծմանը, համարվում են *մասնավոր կյանքի դեպքեր:* Այսպիսի դեպքերի օրինակներ են ձեր մասնակցությունը ծառատունկին կամ շրջակա միջավայրի մաքրման աշխատանքներին, տարեցներին և հաշմանդամներին օգնելը, Կարմիր խաչի կողմից առաջին օգնության ուսուցումը, բարեգործական համերգը, կրոնական արարողությունը, ժողովրդական տոնակատարությունը: Նման միջոցառումները երբեմն անվանվում են նաև հանրօգուտ աշխատանք:

Գործնական աշխատանք 1

Թերթերից կամ համացանցի լրատվական կայքէջերից ընտրե՛ք ոչ մեծ ծավալով որևէ հոդված, կարդացե՛ք և խմբով քննարկե՛ք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ է հոդվածի վերնագիրը, և ո՞վ է հեղինակը:
- Ի՞նչ հիմնախնդիր է ներկայացված հոդվածում:
- Հոդվածում նշվա՞ծ է իշխանության այն մարմինը, որը զբաղվում է այդ հիմնախնդրի լուծմամբ:

Այժմ փորձենք ընդհանրացնել *հանրային քաղաքականություն* հասկացության սահմանումը: Հանրային քաղաքականությունը ձևավորվում է, երբ *հանրության անդամները գիտակցում և բարձրաձայնում են* հիմնախնդրի մասին: Օրինակ՝ 1990–ական թվականների դժվար տարիներին ծառերի համատարած հատումներից, Սևանա լճի ջրի բացթողումներից և ձկան հսկայածավալ որսից հետո մեր հասարակությունը կանգնեց բնապահպանական լուրջ հիմնախնդիրների առջև: Արդեն երկու տասնամյակ է, ինչ հանրային ուշադրության կենտրոնում հայտնված այդ հիմնախնդիրների լուծման ուղղությամբ ջանքեր են գործադրում երկրի իշխանությունները, ինչի արդյունքում Սևանա լճի ջրի մակարդակը բարձրացել է շուրջ 6 մետրով: Անտառների վերականգնման ուղղությամբ, սակայն, դեռևս շատ անելիքներ կան:

Պետական իշխանությունների մշակած և իրականացրած գործողությունները պետք է ուղղված լինեն քաղաքացիների իրավունքների պաշտպանությանը: Դրանք սահմանված են ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով և միջազգային համաձայնագրերով:

Այդ գործողությունները պետք է նպաստեն նաև *հանրային բարիքին*՝ համընդհանուր բարեկեցությանը: Այսինքն՝ դրանք պետք է դրական փոփոխություններ առաջացնեն հանրային կյանքում, զարգացնեն այն: Օրինակ՝ կրթական բարեփոխումները մեր երկրում նախաձեռնվել են, որպեսզի մեր հասարակությունը միջազգային ասպարեզում դառնա ավելի մրցունակ:

Հռոմեական Ծերակույտի նիստը

Հանրային քաղաքականությունն իշխանության մարմինների՝ հանրության հետ համաձայնեցված այն գործողություններն են, որոնցով իշխանությունն իրականացնում է իր պարտականությունները՝ պաշտպանելու քաղաքացիների իրավունքները և նպաստելու համընդհանուր բարեկեցությանը՝ հիմնախնդիրների լուծման միջոցով:

Այդ գործողություններից են իշխանության օրենսդիր, գործադիր և դատական մարմինների կողմից օրենքների, որոշումների, կարգերի, հրամանների և այլ իրավական ակտերի ընդունումն ու դրանց իրականացումն այն անձանց ու մարմինների կողմից, ովքեր լիազորված են և դրանց համար կրում են իրավական պատասխանատվություն: Իշխանության մարմինների կողմից ստեղծված իրավական փաստաթղթերը հնարավորություն են տալիս մեզ՝ քաղաքացիներիս, հասկանալու, թե ինչ կարելի է անել և ինչպես, որ դեպքում կստանանք պետական պաշտոնյաների իրավական աջակցությունը, իսկ որ դեպքում՝ ոչ:

Հանրային քաղաքականության առանցքային տարրերն են՝

- **գործողությունների** նախաձեռնում և իրականացում,
- **հանրային պաշարների բաշխում,** այդ թվում՝ ֆինանսական և մարդկային,
- իշխանության մարմինների կողմից **գործողությունների առկայություն** կամ հանրության ազդեցություն իշխանության մարմնի վրա՝ որոշակի գործողություններ, քայլեր կատարելու ուղղությամբ,
- **խնդրի լուծում** որոշակի ժամանակահատվածում,
- **հանրային բարեկեցություն**:

Այսպիսով՝ հանրային քաղաքականություն իրականացնելիս պետական պաշտոնյաներն ազդում են հանրության անդամների կյանքի վրա, գործունեություն

են ծավալում իրենց լիազորությունների սահմաններում և կատարում են հանրային պաշարների բաշխում:

Գործնական աշխատանք 2

Ընթերցեք ստորև ներկայացված տեքստը և նշեք, թե որոնք են հանրային քաղաքականության առանցքային տարրերն այս դեպքում:

Հատուկ կարիքներ ունեցող երեխաների համար նոր ծրագրերի իրականացում

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունները կսերտացնեն համագործակցությունը՝ հատուկ կարիքներ ունեցող երեխաների հասարակական պաշտպանությունն առավել բարձր մակարդակով իրականացնելու ուղղությամբ: Հուլիսի 19-ին նշված գերատեսչությունների ղեկավարները ստորագրեցին համատեղ հրաման՝ «Հատուկ կարիքներ ունեցող երեխաների համար հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում միասնական կառավարում ու հասարակական պաշտպանություն ապահովելու գործողությունների ծրագրի» վերաբերյալ: Ըստ այդմ՝ 2012 թվականից սկսած նախատեսվում է իրականացնել մի շարք համատեղ գործողություններ: Ինչպես նշեց ՀՀ ԿԳ նախարարը, համագործակցության շնորհիվ հնարավոր կլինի հատուկ կարիքներ ունեցող երեխաներին լավագույնս ներառել հասարակությանը, ապահովել հասարակայնացման ավելի բարձր աստիճան: «Սա յուրատեսակ ճանապարհային քարտեզ է հետագա տարիներին համատեղ իրականացվելիք աշխատանքների համար»,— ասաց նա: Ապա հավելեց, որ յուրաքանչյուր դպրոց պետք է պատրաստ լինի մատուցելու ներառական կրթություն, իսկ դպրոցների շենքային պայմանները դրան համապատասխանեցնելու հարցում ֆինանսական միջոցներ կգտնվեն:

Նախարարի տեղեկացմամբ՝ ծրագրի շրջանակներում կլրամշակվի նաև հանրակրթական ուսումնական հաստատությունում սովորողի ընդունելության, տեղափոխման և ազատման կարգը: Հանրակրթական ուսումնական հաստատությունների յուրաքանչյուր տիպ կունենա ընդունելության իր չափանիշերը: Մի շարք հանրակրթական ուսումնական հաստատությունների կառաջարկվի վերակազմակերպվել որպես հատուկ դպրոց-կենտրոններ և այլընտրանքային ծառայություններ իրականացնող հաստատություններ: Հատուկ դպրոց-կենտրոնները կկազմակերպեն նաև նախադպրոցական կրթություն:

Կիրականացվեն նաև հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների հիմնանորոգման աշխատանքներ: Կփոխվեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության համար հատկացվող ֆինանսավորման չափաքանակները, կմշակվեն մեխանիզմներ կարիքների ամրագրման համար:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը հիշեցրեց, որ երեխաների պաշտպանությունը միշտ մնում է նախարարության գերակա խնդիրը: «Սա աշխատանքների նոր սկիզբ է, նոր փուլ և նոր էջ, որի միջոցով կապահովվի երեխաների իրավունք-

ների պաշտպանության ավելի բարձր մակարդակ»,— ասաց նա: Նախատեսվում է հանրակրթական ուսումնական հաստատությունների մասնագետների վերապատրաստում, կառավարման տեղեկատվական համակարգի ներդրում:

Ըստ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի

Գործնական աշխատանք 3

Ստորև նկարագրվածը կարդալուց հետո ներկայացրեք, թե իրավիճակներից որոնք են առնչվում հանրային քաղաքականությանը, և որոնք՝ մասնավոր կյանքին: Հիմնավորեք ձեր պատասխանը:

Իրավիճակներ

1. Ցարիներ տևած վայրագության մեղավորին բացահայտելու համար քաղաքի բնակիչները որոշեցին ստեղծել հասարակական խումբ:

2. Քաղաքի ավագանին որոշել է Թումանյան փողոցի վրա վճարովի ավտոկայանատեղի կառուցելՄստացված հասույթի միջոցով երթևեկության նշաններ պատվիրելու և տեղադրելու նպատակով:

3. Քաղաքացի Ազնիվ Ազատյանը, տեսնելով օդի աղտոտվածության աճող մակարդակը, նամակ է ուղարկել << Ազգային ժողովՄպահանջելով միջոցներ ձեռնարկել հիմնախնդիրը լուծելու ուղղությամբ:

4. Ավագ դպրոցի աշակերտները քվեարկել են «Եվրատեսիլի» նախընտրական մրցույթում իրենց նախընտրած թեկնածուի օգտին: Արդյունքում՝ իրենց թեկնածուն հաղթել է և իրավունք է ստացել մեկնելու ԵվրոպաՄմրցույթին մասնակցելու համար:

5. Միջնակարգ դպրոցի աշակերտները, օգտագործելով դպրոցի գույքը և միջոցները, հիմնել են դպրոցական թերթ, որը թողարկվելու է ամեն շաբաթ:

6. Հիմնական դպրոցի ուսուցիչները մարզային կրթական պատասխանատուների հետ իրենց հուզող հիմնահարցի շուրջ համաձայնության չգալուց հետո որոշել են դասադուլ անել:

7. Կրթության և գիտության նախարարությունը որոշել է տարեվերջին դպրոցներին երկու շաբաթ շուտ արձակուրդ տրամադրելՄֆինանսական միջոցների բացակայության պատճառով:

8. Գետակի շրջակայքում բնակվող քաղաքացիները շաբաթական երկու ժամ կամավոր մասնակցում են տարածքի մաքրման աշխատանքներին:

ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

Հանրային քաղաքականության միջոցով իշխանության մարմինները փորձում են լուծումներ տալ հանրության կողմից բարձրացված հարցերին: Ժողովրդավարական հասարակությունում հանրության անդամները՝ քաղաքացիները, իրենց հավանությունն են տալիս առաջարկվող լուծումներին: Սահմանադրական ժողովրդավա-

ությունը, որն ամրագրված է մեր Սահմանադրությամբ, հիմնվում է այն կարևոր գաղափարի վրա, որ ժողովուրդն է իշխանություններին լիազորում կառավարման գործառույթը:

Հանրային քաղաքականության վարման գործում կենտրոնական դեր է վերապահված *իշխանության երեք ճյուղերին*՝ օրենսդիր, գործադիր և դատական:

Օրինաստեղծ գործունեությունը մեր երկրում հիմնականում իրականացվում է քաղաքական կուսակցությունների կողմից: Հետևաբար, *քաղաքական կուսակցությունները* հանրային քաղաքականության գործուն մասնակիցներ են:

Մարդիկ, քաղաքական կուսակցություններ

ԶԼՄ-ներ

Շահագրգիռ խմբեր / ՀԿ-ներ

Իշխանություն

Գործադիր մարմին

Օրենսդիր մարմին

Դատական մարմին

Գծապատկեր 1. Հանրային քաղաքականության մասնակիցները

Ժողովրդավարական հասարակությունում մարդիկ իրենց քվեն տալիս են կուսակցություններին՝ ելնելով հասարակական, համայնքային տարբեր հիմնախնդիրների լուծման ուղղությամբ տվյալ կուսակցության որդեգրած դիրքորոշումից:

Հանրային քաղաքականության մասնակիցների մյուս խումբը ներկայացնում են զանգվածային լրատվության (տեղեկատվական) միջոցները (ԶԼՄ), քանի որ դրանց միջոցով իրականացվում են հանրային հարցերի քննարկումներ: ԶԼՄ-ները կարողանում են տեղեկությունը հասցնել մեծաքանակ ունկնդիրների կամ ըն-

թերցողների: Մարդիկ, ԶԼՄ–ներից իրազեկվելով քննարկվող հիմնահարցերի մասին, շատ հաճախ հետաքրքրություն են դրսևորում այս կամ այն հարցի նկատմամբ, դիրքորոշում են ձևավորում, հնարավորություն են ստանում մասնակցելու հարցի քննարկմանը:

Սովորաբար հանրության մեջ ձևավորվում են որոշակի հիմնախնդրի նկատմամբ միևնույն հետաքրքրություն ունեցող մարդկանց խմբեր՝ շահագրգիռ խմբեր, ովքեր ձգտում են իշխանությանը համոզելու իրենց արժեհամակարգին և հետաքրքրություններին համապատասխանող քաղաքական գործողություններ, քայլեր մշակել և իրականացնել: Օրինակ՝ բնապահպաններն ընդդիմանում են արդյունաբերության զարգացման նպատակով անտառահատումների իրականացմանը, ոռոգման նպատակով Սևանա լճից ջրի լրացուցիչ բացթողնմանը և տարբեր միջոցառումներ են կազմակերպում՝ կառավարության վրա ազդելու, իրենց կարծիքով՝ անցանկալի գործողությունները կանխելու նպատակով:

Շահագրգիռ խմբերը լինում են գրանցված և չգրանցված: Նրանք գործում են հանրապետական, մարզային կամ համայնքային մակարդակով: Գրանցված շահագրգիռ խմբի օրինակ են հասարակական կազմակերպությունները: Համացանցի զարգացմանը զուգընթաց, որի շնորհիվ ձևավորվել են մի շարք վիրտուալ խմբեր (օրինակ՝ բնապահպանների կամ քաղաքային մշակութային հուշարձանների պահպանության ուղղությամբ Ֆեյսբուքում կամ սոցիալական այլ ցանցերում ստեղծված խմբերը), մեծացել է չգրանցված խմբերի ազդեցությունը հանրային քաղաքականության վրա:

Քննարկում

► *Ովքե՞ր են հանրային քաղաքականության մասնակիցները:*

► *Ձեր կարծիքով ովքե՞ր են ամենակարևոր մասնակիցները:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Որքանո՞վ է կարևորվում հանրային քաղաքականության գործընթացին քաղաքացիների մասնակցությունը:

2. Փորձե՛ք ուսումնասիրել հանրային որևէ հիմնախնդիր և առաջարկել դրա լուծման այլընտրանքային տարբերակներ:

Դաս 8–9

ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԵՎ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՔԱՅԼԵՐԸ

Հաջորդաբար ներկայացնենք հանրային քաղաքականության գործընթացի փուլերը:

Մուտք: Հանրային քաղաքականության գործընթացը սկսվում է հիմնախնդրի *բացահայտմամբ,* որը կատարվում է մասնակիցներից մեկի կամ մի քանիսի միջոցով: Հիմնախնդրի բացահայտման համար կան տարբեր գործիքներ՝ մարդկանց հետ զրուցելը, մասնագետների կարծիքը, հարցազրույցների անցկացումը, իրավիճակի ուսումնասիրումը, կարիքների գնահատումը, դիտարկումը:

Հիմնախնդրի բացահայտումից հետո կատարվում է հիմնախնդրի *ուսումնասիրում* և *քննարկում:* Քաղաքական կուսակցությունները հարցը քննարկում են Ազգային ժողովում, կարծիք հարցնում կառավարությունից և անհրաժեշտության դեպքում կազմակերպում են հանրային լսումներ, որի ժամանակ շահագրգիռ կողմերը ներկայացնում են իրենց մոտեցումները: Տվյալ դեպքում հանրային քաղաքականությունը ձևավորվում է օրենքի տեսքով և ընդունվում ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների մեծամասնության կողմից հավանության արժանանալու դեպքում:

Քննարկում ՀՀ Ազգային ժողովում

Կա նաև այլ ճանապարհ. ՀՀ կառավարությունը նախարարությունների և գերատեսչությունների միջոցով մշակում է օրենքի, որոշման, հայեցակարգի և իրավական այլ փաստաթղթերի նախագծեր, որոնք ներկայացվում են ՀՀ Ազգային ժողովի քննարկմանն ու հաստատմանը: Քննարկմանը մասնակցում են շահագրգիռ կառույցները, անհրաժեշտության դեպքում՝ հանրության տարբեր խմբեր:

Ջահերով երթ դեպի Ծիծեռնակաբերդ

Հաճախ հանրային քաղաքականության այս կամ այն ուղղության ձևավորումը նախաձեռնում են շահագրգիռ խմբերը, հասարակական կամ միջազգային կազմակերպությունները: Նրանց հիմնական նպատակն է բարելավել համայնքային կյանքի որոշակի կողմերը, որոնք հիմնված են այդ կառույցների արժեհամակարգի վրա: Օրինակ՝ որոշ միջազգային կազմակերպություններ (ՄԱԿ, Եվրոպայի խորհուրդ և այլն) նպատակ են դրել Հայաստանում նպաստելու հաշմանդամություն ունեցողների, հատկապես երեխաների բարեկեցության բարձրացմանը: Ուստի փորձում են ազդել հանրային քաղաքականության գործընթացի վրա՝ նախաձեռնելով օրենսդրական փոփոխություններ:

Վերջապես՝ հանրային քաղաքականության ձևավորման գործընթացում նախաձեռնություն են հանդես բերում առանձին մարդիկ կամ մարդկանց խմբեր: Նրանք դիմում են իշխանության տարբեր օղակների՝ իրենց հետաքրքրող հիմնախնդրի լուծման ուղղությամբ բարեփոխումներ իրականացնելու համար: Այդ նպատակով այցելում կամ նամակներ են հղում իշխանության մարմիններին, հանդիպում իրենց կողմից ընտրված ներկայացուցիչների՝ պատգամավորների հետ, հանդես գալիս ԶԼՄ-ներով, դիմում շահագրգիռ խմբերին և այլն: Երբեմն մարդկանց խմբերը, քաղաքական կուսակցությունները իրենց հիմնահարցերի մասին բարձրաձայնում են հավաքների կազմակերպման միջոցով: Ժողովրդավարական երկրներում մարդիկ ազատորեն կարող են օգտվել խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրենց իրավունքից, որը, ինչպես հայտնի է, ամրագրված է ՀՀ Սահմանադրության մեջ:

Այսպիսով՝ հանրային քաղաքականության գործընթացի մուտքը՝ նոր գործընթացի սկսումը կամ գործող քաղաքականության փոփոխումը, նախաձեռնվում է

քաղաքական կուսակցությունների, շահագրգիռ խմբերի, առանձին մարդկանց կամ իշխանությունների կողմից:

Գործնական աշխատանք 1

Հետևե՛ք զանգվածային տեղեկատվական միջոցներում քննարկվող հանրային քաղաքականության որևէ հիմնախնդրի քննարկմանը և արդյունքները ներկայացրե՛ք ձեր դասընկերներին:

Որոշումների կայացում: Հանրային քաղաքականության ուղղությամբ նախաձեռնության վերաբերյալ *որոշման կայացումը* տեղի է ունենում իշխանության օրենսդիր, գործադիր կամ դատական մարմինների, նրանց կազմում գործող կառույցների կողմից: Օրինակ՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը սահմանում է ջրի, էլեկտրաէներգիայի, բնական գազի մատուցման ծառայությունների սակագները, մատակարարման և օգտագործման կանոնները ՀՀ տարածքում:

- *Նշե՛ք հանրային քաղաքականություն վարող պետական իշխանության առնվազն երեք մարմին:*

Ելք (արդյունք): Հանրային քաղաքականության ուղղությամբ նախաձեռնության, քննարկման և ուսումնասիրման *արդյունքում (ելք)* իշխանության լիազոր մարմնի կողմից որոշում է կայացվում հետևյալ ձևերով.

- օրենք,
- ծրագիր, հայեցակարգ,
- որոշում, հրամանագիր, հրաման, կարգադրություն,
- կարգ և այլն:

Հանրակրթական դպրոցի խորհուրդը և տնօրենը համարվում են դպրոցի կառավարման մարմիններ, իսկ նրանց կողմից ընդունված որոշումները՝ հանրային քաղաքականության գործընթացի մաս: Օրինակ, երբ դպրոցը որոշումով հաստատում է իր ներքին կարգապահական կանոնները, բոլորը պարտավոր են հետևել դրանց, քանի դեռ դրանք փոփոխության չեն ենթարկվել:

Գործնական աշխատանք 2

Փնտրե՛ք վերջերս ընդունված որևէ օրենսդրական կամ այլ իրավական փաստաթուղթ, նշե՛ք ընդունող մարմնի անունը և նկարագրե՛ք, թե հանրային քաղաքականության ինչ հիմնախնդրի է առնչվում տվյալ փաստաթուղթը:

Սերուկների ազատագրման հռչակագրի ստորագրումը Ա. Լինքոլնի կողմից
Հռչակագիրը մեծ քննադատության արժանացավ հատկապես ԱՄՆ–ի հարավային նահանգներում: Դժվարությամբ, բայց հռչակագիրն այնուամենայնիվ կյանքի կոչվեց՝ ազատություն բերելով բազմաթիվ ստրուկների:

Իրականացում: Որոշում կայացնելուց հետո պատասխանատուները պարտավոր են *իրականացնել* տվյալ հանրային քաղաքականությունը՝ համաձայն գործողությունների այն ծրագրի, որը իրավասու պետական մարմինը մշակել է՝ ելնելով ընդունված քաղաքականությունից: Օրինակ՝ երեխաների կրթության սահմանադրական իրավունքը ապահովելու նպատակով ՀՀ Ազգային ժողովն ընդունել է մի շարք օրենքներ, որոնց միջոցով հռչակվում է պարտադիր ու անվճար միջնակարգ կրթության քաղաքականությունը մեր երկրում: Այս քաղաքականությունն իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը, կրթության և գիտության նախարարությունը և իշխանության այլ լիազորված մարմիններ ընդունել են բազմաթիվ ենթաօրենսդրական նորմատիվ փաստաթղթեր, որոնք կարգավորում են հանրակրթության ոլորտի պատասխանատուների, դպրոցների վարչական ղեկավարների, ուսուցիչների և ծնողների աշխատանքը, որով նրանք պետք է ապահովեն երեխայի անվճար ու պարտադիր միջնակարգ կրթությունը:

Գնահատում, արժևորում: Հանրային քաղաքականության վերաբերյալ որոշում կայացնելու պահից սկսվում է դրա իրականացումը, որին զուգահեռ տեղի է ունենում այդ գործընթացի *գնահատումը, արժևորումը:* Այն է՝

առաջարկվող քաղաքականությունը
- արդյունավե՞տ է իրականացվում,
- այն նպաստո՞ւմ է հանրային բարեկեցության լավացմանը,
- պաշտպանվո՞ւմ են մարդու իրավունքները և ազատությունները,
- հատկացվող միջոցներն ուղղվո՞ւմ են նախատեսված նպատակներին,
- լա՞վ է կառավարվում այդ գործընթացը:

Գնահատումը կատարվում է քաղաքականության իրականացման գործընթացի դիտարկման, ուսումնասիրման կամ դրան մասնակցելու միջոցով: Գնահատողի դերում կարող է լինել ցանկացած մարդ, ով շահագրգռված է կամ առնչվում է այդ քաղաքականությանը՝ ներառյալ դրա մասնակիցները: Մենք և մեր ծնողները շատ հաճախ քաղաքականության իրականացման այս կամ այն գործողության գնահատողներն ենք, երբ դրանք առնչվում են մեր կյանքին: Փորձում ենք հասկանալ, թե ինչ է կատարվում և ինչպես, մեր ունեցած տեղեկությունների հիման վրա ձևավորում ենք կարծիք:

Քննարկում ► *Ի՞նչ հետևանքներ կլինեն, եթե հանրային քաղաքականության գնահատում, արժևորում չկատարվի:*

Հետադարձ կապ: Գնահատում կատարելուց և կարծիք ձևավորելուց հետո տեղի է ունենում տեսակետերի փոխանակում: Այդ նպատակով իշխանության մարմինները, կազմակերպությունները կամ քաղաքացիները *հետադարձ կապ* են հաստատում հանրային քաղաքականություն վարողների հետ՝ նրանց հայտնելով իրենց տեսակետերն ու գնահատականները: Շատ կարևոր է, որ հետադարձ կապը քաղաքականություն վարողներին հնարավորություն տա հասկանալու իրենց կողմից որդեգրված քաղաքականության թերություններն ու առավելությունները, որպեսզի գործի շտկման ուղղությամբ համապատասխան քայլեր արվեն:

Քննարկում ► *Ձեր կարծիքով ինչպե՞ս կարելի է ապահովել արդյունավետ հետադարձ կապ ձեր կողմից ընտրված որևէ հիմնախնդրի ուղղությամբ:*

Հետադարձ կապ իրականացնելու ընթացքում տեղի է ունենում հիմնախնդրի քննարկում և հիմնախնդրի լուծմանն ուղղված հանրային քաղաքականության վերանայում: Արդյունքում՝

ա. շարունակվում է տվյալ քաղաքականության վարումը,
բ. կատարվում են փոփոխություններ քաղաքականության մեջ,
գ. մշակվում է նոր քաղաքականություն,
դ. հիմնախնդրի լուծման դեպքում դադարում է քաղաքականության իրագործումը:

Այնուհետև այս շրջափուլը կրկնվում է գծապատկեր 2–ում նշված եղանակով (բացառությամբ վերջին դեպքի):

Գործնական աշխատանք 3

Գծապատկեր 3–ի միջոցով բացահայտեք ձեր դասարանի կողմից ընտրված հիմնախնդրի համար պատասխանատու իշխանության մարմինները:

Գծապատկեր 2. Հանրային քաղաքականության գործընթացը



Գծապատկեր 3. Հանրային քաղաքականության պատասխանատուները



ՏԵՂԵԿՈՒՅԹԻ ՀԱՎԱՔՈՒՄ ՏԱՐԲԵՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ

Աշխատանքի կատարման քայլերը

1. Ձեր դասարանի ընտրած համայնքային հիմնախնդրի մասին տեղեկություններ հավաքեք:

Որպես ՀՀ քաղաքացի՝ դուք իրավասու եք արտահայտել ձեր կարծիքը համայնքի, մարզի, նաև երկրի հիմնախնդիրների, դրանց լուծման ուղղությամբ իշխանությունների ձեռնարկած քայլերի վերաբերյալ:

Քննարկեք և որոշեք, թե որ աղբյուրներն են նպատակահարմար տեղեկություններ հավաքելու գործում: Ստեղծեք ուսումնական թղթապանակ և տեղադրեք հավաքված տեղեկությունները այդ թղթապանակի մեջ:

ՏԵՂԵԿՈՒՅԹԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Գրադարաններ

Դպրոցական, հանրային, համայնքային կամ ուսումնական այլ հաստատությունների գրադարաններն ունեն գրքեր, թերթեր, ամսագրեր և այլ նյութեր, որոնք կարող են տեղեկություններ պարունակել ձեր ընտրած հիմնախնդրի վերաբերյալ: Գրադարանավարները կօգնեն ստանալու անհրաժեշտ տեղեկատվություն:

Հեռախոսային կամ այլ տեղեկատուները ներառում են տարբեր հիմնարկ–ձեռնարկությունների, գրասենյակների, այդ թվումYգրադարանների հասցեներ և հեռախոսահամարներ: Հնարավոր է՝ գրադարաններում հայտնաբերված տեղեկույթը պարունակի նաև լուսանկարներ: Անհրաժեշտ է, որ դրանք պատճենվեն և ներառվեն ձեր թղթապանակում:

Տեղեկատվական միջոցներ

Ձեր ընտրած հիմնախնդրի մասին կարող եք տեղեկություններ հավաքելYկապվելով համայնքում (մարզում) գործող տեղեկատվական միջոցների ներկայացուցիչների հետ: Լրագրողները տեղեկություններ են հավաքում իշխանության մարմինների գործունեության, հասարակական և համայնքային հնչեղություն ունեցող հիմնախնդիրների վերաբերյալ: Ուստի նրանք կարող են ձեր դասարանին կարևոր տեղեկություններ հաղորդել և նույնիսկ նկարներ ու այլ փաստեր տրամադրել:

Գիտամանկավարժական աշխատողներ

Համալսարանների դասախոսները, գիտաշխատողները կարող են լինել ձեր կողմից ուսումնասիրվող հիմնախնդրի փորձագետները: Այցելելով համալսարաններ կամ հեռախոսով կապվելով նրանց հետ՝ կարող եք ավելի մանրամասն տեղեկություններ ստանալ: Կարող եք տեղեկություններ ստանալ նաև դպրոցի ուսուցիչներից:

Փաստաբաններ և դատավորներ

Շատ փաստաբաններ և դատավորներ անդամակցում են հասարակության տարբեր խմբերի, իրավաբանական անվճար ծառայություններ մատուցող կազմակերպությունների: Նրանք քաջատեղյակ են համայնքի հիմնախնդիրներին: Կարող եք նաև դպրոցի տնօրենից տեղեկանալ այն անձանց մասին, ովքեր մասնագիտությամբ իրավաբան են:

Համայնքային կազմակերպություններ և շահագրգիռ խմբեր

Բազմաթիվ շահագրգիռ խմբեր իրենց հետաքրքրություններն ունեն այն հիմնախնդիրների վերաբերյալ, որոնք առկա են մեր երկրում կամ համայնքում: Պետք է փորձեք բացահայտել այնպիսի խմբեր, որոնք զբաղվում են ձեր ընտրած հիմնախնդրով: Ուսուցիչները, ծնողները, այլ անձինք կարող են օգնել ձեզ՝ կապ հաստատելու նրանց հետ:

Օրենսդիր մարմին

Ազգային ժողովի պատգամավորները պատասխանատու են հանրային հիմնախնդիրները բացահայտելու և դրանց վերաբերյալ հանրային (պետական) քաղաքականություն մշակելու համար: << Ազգային ժողովի պատգամավորները և պատգամավորական խմբակցությունները գրասենյակներ ունեն ինչպես Ազգային ժողովում, այնպես էլ իրենց ընտրատարածքներում: Նրանց հեռախոսահամարները կարելի է գտնել տեղեկագրերում և համացանցում: Կարող եք նաև ձեր ընտրած հիմնախնդրի վերաբերյալ նրանց տեսակետերին ծանոթանալՄհետևելով հեռուստատեսությանը, ռադիոյին, տպագիր և էլեկտրոնային մամուլին:

Վարչական հիմնարկ–ձեռնարկություններ

Հնարավոր է, որ համայնքային, մարզային, քաղաքային վարչական հիմնարկներում, կառավարական մարմիններում աշխատող անձինք առնչվեն ձեր ընտրած հիմնախնդրին: Այդ կառույցները կարող են տեղեկություններ հաղորդել հիմնախնդրի, ինչպես նաև իշխանությունների կողմից կատարվող համապատասխան գործողությունների վերաբերյալ:

Համացանց

Վերոհիշյալ բոլոր աղբյուրների հետ շփվելու և նրանց աջակցությունը ստանալու գերազանց հնարավորություն է տալիս համացանցըՄ համաշխարհային էլեկտրոնային ցանցը: Հայաստանում շատ դպրոցներ արդեն միացել են

համացանցին: Եթե ձեր դպրոցը դրանց թվում չէ, ապա օգտագործե՛ք մոտակա համացանցային կենտրոնը:

2. Բաժանվե՛ք հետազոտական խմբերի: Յուրաքանչյուր խումբ պետք է տեղեկություն հավաքի նշված մեկ կամ երկու աղբյուրներից: Խմբերի բաժանվելուց հետո ուսումնասիրե՛ք ձեզ բաժին հասած տեղեկության աղբյուրը՝ կազմակերպության աշխատակազմը, նրա գործունեությունը, դրան առնչվող օրենսդրությունը:

3. Պայմանավորվածություններ ձեռք բերեք տվյալ հիմնախնդրի լուծման համար պատասխանատու մարմնի ներկայացուցիչների հետ՝ դիտարկման, հարցազրույց անցկացնելու կամ ուսումնասիրելու նպատակով:

4. Օգտագործե՛ք ստորև տրված «Տեղեկության փաստաթղթավորման ձևը»՝ հարցազրույցներից կամ տպագիր ու էլեկտրոնային աղբյուրներից ստացված տեղեկությունների փաստաթղթավորման համար: Կարող եք նաև դասարան հրավիրել հիմնախնդրին իրազեկ անձանց, ովքեր կհայտնեն իրենց կարծիքը:

Տեղեկատվության փոխանցման յուրօրինակ ձև է եգիպտական պատկերագիրը, որի վերծանման շնորհիվ բացահայտվեցին Հին աշխարհի բազմաթիվ գաղտնիքներ:

Տեղեկության փաստաթղթավորման ձև

Հետազոտական խմբի անդամների անունները

_____

_____

Ամսաթիվը _____

Հետազոտվող հիմնախնդիրը

_____

ա. Տեղեկության աղբյուրը (համաձայնության առկայության դեպքում)

Անունը _____

Կազմակերպության (գրադարանի, գրասենյակի, գործակալության, էլեկտրոնային կայքի կամ հրատարակչության) անվանումը _____ _____, *հասցեն* _____, *հեռախոսը* _____

բ. Նամակով կամ զանգով տեղեկացված լինելու դեպքում պատասխանե՛ք հետևյալ հարցերին.

1. Ի՞նչ կարևորություն, լրջություն ունի այս հիմնախնդիրը ձեր համայնքում:

_____

_____

2. Ի՞նչ տարածվածություն ունի հիմնախնդիրը մեր հանրության կամ պետության մեջ:

_____

_____

3. Իշխանության ո՞ր օղակներն են պատասխանատու հիմնախնդրի լուծման համար: Ի՞նչ են անում նրանք այդ ուղղությամբ:

_____

_____

4. Ովքե՞ր են այն հիմնական անհատները, խմբերը կամ կազմակերպությունները, որոնք հետաքրքրություն են դրսևորում, կարծիք են արտահայտում հիմնախնդրի վերաբերյալ:

_____

ա. Ինչո՞ւ են նրանք հետաքրքրվում հիմնախնդրով:

_____
_____

բ. Որո՞նք են նրանց դիրքորոշումների կամ կարծիքների առավելություններն ու թերությունները:

_____
_____

գ. Ինչպե՞ս կարող ենք ավելի մանրամասն տեղեկություն ստանալ նրանց դիրքորոշումների, կարծիքների մասին:

_____
_____

դ. Ինչպե՞ս են այդ անհատները, խմբերը կամ կազմակերպությունները փորձում ազդել իշխանության մարմինների վրա՝ հիմնախնդրի լուծմանն ուղղված հանրային քաղաքականություն մշակելու և իրականացնելու համար:

_____
_____

ե. Եթե ձեր դասարանը մշակի հիմնախնդրի լուծմանն ուղղված որևէ հանրային քաղաքականություն, ինչպե՞ս կարող ենք ազդել իշխանության վրա՝ հիմնախնդրի լուծման ձեր տարբերակը հաշվի առնելու համար:*

_____
_____

Տեղեկության ձեռքբերման եղանակներ

1. *Այցելություններ գրադարաններ, վարչական մարմիններ կամ այլ վայրեր:*
2. *Հեռախոսազանգեր իրազեկ մարդկանց:*
3. *Պայմանավորվածությունների ձեռքբերում և հարցազրույցներ:*
4. *Գրառման և հարցման միջոցով տեղեկությունների ձեռքբերում:*

_____

* *Տվյալ առաջադրանքի կատարումը կարելի է շարունակել հետագա դասերի, գործնական աշխատանքների ընթացքում:*

ԳԼՈՒԽ 3

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ

Դաս 10–11

«ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ: ՔԱՂԱՔԱՑՈՒ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Պատմականորեն քաղաքացիությունը ցույց է տվել անձի հարաբերությունն իր ազգային պատկանելությանը, սակայն պետության զարգացմանը զուգընթաց այն դարձավ անձի՝ տվյալ **պետության քաղաքացի** լինելու հանգամանքը: Մեր օրերում այն նաև ցույց է տալիս մարդու առնչությունը պետությունների միավորմանը: Օրինակ՝ 1993 թվականին Եվրոպական միության հիմնումով առաջացավ նոր տիպի քաղաքացիության հասկացություն՝ Եվրամիության քաղաքացի:

Քաղաքացիությունն իր մեջ ներառում է որոշակի իրավունքներ և պարտականություններ: Այդպիսիք են աշխատանքի, կրթություն ստանալու իրավունքը և այլն: Որևէ երկրի քաղաքացիություն չունեցողը կամ քաղաքացիությունից զրկվածը կոչվում է քաղաքացիություն չունեցող անձ:

Մեր երկրում քաղաքացիությունը սահմանվում է ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով:

Քաղաքացիություն ձեռք բերելու հիմնական գործոններն են որևէ երկրում ծնված լինելու հանգամանքը, ծնողների քաղաքացիությունը, ամուսնությունը այլ երկրի քաղաքացու հետ կամ որևէ երկրում ապրելով քաղաքացիություն ձեռք բերելը՝ հպատակությունը:

Տվյալ երկրում ծնված լինելու հանգամանքը: Շատ մարդիկ քաղաքացիություն են ստանում այն երկրում, որի տարածքում նրանք ծնվել են: Քաղաքացիության ձեռքբերման այսպիսի ձևը բնութագրվում է լատիներեն *jus soli* (***հողի իրավունք***) արտահայտությամբ:

Ծնողներից ժառանգած քաղաքացիություն: Երբ անձի ծնողներից մեկը կամ երկուսը որոշակի երկրի քաղաքացիներ են, ապա տվյալ անձը, որպես կանոն, դառնում է այդ երկրի քաղաքացի: Քաղաքացիության ձեռքբերման այս ձևը լատիներենում կոչվել է *jus sanguinis* (***արյան իրավունք***): Դա նշանակում է, որ քաղաքացիությունը ստացվել է ազգությամբ կամ ծագմամբ: Այս սկզբունքը ընդունված է եվրոպական, ասիական, աֆրիկյան շատ պետություններում: Այս պարագայում նորա-

ծինը ստանում է իր ծնողների քաղաքացիությունը նաև այն դեպքում, երբ ծնվում է իր ծնողների քաղաքացիության երկրի սահմաններից դուրս: Որոշ երկրներ սահմանափակումներ են դնում ծագման հանգամանքի վրա՝ սահմանելով սերունդների քանակը, որի դեպքում այլ երկրում բնակվող անձն իրավունք ունի ձեռք բերելու ժառանգված քաղաքացիություն:

Ամուսնությամբ ձեռք բերված քաղաքացիություն: Քաղաքացիություն կարելի է ձեռք բերել՝ ամուսնանալով տվյալ երկրի քաղաքացիություն ունեցող անձի հետ: Այս դեպքում այն կոչվում է *jure matrimonii* (***ամուսնության իրավունք***):

Հպատակություն: Պետությունները սովորաբար քաղաքացիություն են շնորհում ներգաղթյալներին (էմիգրանտներ), ովքեր տվյալ երկրում բնակվել են այնքան, որքան սահմանված է տվյալ երկրի օրենսդրությամբ: Հաճախ քաղաքացիություն ստանալ ցանկացող անձինք պարտավոր են հանձնել քաղաքացիության թեստ, տալ հավատարմության երդում և հրաժարվել նախկին քաղաքացիությունից: Մեր երկրում ընդունված է քաղաքացիության ձեռքբերման *«արյան»* սկզբունքը: Դա ամրագրված է մեր պետության հիմնական օրենքով՝ Սահմանադրությամբ:

ՀՀ քաղաքացիներին տրվում է կենսաչափական տվյալներ պարունակող նույնականացման քարտ և կենսաչափական անձնագիր: Քաղաքացին նույնականացման քարտ ստանում է կամավոր՝ 16 տարին լրանալու օրից: Կենսաչափական անձնագիրը ՀՀ քաղաքացու ինքնությունը և քաղաքացիությունը հաստատող փաստաթուղթ է ինչպես ՀՀ տարածքում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիության իրավունքը

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիներից ծնված երեխան Հայաստանի Հանրապետության քաղաքացի է:

2. Յուրաքանչյուր երեխա, որի ծնողներից մեկը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու իրավունք:

3. Ազգությամբ հայերը Հայաստանի Հանրապետությունում բնակություն հաստատելու պահից ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու իրավունք:

4. Ազգությամբ հայերը Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը ձեռք են բերում օրենքով սահմանված պարզեցված կարգով:

5. Հայաստանի Հանրապետության քաղաքացին չի կարող զրկվել քաղաքացիությունից: Հայաստանի Հանրապետության քաղաքացին չի կարող զրկվել քաղաքացիությունը փոխելու իրավունքից:

6. Սույն հոդվածով սահմանված իրավունքների իրականացման կարգը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիության ձեռքբերման այլ հիմքերը, ինչպես նաև դադարեցման հիմքերը սահմանվում են օրենքով: …

ՀՀ Սահմանադրություն, հոդված 47

Հայրենադարձների առաջին քարավանը 1946 թ. հունիսի 23–ին «Տրանսիլվանիա» շոգենավով դուրս եկավ Բեյրութից և մի քանի օր անց ժամանեց Բաթում, որտեղից գնացքներով նրանց տեղափոխեցին Հայաստան: 1946–1948 թթ. աշխարհի 12 երկրներից հայրենադարձվեցին շուրջ 90 հազար հայեր: Դիմավորող բազմությունը ողջունում է Խորհրդային Հայաստանի նոր քաղաքացիներին:

Սահմանադրության վերը նշված պահանջի կատարումն ապահովելու համար 1995 թվականի նոյեմբերին ընդունվեց **«ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքը:**

Քաղաքացին պետության հետ կապված է կայուն կապով: Այդ կապը սկսվում է նրա ծննդյան պահից և ավարտվում մահով:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիները պետության պաշտպանության տակ են նրա տարածքում կամ նրա սահմաններից դուրս:

Պետությունը հարգում և ճանաչում է իր քաղաքացու բոլոր իրավունքները, իսկ քաղաքացին պարտավոր է բարեխղճորեն կատարել պետության հանդեպ իր բոլոր պարտականությունները:

Քաղաքացիներին տրված լայն իրավունքների ու պարտականությունների հետ մեկտեղ չպետք է մոռանալ օտարերկրացիներին, երկքաղաքացիներին, քաղաքացիություն չունեցող անձանց, որոնք նույնպես ունեն իրավունքներ և պարտականություններ այն երկրի տարածքում, որտեղ բնակվում են:

Հարցեր և առաջադրանքներ

1. Քաղաքացիության ձեռքբերման ձևերից որի՞ն եք նախապատվություն տալիս և ինչո՞ւ:

2. Համեմատե՛ք «մարդ» և «քաղաքացի» հասկացությունները:

3. Ի՞նչ եք կարծում, ավելի հեշտ է ստանալ Հայաստանի Հանրապետությա՞ն, թե՞ ԱՄՆ–ի, Ռուսաստանի կամ եվրոպական որևէ երկրի քաղաքացիություն: Ինչո՞ւ:

Գործնական աշխատանք

Օգտվելով «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի ստորև ներկայացված քաղվածքից՝ պատասխանեք աղյուսակի առաջին սյունակում տրված հարցերին՝ նշելով նաև հոդվածը: Աշխատանքը կատարեք տետրում:

Հարց	Պատասխան	Հոդված
Որո՞նք են ՀՀ քաղաքացիությունը հաստատող փաստաթղթերը:		
Ո՞ր դեպքում է երեխան կորցնում ՀՀ քաղաքացիությունը:		
Արդյոք երկրի տարածքից դուրս ապրելը հանգեցնո՞ւմ է քաղաքացիության դադարեցմանը:		
Քաղաքացի՞ է արդյոք համարվում ՀՀ–ում բնակվող (գտնվող) երեխան, որի ծնողներն անհայտ են:		
Ի՞նչ իրավունքներ ունի ՀՀ երկքաղաքացին:		
Ո՞ր դեպքում կարող է անձը դիմել ՀՀ քաղաքացիություն ստանալու համար:		
Որո՞նք են ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու հիմքերը:		
Ինչպե՞ս է որոշվում Հայաստանի Հանրապետության քաղաքացիներից ծնված երեխայի քաղաքացիությունը:		
Ո՞ր դեպքում է ՀՀ քաղաքացիությունը կորցրած ծնողների երեխան կորցնում ՀՀ քաղաքացիությունը:		
Որո՞նք են ՀՀ քաղաքացիության դադարեցման հիմքերը:		
Ո՞ր դեպքում է մերժվում ՀՀ քաղաքացիությունից դուրս գալու մասին քաղաքացու դիմումը:		

«ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔ

Հոդված 4

Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը հաստատող փաստաթղթերը

Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը հաստատող փաստաթղթերն են Հայաստանի Հանրապետության քաղաքացու նույնականացման քարտը և անձնագիրը...

Հոդված 6

Հայաստանի Հանրապետության քաղաքացիության պահպանումը

Հայաստանի Հանրապետությունից դուրս բնակվելը ինքնին չի հանգեցնում Հայաստանի Հանրապետության քաղաքացիության դադարեցմանը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացու ամուսնությունն օտարերկրյա քաղաքացու հետ ինքնին քաղաքացիության փոփոխման չի հանգեցնում:

Ամուսիններից մեկի քաղաքացիության փոխելը ինքնին չի հանգեցնում մյուս ամուսնու քաղաքացիության փոփոխմանը:

Հոդված 9

Հայաստանի Հանրապետության քաղաքացիության ձեռքբերման հիմքերը

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք է բերվում՝

1) քաղաքացիության ճանաչմամբ.
2) ծննդով.
3) քաղաքացիություն ստանալու միջոցով.
4) քաղաքացիությունը վերականգնելու միջոցով.
5) քաղաքացիության խմբային ձեռքբերման միջոցով.
6) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված հիմքերով.
7) սույն օրենքով նախատեսված այլ հիմքերով:

Հոդված 11

Հայաստանի Հանրապետության քաղաքացիներից ծնված երեխայի քաղաքացիությունը

Երեխան, ում ծնողները նրա ծնվելու պահին Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ են, անկախ ծնվելու վայրից, ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն:

Երեխան, ում ծնողներից մեկը նրա ծնվելու պահին Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, իսկ մյուսն անհայտ է կամ քաղաքացիություն չունեցող անձ, ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն:

Այն դեպքում, երբ ծնողներից մեկը երեխայի ծնվելու պահին Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, իսկ մյուսըՄօտարերկրյա քաղաքացի, երեխան, անկախ այլ պետության քաղաքացիություն ունենալու հանգամանքից, իրավունք ունի ձեռք բերելու Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունՄ ծնողների գրավոր համաձայնությամբ:

Համաձայնության բացակայության դեպքում երեխան ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն՝

1) եթե նա ծնվել է Հայաստանի Հանրապետությունում կամ,
2) եթե Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք չբերելու դեպքում դառնում է քաղաքացիություն չունեցող անձ, կամ
3) եթե բնակվում է Հայաստանի Հանրապետությունում, և առկա է ծնողներից մեկի համաձայնությունը:

Հոդված 13

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալը

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող 18 տարին լրացած, գործունակ, ... օտարերկրյա պետությունում բնակվող (գտնվող) կամ Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքով բնակվող (գտնվող) յուրաքանչյուր անձ իրավունք ունի դիմելու Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար, եթեՄ

1) օրենքով սահմանված կարգով վերջին երեք տարին մշտապես բնակվել է Հայաստանի Հանրապետությունում.
2) կարող է բացատրվել հայոց լեզվով և
3) ծանոթ է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

Առանց սույն հոդվածի առաջին մասի 1–ին և 2–րդ կետերով սահմանված պահանջների պահպանմանՄՀայաստանի Հանրապետության քաղաքացիություն կարող է ստանալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող այն անձըՄ

1) որը մինչև Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու դիմումը ներկայացնելու պահը վերջին երկու տարվա ընթացքում ... ամուսնության մեջ է գտնվել Հայաստանի Հանրապետության քաղաքացու հետ և այդ երկու տարվա ընթացքում 365 օր ... բնակվել է Հայաստանի Հանրապետությունում կամ ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացի երեխա.
2) որի ծնողները կամ նրանցից մեկը նախկինում ունեցել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն կամ ծնվել է Հայաստանի Հանրապետությու-

նում, և որը 18 տարին լրանալուց հետոՄ3 տարվա ընթացքում, դիմել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար.

3) (կետն ուժը կորցրել է 08.12.11)

4) որը 1995 թվականի հունվարի 1–ից հետո, իր դիմումի համաձայն, դուրս է եկել Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից:

...

Հոդված 13.1

Երկքաղաքացիություն

Երկքաղաքացի է համարվում այն անձը, որն ունի մեկից ավելի պետությունների քաղաքացիություն:

Հայաստանի Հանրապետության երկքաղաքացի է համարվում այն անձը, որը Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից բացի՝ ունի նաև այլ պետության (երկրների) քաղաքացիություն...

Հայաստանի Հանրապետության երկքաղաքացին ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացու համար նախատեսված բոլոր իրավունքները և կրում է Հայաստանի Հանրապետության քաղաքացու համար նախատեսված բոլոր պարտականություններն ու պատասխանատվությունը՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով կամ օրենքով նախատեսված դեպքերի:

Հոդված 17

Երեխայի քաղաքացիությունը ծնողների կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնելու դեպքում

Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցրած ծնողների երեխան կորցնում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը, եթե նա ձեռք է բերում այլ պետության քաղաքացիություն:

Եթե ծնողներից մեկը կորցրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը, իսկ մյուսը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, ապա նրանց երեխան կորցնում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը, եթե առկա է ծնողների համաձայնությունը, կամ եթե երեխան բնակվում է Հայաստանի Հանրապետությունից դուրս, և առկա է Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող ծնողի համաձայնությունը:

Սույն հոդվածի 1–ին և 2–րդ մասերով նախատեսված դեպքերում 14–18 տարեկան երեխան կորցնում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը իր գրավոր համաձայնության առկայության դեպքում, եթե չունի պետության հանդեպ չկատարված՝ «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված պարտավորություններ:

Հոդված 20

Երեխայի քաղաքացիությունը, որի ծնողները հայտնի չեն

Հայաստանի Հանրապետությունում գտնվող երեխան, որի ծնողներն անհայտ են, Հայաստանի Հանրապետության քաղաքացի է: Ծնողներից մեկի կամ խնամակալի գտնվելու դեպքում երեխայի քաղաքացիությունը կարող է փոխվել սույն օրենքին համապատասխան:

Հոդված 23

Հայաստանի Հանրապետության քաղաքացիության դադարեցումը

Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցվում է՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելու դեպքում.
2) կեղծ փաստաթղթերի կամ կեղծ տվյալների հիման վրա քաղաքացիություն ձեռք բերելու դեպքում.
3) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված հիմքերով:

Հոդված 24

Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելը

Հայաստանի Հանրապետության 18 տարին լրացած յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի փոխելու քաղաքացիությունը՝ դուրս գալու Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից և ձեռք բերելու այլ պետության քաղաքացիություն...

Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից դուրս գալու մասին քաղաքացու դիմումը մերժվում է, եթե՝

1) նրա նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում.
2) նրա նկատմամբ կա դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած և կատարման ենթակա դատավճիռ կամ վճիռ.
3) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից նրա դուրս գալը հակասում է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության շահերին.
4) նա ունի պետության հանդեպ չկատարված պարտավորություններ:

Դաս 12

ԱԿՏԻՎ ՔԱՂԱՔԱՑԻ

«ԱԿՏԻՎ ՔԱՂԱՔԱՑԻ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

«Ակտիվ քաղաքացի» հասկացությունն առնչվում է անհատի ներգրավվածությանը հասարակության քաղաքական կյանքին: Ակտիվ քաղաքացիությունը ժողովրդավարական հասարակության կառուցման կարևոր հիմքերից է:

Ակտիվ քաղաքացիությունը կարելի է դիտարկել միջազգային, ազգային և տեղական (համայնքային) մակարդակներով: Դիտարկենք համայնքային մակարդակը:

Ակտիվ քաղաքացին գործողություններ է նախաձեռնում իր համայնքը բարելավելու, այնտեղ դրական փոփոխություններ կատարելու նպատակով: Նա զարգացնում է իր գիտելիքները, կարողություններն ու հմտությունները՝ համայնքում կյանքի որակի բարելավմանն ուղղված որոշումներ կայացնելու համար:

Դիտարկենք ակտիվ քաղաքացիությունը դպրոցում: Որպես սովորող և քաղաքացի՝ դուք ունեք որոշակի իրավունքներ և պարտականություններ: Դպրոցական կյանքը նույնպես շատ հնարավորություններ է տալիս ակտիվ քաղաքացի դառնալու համար: Դրանցից են աշակերտական խորհրդում հանդես գալը, դասարանի ավագ լինելը կամ դպրոցում միջոցառում կազմակերպելը, համայնքային հիմնախնդիրների ուսումնասիրմանը կամ հանրօգուտ աշխատանքներին մասնակցելը: Դուք կարող եք ստեղծել համախոհների խումբ, և խմբով դրական փոփոխություններ բերել ձեր դպրոցում կամ համայնքում՝ համայնքի կարիքների գնահատման և դրան համապատասխան գործողությունների մշակման ու իրականացման միջոցով:

ԱԿՏԻՎ ՔԱՂԱՔԱՑՈՒՆ ԲՆՈՐՈՇՈՂ ՀԱՏԿԱՆԻՇԵՐ

Քաղաքացիական ակտիվության մակարդակներ և հատկանիշներ

Ակտիվ քաղաքացին կարող է ներգրավվել *հասարակական կառույցներում, շահագրգիռ խմբերում,* ինչպես նաև *հասարակական–քաղաքական կազմակերպությունում:* Միջազգային մակարդակում ակտիվ քաղաքացին ներգրավված է մարդու իրավունքների պաշտպանությանը, կայուն զարգացման ու արդար առևտրի տարածմանը, ինչպես նաև խաղաղության համար, ահաբեկչության, թրաֆիքինգի, ստրկության, թմրամոլության, խտրականության, աղքատության և այլ համընդհանուր աղետների ու ճգնաժամերի դեմ պայքարին:

Հանրահավաք Ազատության հրապարակում

Ակտիվ քաղաքացին և *լավ քաղաքացին* տարբեր հասկացություններ են:

Լավ քաղաքացին հետևում է օրենքներին և դրսևորում որոշակի դրական վարքագիծ հասարակության մեջ: Հաճախ այդպիսի քաղաքացուն բնորոշում են որպես *«պասիվ» քաղաքացի,* քանի որ նա իրականացնում է իր իրավունքները և պարտականությունները, սակայն անհատապես ներգրավված չէ հանրային կյանքի կառուցմանն ու զարգացմանը:

Ակտիվ քաղաքացին, ի տարբերություն լավ քաղաքացու, *«մարտահրավերներ» է նետում* գործող քաղաքականությանն ու կարգերին և ձգտում ժողովրդավարական եղանակներով ու հասարակական փոփոխությունների միջոցով բարելավելու հանրային կյանքը: Այդ եղանակները բացառում են բռնի ուժի կիրառումը կամ հակաօրինական այլ գործողություններ:

Ակտիվ քաղաքացին առաջնորդվում է *ժողովրդավարության արժեքներով ու սկզբունքներով* և ձգտում է ապրելու դրանցով: Վերջիններս իրենց մեջ ներառում են արդարությունը, օրենքի գերակայությունը, հանդուրժողականության սկզբունքներով առաջնորդվելը, սեփական տեսակետը պաշտպանելու խիզախություն ունենալը, ուրիշների կարծիքները լսելը, այլ մարդկանց հետ համագործակցության սկզբունքներով աշխատելը և այլն:

Ակտիվ քաղաքացի դառնալու համար անձը ձեռք է բերում գիտելիքներ իր ազգի, երկրի *պատմության, մշակույթի և ավանդույթների* մասին: Նա հետաքրքրված է նաև տարածաշրջանում և աշխարհում տեղի ունեցող գործընթացներով և ուսումնասիրում դրանք: Ակտիվ քաղաքացին *հայրենասեր է,* հոգ է տանում իր ընտանիքի և համայնքի բարեկեցության համար, կրում է պատասխանատվություն: Նա անընդհատ փորձում է բարելավել իր անձնական և հանրային կյանքը՝ քաղաքացիական գիտելիքների, կարողությունների ու հմտությունների զարգացման, փոխադարձ հարգանքի, իմաստալից ներգրավման և նվիրվածության միջոցով:

Ակտիվ քաղաքացիությունը մարդու *քաղաքացիական գրագիտության ցուցիչն է:* Ուստի քաղաքացին ձգտում է տիրապետելու իր երկրի օրենսդրության և իրավական համակարգի վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքներին և դրանք առօրյա կյանքում կիրառելու արդյունավետ եղանակներին:

Նա *կամավոր հիմունքներով ներգրավված է* համայնքային կյանքում կամ օժանդակում է իշխանության մարմինների արդյունավետ գործունեությանը: Այդ նպատակով ակտիվ քաղաքացին տարբեր աղբյուրներից համայնքային հիմնախնդիրների վերաբերյալ տեղեկություններ է հավաքում, վերլուծում, համադրում և արժևորում՝ հիմնավոր կարծիք կազմելու և ճիշտ որոշում կայացնելու նպատակով:

Այդ եղանակով նա ձգտում է հասկանալու, թե իր կյանքին առնչվող հիմնախնդիրների ուղղությամբ իշխանության մարմիններն ինչպիսի հանրային քաղաքականություն են վարում, և փորձում է որևէ կերպ ազդել այդ քաղաքականության մշակմանն ու իրականացմանը: Նա գիտակցում է հանրային քաղաքականությանն առնչվող *որոշումների կայացման գործընթացում* իր մասնակցության կարևորությունը:

Անարդարության և անհավասարության դեմ պայքարը ակտիվ քաղաքացու առանցքային հատկանիշերից է: Ուստի շատ կարևոր է ընկալել, թե ինչպես են մեր գործողություններն ազդում մեր շրջապատի մարդկանց կյանքի վրա, և ինչպես կարող ենք փոխել այն: Ուրիշներին, նրանց մտածելակերպը հասկանալու կարողությունը հնարավորություն է տալիս ավելի զգայուն լինելու նրանց հանդեպ և խուսափելու կարծրատիպերից: Ավելին՝ մենք պետք է կարողանանք զարգացնել հաշմանդամություն ունեցող, ինչպես նաև որոշակի հատկանիշերով մեզնից տարբերվող մարդկանց՝ հասարակության, համայնքի մեջ ներառելու փորձառությունը:

Ակտիվ քաղաքացին *կամավոր* ներդրում է ունենում համայնքի զարգացմանը՝ որոշ մարդիկ ժամանակ են տրամադրում բարեգործության համար, մյուսները սնունդ և հագուստ են տրամադրում անտուններին, երրորդները խնամում են ծերերին և հաշմանդամներին: Նրանք բոլորը տրամադրում են իրենց ժամանակը և եռանդը ուրիշներին աջակցելու նպատակով՝ առանց վարձատրության ակնկալիքի: Այդ ամենի արդյունքում, սակայն, մենք ձեռք ենք բերում նոր՝ արժեքավոր փորձ, հանդիպում ենք հետաքրքիր մարդկանց, սովորում ենք նոր հմտություններ և ավելի սերտորեն կապվում մեր համայնքի հետ:

Վերջապես՝ ակտիվ քաղաքացիությունը տեղի է ունենում *օրինակ ծառայելու* միջոցով: Դրանք այն մարդիկ են, ովքեր դրական վարքագիծ ունեն, ոգեշնչում են մյուսներին և նրանց մղում հանրային բարիքի ավելացմանը: Նշանակում է, որ ակտիվ քաղաքացին ոչ թե պաշտոն է, այլ պարտականություն՝ ինչպես գործել և ինչ անել:

Քննարկում

- *Ընթերցե՛ք ակտիվ քաղաքացուն բնորոշող հատկանիշները և քննարկե՛ք խմբով:*
- *Ներկայացրե՛ք իրավիճակ, որտեղ դուք կարող եք մասնակցություն ունենալ որպես ակտիվ քաղաքացի և որպես պասիվ քաղաքացի: Տվյալ իրավիճակում ինչի՞ վրա կարող եք ազդել ինքներդ, ի՞նչ կարող եք անել՝ ուրիշներին համոզելով, ի՞նչը չեք կարող փոխել:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչպե՞ս են մարդիկ դրական ներդրում ունենում իրենց համայնքի, երկրի կամ աշխարհի զարգացմանը:
2. Ի՞նչ եղանակներով են մարդիկ օժանդակում նրանց, ովքեր դրա կարիքն ունեն:
3. Ի՞նչ եք զգում ուրիշներին աջակցություն ցուցաբերելիս:
4. Երբևէ մտորե՞լ եք, թե ինչպես են ուրիշները վերաբերվում ձեր խնդիրներին:

Դաս 13

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Բոլորն էլ կարող են լինել հրաշալի ... քանի որ ամեն մեկը կարող է ծառայել (հասարակությանը): Պարտադիր չէ, որ դուք համալսարանական կրթություն ունենաք, որպեսզի ծառայեք: Անհրաժեշտ է միայն շնորհով լի սիրտ և սիրով լեցուն հոգի:

Մարտին Լյութեր Քինգ

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ակտիվ քաղաքացու կարևոր հատկանիշերից է *մասնակցությունը*: Իսկ ինչ է այն իրենից ներկայացնում: Քաղաքացիական ներգրավվածություն, մասնակցություն ունենալ նշանակում է դրական փոփոխություններ և բարեկեցություն բերել համայնքի կյանքում: Այն ներառում է նաև այդ փոփոխության համար անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների, արժեքների զարգացում:

Հասարակական, համայնքային կյանքի մասնակցության օրինակներ են՝

- քվեարկությանը, թեկնածուների քարոզարշավին մասնակցելը,
- համայնքային հարցերի քննարկմանը, կազմակերպմանը և զարգացմանը մասնակցելը,
- տեղեկատվության պատրաստելը և տարածելը,
- բնապահպանական հարցերով զբաղվելը,
- մարդասիրությամբ, բարեգործությամբ զբաղվելը,
- հասարակական կազմակերպություններում ներգրավվելը,
- հանրային լսումներին մասնակցելը, կարծիք արտահայտելը,
- կամավորական, հանրօգուտ աշխատանքներին մասնակցելը,
- խաղաղ ցույցերի, երթերի և բողոքի այլ միջոցառումների մասնակցելը,
- հանրային քաղաքականության մշտադիտարկումը,

Բնապահպանական ակցիա Սպեփանավանում

- ցանցային համագործակցության խթանումը,
- կրթության և իրազեկման որակի բարձրացմանը նպաստելը:

Այսպիսով՝ քաղաքացիական մասնակցությունն առնչվում է մարդու անհատական որոշմանը՝ մասնակցել համայնքային կյանքի բարելավմանը, թե՞ լինել պասիվ քաղաքացի: Ներգրավման ժամանակ անձից պահանջվում է քաղաքացիական հմտությունների և կարողությունների զարգացում: Մասնակցության ժամանակ պետք է խորհել այն մասին, թե ինչպես պետք է համագործակցեն իշխանության մարմինները, հասարակությունը և քաղաքացիները՝ նպաստելով համայնքի և երկրի զարգացմանը:

Քննարկում

- *Բաժանվե՛ք խմբերի և քննարկե՛ք, թե վերը ներկայացված ձևերից որոնց եք մասնակցություն ունեցել: Արդյոք կարևո՞ր է նմանատիպ միջոցառումներին մասնակցելը:*
- *Մասնակցության ի՞նչ ձևեր գիտեք, որոնք թվարկված չեն վերոբերյալ ցանկում:*

Մասնակցությունը դպրոցում

Քաղաքացիական մասնակցությունը սկսվում է դպրոցից: Դպրոցում բազմաթիվ հիմնախնդիրներ կան, որոնց մենք առնչվում ենք ուսումնառության ընթացքում: Դրանցից են, օրինակ՝ ձանձրալի դասերը, ոչ որակյալ սննդի մատակարարումը, սովորողի գնահատման արդարացի լինելու խնդիրը: Փորձենք պարզել, թե ինչպես կարող եք մասնակցություն ունենալ այդ հիմնախնդիրների լուծմանը:

Գործնական աշխատանք 1

Տետրում կատարեք համապատասխանեցում՝ յուրաքանչյուր իրավիճակի համար նշելով խնդրի լավագույն լուծումը:

Իրավիճակ	*Խնդիրը հաստեղծող քայլ*
1. Դուք նկատել եք, որ դպրոցում կան աշակերտներ, ովքեր թերի են սնվում, և գիտեք մարդկանց, ովքեր սնունդը փչացնում կամ թափում են: 2. Դպրոցի տարածքում աղբ է կուտակվում: 3. Անվասայլակներով սովորողները հնարավորություն չունեն բարձրանալու դպրոցի բարձր հարկերը: 4. Դպրոցը ֆուտբոլի թիմի պահպանման համար միջոցներ չունի և պետք է լուծարվի: Սակայն դուք շատ եք սիրում ֆուտբոլ խաղալ: 5. Սովորողներն անկարգ վարքագիծ են դրսևորում դասամիջոցներին: 6. Ձեր դպրոցի հանդիպակաց փողոցը բավականին վտանգավոր է արագ երթևեկության պատճառով: Երթևեկության արագությունն այնտեղ պետք է հնարավորինս նվազեցնել:	Ա. Դիմե՛ք ոստիկանություն և քաղաքապետարան՝ անվտանգ երթևեկության նոր կարգ մշակելու համար: Բ. Կազմակերպե՛ք դպրոցական միջոցառում՝ ծրագրում ներառելով սովորողների կողմից արված նկարների և պատրաստած առարկաների վաճառք ու դրամահավաք: Գ. Կազմակերպե՛ք շաբաթօրյակներ: Դ. Կազմակերպե՛ք «Սնունդ կարիքավորներին» շարժումը և օժանդակության համար դիմե՛ք համայնքի ձեռնարկություններին: Ե. Նամա՛կ գրեք վարչապետին՝ դպրոցում վերելակ կառուցելու նպատակով միջոցներ հատկացնելու խնդրանքով: Զ. Առաջարկե՛ք դպրոցի ղեկավարությանը վերանայել սովորողների վարքագծի կանոնները:

Գործնական աշխատանք 2

Գրատախտակին գրե՛ք ձեր դասարանի կողմից բացահայտված դպրոցական հիմնախնդիրները, դրանցից ընտրե՛ք ձեզ համար առավել կարևոր երկուսը: Ապա ձեր տետրում լրացրե՛ք ստորև տրված աղյուսակը՝ ընդգրկելով ձեր նախընտրած հիմնախնդիրները:

Դպրոցում առկա հիմնախնդիրներ	**Հիմնախնդրի լուծման ուղին**

Այժմ ընտրե՛ք երկու հիմնախնդիրներից մեկը, դրա լուծման համար մշակե՛ք գործողությունների քայլաշար և տետրում լրացրե՛ք տրված հարցաթերթիկը:

1. Նշեք հիմնախնդիրը:

_____

Նշեք երկու պատճառ, որոնց համար դուք ընտրեցիք այս հիմնախնդիրը:

1. _____

2. _____

Նշեք, թե ինչպես կլավանա դպրոցի առօրյան, եթե ձեր կողմից ընտրված հիմնախնդիրը լուծվի:

_____

_____

Նշեք հիմնախնդրի առաջացման երկու պատճառ:

Օրինակ, եթե դուք ընտրել եք դպրոցի ճաշարանում ոչ որակյալ սննդի մատակարարումը, ապա այդպիսի պատճառներ կարող են լինել՝ 1. սննդի ոչ պատշաճ վերահսկողությունը, 2. էժան սննդի բարձր պահանջարկը:

1. _____

2. _____

Նշեք այն քայլերը, որոնք կնախաձեռնեք խնդիրը լուծելու համար:

Օրինակ՝ ոչ որակյալ սննդի մատակարարման դեպքում դուք կարող եք առաջարկով դիմել տնօրենին՝ մշակել դպրոց առողջ սնունդ մատակարելու կանոններ՝ սովորողներին ևս ներգրավելով այդ կանոնների մշակման գործընթացին:

_____

_____

Հարցաթերթիկը լրացնելուց հետո այն ներկայացնել համադասարանցիներին՝ օգտվելով ստորև տրված ձևաթղթից: Ձեր ներկայացման ժամանակ փորձեք կատարել հիմնավորումներ:

Այսօր ձեզ ցանկանում եմ ներկայացնել _____

_____ հիմնախնդիրը:

Այս խնդիրն ինձ համար կարևոր է, քանի որ _____

_____:

Այն կարևոր է մյուսների համար, որովհետև_____

_____:

Եթե մենք կարողանանք լուծել այս խնդիրը, կյանքը դպրոցում կլավանա, քանի որ _____:

Խնդրի առաջացման պատճառներն են _____

_____:

Խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է կատարել _____

_____:

Շնորհակալություն _____ համար:

Հուսով եմ, որ դուք կմիանաք _____

_____ խնդիրը լուծելու համար:

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ընթերցեք առաջնորդության հետևյալ երեք սահմանումները և ձևակերպեք մեկ միասնական սահմանում:

- Առաջնորդությունը սոցիալական ազդեցության գործընթաց է, որում անձը նախապես կարողանում է ստանալ մյուսների օգնությունն ու աջակցությունը՝ որոշակի խնդիրների իրագործման հարցում:
- Առաջնորդությունը համոզելու կամ օրինակ ծառայելու գործընթաց է, որի միջոցով առաջնորդն ազդում է խմբի վրա՝ իր կամ խմբի կողմից դրված խնդիրների իրականացման համար:
- Առաջնորդությունը գործընթաց է, որի շնորհիվ խմբի մեկ կամ մի քանի անդամներ խմբին մղում են որոշակի գործողությունների և առաջնորդում նրանց:

Առաջնորդությունը տարբեր մարդկանց կողմից մեկնաբանվում է տարբեր կերպ: Սակայն գոյություն ունեն առաջնորդության կազմակերպման որոշակի քայլեր, որոնք բնութագրում են այն որպես հասարակական գործընթաց, որի ժամանակ տեղի է ունենում հաղորդակցություն, տեղեկությունների հավաքում, հնարավոր տարբերակների վերաբերյալ խորհուրդների ու առաջարկների ստացում ու քննարկում և, վերջապես, որոշման կայացում:

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԵՐԸ

1. **Շփոթմունք**: Լսելով հնարավոր փոփոխության մասին՝ մարդիկ շփոթվում են և, չհավատալով փոփոխությանը, մտածում են, որ ոչինչ չարժե անել:
2. **Նվազագույնի հասցնելը:** Փոփոխության էությունը պարզվելու դեպքում մարդիկ փորձում են մասնակցել դրան և հավատալ, որ այն իրենց չի վնասի:
3. **Ընկճվածություն**: Փոփոխությունների ընթացքը մարդկանց չբավարարելու դեպքում նրանք դառնում են ավելի անվստահ, բայց ջանում են հարմարվել իրավիճակին:
4. **Հավանություն**: Մարդիկ հավանություն են տալիս փոփոխություններին, բայց դեռևս վախ են զգում իրենց ապագայի հանդեպ:
5. **Փորձարկում**: Սկսվում է մարդկանց շփումը փոփոխության հետ, որի ընթացքում նրանք առաջ են քաշում հարցեր՝ տեսնելու, թե ինչպես կարող են աշխատել նոր միջավայրում:
6. **Իմաստի ընկալում**: Մարդիկ աշխատում են փոփոխված պայմաններում՝ փորձելով հասկանալ դրա ազդեցությունն իրենց վրա:
7. **Յուրացում**: Փոփոխությունն ընկալվում և յուրացվում է, իսկ անհատի ինքնավստահությունը՝ վերականգնվում:

Առաջնորդության փոփոխության վերը թվարկված փուլերը ներկայացնենք գծապատկերի տեսքով.



Փոփոխությունները հասարակության ներսում չեն կարող տեղի ունենալ ինքնին: Դրանք ունենում են առաջնորդներ և մասնակիցներ, նախաձեռնողներ և իրականացնողներ: Դրա համար մարդիկ պետք է միանան խմբերին, կազմակերպություններին ու գոյություն ունեցող ցանցերին կամ էլ ստեղծեն նորերը՝ հաշվի առնելով հասարակական փոփոխությունների վերոնշյալ փուլերը:

Գործնական աշխատանք 3

Բաժանվե՛ք խմբերի, յուրաքանչյուր խմբի համար ընտրե՛ք հասարակական փոփոխության որևէ օրինակ (ջրի, լույսի, հեռախոսի վարձի նոր սակագներ, ընդունելության քննությունների նոր կարգ, աշակերտի առաջադիմության գնահատման նոր համակարգ և այլն): Խմբերում քննարկե՛ք և վերլուծե՛ք առաջնորդության փոփոխությունների յոթ փուլերը հասարակության կամ համայնքի ներսում: Այնուհետև խմբերի ներկայացուցիչների միջոցով քննարկումների արդյունքների մասին զեկուցե՛ք համադասարանցիներին:

Հարցեր և առաջադրանքներ

1. Մասնակցությունն իրավո՞ւնք է, թե՞ պարտականություն:
2. Ինչպե՞ս եք գնահատում ձեր և ձեր համադասարանցիների մասնակցությունը դպրոցի և համայնքի խնդիրներին:
3. Որո՞նք են առաջնորդության փոփոխության փուլերը:
4. Ո՞րն է անհատի և հասարակության դերը փոփոխության ժամանակ:
5. Ինչպիսի՞ առնչություն ունեն մասնակցությունն ու առաջնորդությունը:

ԳԼՈՒԽ 4

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Դաս 14–15

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ: ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Քաղաքացիական հասարակության ձևավորումը կապված է եղել օրենքի և իրավունքի գերակայության, իրավական պետության հաստատման հետ:

Քաղաքացիական հասարակություն հասկացությունը, քաղաքացիական հասարակության մասին հայեցակարգի մշակումը առաջին հերթին կապվում է նոր ժամանակների գերմանացի մտածողներ Ի. Կանտի և Գ. Հեգելի հետ: Քաղաքացիական հասարակության ժամանակակից ըմբռնումը թույլ է տալիս առանձնացնել այդ հասկացությանը բնորոշ մի շարք հատկանիշեր: Համառոտ անդրադառնանք դրանցից մի քանիսին:

Քաղաքացիական հասարակությունը ***ազատ անհատների*** միավորում է: ***Ազատությունն*** այս դեպքում առնվազն երկու հիմնական ուղղություն է ենթադրում՝ տնտեսական և քաղաքական:

Տնտեսական առումով դա նշանակում է, որ յուրաքանչյուր անհատ կարող է սեփականատեր լինել: *Սեփականություն ունենալը* կամ *սեփականություն ունենալու իրավունքը, հնարավորությունը* քաղաքացիական հասարակության մեջ մարդու ազատության հիմնական երաշխիքներից մեկն է:

Քաղաքական առումով դա նշանակում է, որ երկրի քաղաքացիները կարող են անդամակցել քաղաքական կուսակցությունների և միավորումների, մասնակցել պետական իշխանության և տեղական մարմինների ընտրություններին: Քաղաքացիների ազատության ապահովման կարևոր նախապայման է նաև դատական ու վարչական գործառույթների օրենսդրական կարգավորումը:

Քաղաքացիական հասարակությունը *բաց* հասարակություն է: Դա նշանակում է, որ այն խորհրդային հասարակության նման «երկաթե վարագույրով» առանձնացված չէ մյուսներից, հակվածություն է դրսևորում դեպի համընդհանուր, համամարդկային արժեքներն ու իդեալները:



Չինական մեծ պարիսպը երկար ժամանակ երկիրն արտաքին աշխարհից մեկուսացնող կառույց էր:

Քաղաքացիական հասարակությունը *բազմակարծության* համակարգ է: Բազմակարծությունը ենթադրում է հանրային ձևերի ու ինստիտուտների (կառույցների, հաստատությունների, միավորումների, կազմակերպությունների) բազմազանություն: Այդ պայմանի առկայության դեպքում ցանկացած անհատ, քաղաքացիական հասարակության յուրաքանչյուր անդամ կարող է այս կամ այն կերպ մասնակից դառնալ արհեստակցական միությունների, մասնագիտական ընկերակցությունների (ասոցիացիաների), կանանց կազմակերպությունների, բարեգործական միությունների, քաղաքացիական և բնապահպանական շարժումների, հավատքի (դավանանքի) վրա հիմնված կազմակերպությունների, կամավորական խմբերի և այլն:

Կարևոր է, սակայն, ոչ միայն և ոչ այնքան այդ կազմակերպությունների գոյությունը, որքան այն, որ մարդը, քաղաքացին, ցանկացած անհատ անդամակցի կամ կամավոր որևէ կերպ մասնակից դառնա դրանց աշխատանքին: Պետական իշխանության մարմինները, ցանկացած անհատ, քաղաքական կամ կրոնական որևէ կազմակերպություն, տեղական կամ միջազգային որևէ կառույց չպետք է մարդուն ուղղորդի, առավել ևս՝ արգելի մասնակցելու այս կամ այն կազմակերպության աշխատանքին:

Քաղաքացիական հասարակությունը, այսպիսով, կամավոր քաղաքացիական ու հասարակական կազմակերպությունների և կառույցների միասնություն է, որը ձևավորում է տվյալ հանրության գործունեության հիմքը: Այն վերաբերում է կամավոր խմբային գործառույթների ոլորտին՝ համատեղ հետաքրքրությունների, նպատակների և արժեքների շուրջ:

Եվ վերջապես՝ քաղաքացիական հասարակությունը *իրավական ժողովրդավարական* հասարակություն է, որտեղ մշտապես հարգվում են մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները: Կարելի է նույնիսկ ասել, որ իրավական պետությունը քաղաքացիական հասարակության զարգացման արդյունք է:

ԵԱՀԿ երևանյան գրասենյակը և «Իրավունքի Եվրոպա միավորում» հասարակական կազմակերպությունը համատեղ միջոցառում են իրականացնում՝ ուղղված իրավունքի պաշտպանությանը:

Տեղեկատու նյութ

Հասարակական կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող (ոչ առևտրային) կազմակերպության՝ հասարակական միավորման տեսակ է, որում իրենց շահերի ընդհանրության հիման վրա, օրենքով սահմանված կարգով, միավորվել են ֆիզիկական անձինք՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք՝ իրենց ոչ կրոնական, հոգևոր կամ ոչ նյութական այլ պահանջմունքները բավարարելու, իրենց և այլոց իրավունքներն ու շահերը պաշտպանելու, հասարակությանը, նրա առանձին խմբերին նյութական և ոչ նյութական աջակցություն ապահովելու, հանրօգուտ այլ գործունեություն իրականացնելու նպատակներով:



Մարդու՝ միավորումներ կազմելու իրավունքը ներառում է այլոց հետ ազատորեն միավորում ստեղծելու, նրան անդամագրվելու (մասնակցելու), նրա գործունեությանը մասնակցելու և անդամությունից (մասնակցությունից) անարգել դուրս գալու իրավունքը՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից և քաղաքացիությունից: Այս իրավունքն օրենքով սահմանված դեպքերում և կարգով կարող է սահմանափակվել զինված ուժերում և իրավապահ մարմիններում ծառայողների նկատմամբ:

ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Հոդված 21
Երեխայի իրավունքների մասին

Յուրաքանչյուր երեխա ունի քաղաքացիների միավորումներին, այդ թվումՀասարակական, մանկապատանեկան կազմակերպություններին անդամակցելու, խաղաղ հավաքներին մասնակցելու իրավունք:

Գործնական աշխատանք

Ստեղծե՛ք հասարակական կազմակերպության նախաձեռնող խումբ և, ստորև տրված օրինակն օգտագործելով, առաջարկե՛ք ապագա ՀԿ-ի՝

- **անունը,**
- **ուղղվածությունը (գործունեության բնագավառը),**
- **գործունեության աշխարհագրական սահմանները,**
- **նպատակը և խնդիրները:**

Աշխատանքը կատարելիս կարող եք օգտվել լրացուցիչ, այդ թվում՝ էլեկտրոնային աղբյուրներից:

«Հայաստանի սպառողների ազգային ասոցիացիա» ՀԿ

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Սպառողների ազգային ասոցիացիան, առաջնորդվելով «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով և ասոցիացիայի կանոնադրությամբ, առաքելություն ունի՝

- պաշտպանելու սպառողների իրավունքները տնտեսության բոլոր ոլորտներում,
- ներկայացնելու սպառողների շահերը պետական կառույցներում,
- մշտապես վերլուծության ենթարկելու երկրում գործող օրենսդրության և սպառողի շահերին վերաբերող օրենքները, օրենսդրական ակտերն ու որոշումները և մշակելու ու համապատասխան առաջարկներ ներկայացնելու դրանց կատարելագործման ուղղությամբ,
- իրականացնելու ապրանքների և ծառայությունների անկախ փորձաքննություն,
- անկախ փորձաքննություն իրականացնելու գործող գների, տարիֆների ու ստանդարտների համապատասխանության վերաբերյալ,

- իշխանություններին առաջարկներ ներկայացնելու անորակ ապրանքներն ու ծառայությունները շրջանառությունից դուրս բերելուն ուղղված միջոցներ իրականացնելու ուղղությամբ,
- աջակցելու հայրենական արտադրողներին և որակյալ ծառայություն մատուցողներին,
- բարձրացնելու սպառողների գիտակցությունը, կրթելու նրանց սպառողական գիտելիքներով՝ այդպիսով հնարավորություն ընձեռելով ճիշտ կողմնորոշվելու և պաշտպանելու սեփական շահերն ապրանքների և ծառայությունների շուկայում,
- պայքարելու հանուն ազգաբնակչության առողջության պահպանման և ապագա առողջ սերնդի ձևավորման,
- ՁԼՄ–ների օգնությամբ սպառողներին պարբերաբար ապահովելու համապատասխան տեղեկատվությամբ:

ՆՊԱՏԱԿԸ

- Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի լինի օրենսդրորեն պաշտպանված և տեղյակ սեփական իրավունքներին:
- Սպառողական ինստիտուտի վերջնական կայացումը՝ հօգուտ Հայաստանի Հանրապետության բնակչության առողջության պահպանման, ապագա առողջ սերնդի ձևավորման:

Հարցեր և առաջադրանքներ

1. Բնութագրե՛ք «քաղաքացիական հասարակություն» հասկացությունը:

2. Ի՞նչ նախապայմաններ են անհրաժեշտ քաղաքացիական հասարակության ձևավորման համար:

3. Ձեր կարծիքով մեր երկրում առկա՞ են քաղաքացիական հասարակության ձևավորման համար անհրաժեշտ նախապայմանները: Եթե ոչ, ապա հանրային կյանքի ո՞ր բնագավառներում են առավել նկատելի բացթողումներն ու թերությունները:

Դաս 16

ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Հանրությունը տեղեկություններ կարող է ստանալ զանգվածային լրատվության միջոցներից, օրինակ՝ հեռուստատեսությունից, ռադիոյից, թերթերից, ամսագրերից և այլն, սակայն այսօր լրատվության ամենատարածված միջոցը համացանցն է:

Ընթերցանության նյութ

Նելսոն Մանդելա

Հարավաֆրիկյան Հանրապետության նախագահ Նելսոն Մանդելան ինքնակենսագրականում պատմում է Արկտիկական գոտու հյուսիսային Գուս Բեյ բնակավայրում իր կանգառի մասին, երբ նրան մոտեցել են մի խումբ երիտասարդ ինուիթներ. «Այս պայծառ երիտասարդների հետ զրուցելով՝ ես իմացա, որ նրանք հեռուստատեսությամբ դիտել են իմ ազատ արձակումը և ծանոթ են Հարավային Աֆրիկայի իրադարձություններին: «Կեցցե՛ Աֆրիկայի ազգային կոնգրեսը»,— ասաց նրանցից մեկը: Ինուիթները բնիկ ժողովուրդ են՝ պատմականորեն ենթարկված եկվոր սպիտակամորթների դաժան վերաբերմունքին: Զուգահեռներ կային Հարավային Աֆրիկայի սևամորթ բնակչության և ինուիթների միջև: Ինձ հատկապես ցնցեց այն, թե որքան էր փոքրացել երկրագունդն իմ բանտարկության տասնամյակների ընթացքում: Ապշեցրեց, որ աշխարհի տանիքում ապրող մի երիտասարդ կարող է տեսնել Աֆրիկայի ծայր հարավում մի քաղբանտարկյալի ազատ արձակումը: Հեռուստատեսությունը սեղմել է աշխարհը և այդ ընթացքում դարձել անտեղյակությունն արմատախիլ անող ու ժողովրդավարությունը խթանող հզոր զենք»:

Քննարկում ► *Ի՞նչ եք կարծում, ի՞նչ էր ուզում ասել Մանդելան «երկրագունդը փոքրացել է» արտահայտությամբ:*



Ժամանակակից հասարակությունում լրատվամիջոցներն այնքան մեծ կարևորություն են ստացել, որ երբեմն կոչվում են *«չորրորդ իշխանություն»:* Ոմանք համացանցային բլոգներն անվանում են «հինգերորդ իշխանություն», քանի որ խնդիրները բարձրաձայնելով՝ նրանք ավելի ու ավելի են մրցակցում ավանդական լրատվամիջոցների հետ: Թեև լրատվամիջոցների այս ուժգնացող ազդեցությունը կարող է նպաստել տեղեկատվության մատչելիությանը, սակայն դրան հատուկ են նաև որոշ վտանգներ: Վիրտուալ աշխարհը բոլորիս առջև բացում է այլ հնարավորություններ, սակայն նաև ծուղակներ: Այսօր լրատվամիջոցները, մասնավորապես՝ հեռուստատեսությունը, ունեն բացասական կողմեր: Այդ իրավիճակը լուրջ մտահոգության առարկա է դարձել ծնողների, մանկավարժների, հանրության այլ շերտերի ներկայացուցիչների համար:

Օրինակ՝ որոշ երկրներում մանկական ծրագրերի ընթացքում արգելվում է գովազդը: Սահմանվել է անգամ «պարետային ժամ», որից առաջ չեն կարող բռնության և անառակաբարո պատկերներ ցուցադրվել: Կան երկրներ, որտեղ հեռուստադիտողը կարող է գնել «ֆիլտրեր», որոնք հնարավորություն են տալիս կանխելու երեխաների կողմից որոշակի ծրագրերի դիտումը:

Վերջին տասնամյակներում լրատվական կրթությունը ձեռք է բերել երեք հիմնական ուղղություն՝

1. *«պատվաստման»*, որի նպատակն է մեծացնել երեխաների դիմադրողականությունը լրատվամիջոցների ազդեցության նկատմամբ,
2. *քննադատական*, որի նպատակն է զարգացնել քննադատական դիրքորոշում լրատվության բացասական բովանդակության նկատմամբ,
3. *վերծանման*, որը փորձում է օգնել հասկանալու լուրերի արտադրության տնտեսական և սոցիալական համատեքստը, այսինքն՝ սպառողից դառնալ մասնակցող քաղաքացի:

Տեղեկություն ստանալու իրավունքը մարդու հիմնարար իրավունքներից է: Այն ամրագրված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 19–րդ հոդվածում, որը սահմանում է.

«Յուրաքանչյուր ոք ունի համոզմունքների ազատության և դրանք անկաշկանդ արտահայտելու իրավունք, այդ իրավունքը ներառում է իր համոզմունքներին հավատարիմ մնալու ազատությունը և ցանկացած միջոցներով ու անկախ պետական սահմաններից տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը»:

Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 4–րդ հոդվածի՝ տեղեկատվության ազատության հիմնական սկզբունքը հրապարակայնության և տեղեկատվության տրամադրման մատչելիության ապահովումն է:

Հիշե՛ք

Պաշտոնական փաստաթղթերը հասարակական բնույթ ունեն և պետք է մատչելի լինեն հանրությանը, եթե միայն չկա առավել կարևոր հանրային կամ պետական շահ՝ տեղեկությունը չհրապարակելու համար: Անգամ եթե դուք դիմեք գաղտնիք համարվող տեղեկություններ ստանալու համար, իշխանությունները պետք է նժարի վրա դնեն մի կողմից՝ հասարակության հետաքրքրությունը, տեղեկացված լինելու իրավունքը, մյուս կողմից՝ գաղտնիքը պահպանելու անհրաժեշտությունը:

Տեղեկատու նյութ

Լրատվական կրթության վերաբերյալ Եվրոպայի խորհուրդը կազմել է հետևյալ առաջարկները.

Գիտակցելով տեղեկատվական և հաղորդակցման միջավայրի բովանդակության և վարքագծի վտանգը, որը կարող է, անօրինական չլինելով, վնասակար ազդեցություն ունենալ երեխաների ֆիզիկական, զգայական և հոգեբանական վիճակի վրա, մասնավորապես՝ առցանց անառակագրության, բռնության և ինքնավնասման ցուցադրումներն ու գովաբանումը, նվաստացուցիչ խտրությունը կամ ռասիստական արտահայտությունները, այդպիսի վարքագծի արդարացումները, ինչպես նաև սեռական ոտնձգությունների այլ ձևեր ... Եվրոպայի խորհուրդն առաջարկում է, որ անդամ երկրները մշակեն ... տեղե-

կատվական գրագիտության և վերապատրաստումների համապարփակ ռազմավարություն, որը կնպաստի, որ երեխաներն ու իրենց մանկավարժները ստանան տեղեկատվական և հաղորդակցային ծառայություններից և տեխնոլոգիաներից լավագույնս օգտվելու հնարավորություն...

Հարցեր և առաջադրանքներ

1. Լրատվության ի՞նչ միջոցներից եք ավելի շատ օգտվում (հեռուստատեսություն, ռադիո, թերթեր, ամսագրեր, համացանց, այլ աղբյուրներ)։ Ինչո՞ւ։ Ինչո՞վ է լրատվության այդ տեսակը նախընտրելի։

2. Փորձե՛ք պարզաբանել, թե որոնք են համացանցային լրատվության դրական և բացասական կողմերը։ Հիմնավորե՛ք ձեր տեսակետը մեկ–երկու օրինակով։

3. Ինչո՞վ եք բացատրում զանգվածային լրատվության միջոցներին «չորրորդ իշխանություն» անվանելը։ Վերհիշե՛ք, թե որոնք են իշխանության երեք ճյուղերը։ Ինչո՞վ է տարբերվում լրատվամիջոցների «իշխանություն լինելը» իշխանության մյուս ճյուղերից։

4. Ի՞նչ եք կարծում, հնարավո՞ր է արդյոք ժողովրդավարական հասարակության բնականոն գոյությունն առանց լրատվամիջոցների։ Ինչո՞ւ։ Հիմնավորե՛ք ձեր տեսակետը։

ԳԼՈՒԽ 4. ԱՄՓՈՓԻՉ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՀԽԱՏԱՆՔ

Մեկ շաբաթվա ընթացքում ուսումնասիրե՛ք զանգվածային լրատվության միջոցների կողմից հանրությանը տրամադրված տեղեկությունները և վերլուծե՛ք դրանց բովանդակությունը հետևյալ առումներով.

- քաղաքական իրադարձություններ,
- հասարակական կյանքի հիմնախնդիրներ,
- հայտնի մարդկանց (քաղաքական գործիչներ, գործարարներ, շոու–բիզնեսի ներկայացուցիչներ և այլն) անձնական կյանքի մանրամասներ:

Տետրում լրացրե՛ք հետևյալ աղյուսակը:

Տեղեկատվական աղբյուրը	**Թեման**			**Ամիս–ամսաթիվը**
	քաղաքական իրադարձություններ	հասարակական կյանք	հայտնի մարդկանց անձնական կյանք	

ԳԼՈՒԽ 5

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉԸ

Դաս 17–18

ՀՈՒԿԱՅԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԱԶԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀԵՆԱՍՅՈՒՆ

Եթե շահույթը ձգվելով քամվում է բանվորներից ու գնորդներից, դա վկայում է գործի վատ վարման մասին: Շահույթը պետք է ստացվի ավելի բարձրարվեստ կառավարումից: Զգուշացե՛ք ապրանք վատնելուց, զգուշացե՛ք աշխատավարձ իջեցնելուց և հասարակությանը պլոկելուց: Ավելի շատ ուղե՛ղ ներդրեք ձեր աշխատանքի մեջ:

Հենրի Ֆորդ

Նախորդ գլխից մենք գիտենք, որ քաղաքացիական հասարակությունն ***ազատ անհատների*** միավորում է: Ժողովրդավարական երկրում մարդու ազատությունն ունի նաև տնտեսական իմաստ, այսինքն՝ մարդն ազատ է տնտեսական կացութաձև ընտրելու, սեփականություն ունենալու, ինչ–որ բան արտադրելու և շուկայում իրացնելու հարցերում:

Ազատ, ինքնակառավարվող քաղաքացիական հասարակության տնտեսական համակարգը շուկայական տնտեսությունն է:

ՀՀ Սահմանադրությունը սահմանում և երաշխավորում է շուկայական տնտեսական համակարգի հիմունքները, որոնք կարևոր նախադրյալ են ազատ քաղաքացիական հասարակության կայուն գոյության համար, ինչպես նաև մարդու ազատության տնտեսական հիմքն են:

Ազատ շուկայական տնտեսական համակարգի սահմանադրական հիմունքներն են.

Տնտեսական բազմակացութաձևությունը (սեփականության ձևերի բազմազանությունը) ▷ *Մեր երկրում ճանաչվում և պաշտպանվում են սեփականության բոլոր հնարավոր ձևերը, դրանց ազատ զարգացումը և հավասար իրավական պաշտպանությունը:*

Տնտեսական գործունեության ազատությունը ▷ *Անձն ունի ձեռնարկատիրական գործունեության իրավունք:*

Ազատ տնտեսական մրցակցությունը ▷ *Ազատ գնային համակարգ և մրցակցություն՝ տնտեսավարող սուբյեկտների (արտադրողների, ծառայություններ մատուցողների) միջև:*

Տնտեսություն

Շուկայական տնտեսությունը բնութագրվում է արտադրողների տնտեսական ազատությամբ և աշխատանքի բաժանմամբ պայմանավորված տնտեսական առանձնացվածությամբ, ունեցվածքի նկատմամբ սեփականության տարբեր ձևերի առկայությամբ, բարիքների կայուն փոխանակությամբ:

Քննարկում ► *Մեկնաբանե՛ք ստորև տրված ասույթները:*



Սեփականության կտրուկ անհավասարությունը պետության հավասարակշռության համար վտանգավոր է:

Արիստոտել

Այն, ինչ շահավետ է հացթուխին, վնասաբեր է գնորդին:

Մ. Մոնտեն

Ջուրն ավելի մեծ օգտակարություն ունի ադամանդի համեմատությամբ, բայց ինչո՞ւ է ջրի գինն ավելի ցածր ադամանդի գնից:

Ա. Սմիթ

Գործարարությունը պատերազմ է:

Թ. Թյորներ

Գործարար ձեռնարկություններն ու կազմակերպությունները մարդկանց հնարավորություն են ընձեռում բավարարելու իրենց պահանջմունքն էլեկտրաէներգիայի, ջրի, կապի և այլ ծառայությունների նկատմամբ: Խանութները հագեցվում են հագուստով, կենցաղային սարքավորումներով և շատ այլ անհրաժեշտ ապրանքներով: Յուրաքանչյուր մարդ այդ բազմազան բարիքներից ընտրություն է կատարում իր հնարավորություններին և ճաշակին համապատասխան: Հասարակությունն է թելադրում, թե **ինչ** ապրանքներ պետք է արտադրվեն, **ինչպես** պետք է դրանք արտադրվեն, **ովքեր** պետք է սպառեն այդ ապրանքները և օգտվեն այդ ծառայություններից:

Գործնական աշխատանք 1

Ուսումնասիրելով ՀՀ-ում տեղաբաշխված ձեռնարկությունները՝ փորձեք դրանցից մեկի օրինակով գտնել հետևյալ հարցերի պատասխանները.

- Ի՞նչ ապրանքներ և ծառայություններ են այդ ձեռնարկություններն արտադրում:
- Ինչո՞ւ են դրանց սեփականատերերն ընտրում այդ վայրերը:
- Որո՞նք են տվյալ վայրում դրանց տեղաբաշխման առավելություններն ու թերությունները:

Տնտեսական ազատության պայմանը արտադրողի ինքնուրույնությունն է արդյունքի թողարկման, գնի սահմանման, պայմանագրերի կնքման, աշխատանքի դիմաց վճարման, ունեցվածքի տնօրինման, տիրապետման և օգտագործման, բարիքների իրացման շուկաների ընտրության գործում և այլն:

Շուկան մի համակարգ է, որը մարդկանց թույլ է տալիս միմյանց հետ կատարել փոխանակություն: Փոխանակությունը կարող է տեղի ունենալ խանութներում, տոնավաճառներում կամ համացանցի միջոցով: Այսինքն՝ մարդիկ շուկայում են նույնիսկ այն դեպքում, երբ գործնականում խանութ չեն այցելում: Նրանք կարող են պատվիրել ցանկացած ապրանք և ծառայություն: Շուկան փոխանակման լայնարձակ դաշտ է, որն ունի բազմապիսի կառույցներ և ձևեր:

Եթե տնտեսության մեջ ապրանքների և ծառայությունների արտադրությունը հիմնականում կազմակերպվում է ազատ փոխանակության միջոցով, ապա դա շուկայական տնտեսություն է:

Ապրանքների և ծառայությունների արտադրության համար անհրաժեշտ են տնտեսական ռեսուրսներ:

Բնական ռեսուրսներ
Հողատարածություններ, անտառներ, օգտակար հանածոներ, ջրային ավազաններ և այլն

Կապիտալ ռեսուրսներ
Հենքեր, հաստոցներ, գործիքներ, սարքավորումներ, տեխնոլոգիաներ և այլն

Մարդկային ռեսուրսներ
Աշխատանք և ձեռնարկատիրական ունակություն

Շուկայական տնտեսության մեջ հատկապես կարևորվում է ձեռնարկատիրությունը, որը բոլոր ռեսուրսները՝ բնական, կապիտալ և մարդկային, համատեղում է: Ձեռնարկատերն իր վրա է վերցնում որոշումների ընդունման

ու կենսագործման խնդիրները, տնտեսական ռիսկի բեռը, քանի որ շուկայական տնտեսությունում գործի հաջողությունը միշտ չէ, որ երաշխավորված է:

Քննարկում ► *Ձեր կարծիքով արդյունավետ գործարարության համար ինչո՞ւ է կարևոր ճկուն մտածելակերպը, ռիսկի դիմելու պատրաստականությունը, կառավարման և կազմակերպական հմտություններ ունենալը:*

ԱԶԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ

Ազատ ձեռնարկատիրությունը հենվում է *«չորս հենասյուների»* վրա: Դրանք են *մասնավոր սեփականությունը, գների համակարգը, մրցակցությունը և ձեռներեցությունը:*

Մասնավոր սեփականություն

Եթե մարդն ունի տուն, ավտոտնակ, կահույք և այլ ունեցվածք, ապա ինքն է որոշումներ կայացնում դրանց օգտագործման և պահպանման վերաբերյալ: Նա կարող է իր սեփականությունը վաճառել, նվիրել կամ տալ վարձակալության: Այսինքն՝ սեփականության իրավունքը սուբյեկտի՝ օրենքով ճանաչված և պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ *տիրապետելու, օգտագործելու* և *տնօրինելու* իրեն պատկանող գույքը: Գույքը կարող է լինել քաղաքացիների, իրավաբանական անձանց, պետության և համայնքների սեփականության ներքո:

Սեփականությունն ընդգրկում է ամբողջ տնտեսական գործընթացը, որը ծնում է ապրանքների ու ծառայությունների արտադրության, բաշխման, փոխանակման և սպառման հարաբերություններ:

Շուկայական հարաբերությունների պայմաններում սեփականության իրավունքը մշտապես ենթակա է խախտման ռիսկի: Ուստի շատ կարևոր է սեփականության հետ կապված հարաբերությունները կարգավորող, սեփականության իրավունքը պաշտպանող օրենսդրական և նորմատիվ իրավական այլ փաստաթղթերի բովանդակության իմացությունը:

Գործնական աշխատանք 2

Փորձե՛ք տետրում լրացնել աղյուսակը՝ բերելով քաղաքացիների, իրավաբանական անձանց, համայնքների և պետության սեփականության օրինակներ:

Քաղաքացիների սեփականություն	
Իրավաբանական անձանց սեփականություն	
Համայնքների սեփականություն	
Պետության սեփականություն	

ԳՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Սեփականության հետ սերտորեն կապված է գնային համակարգը: Սովորաբար գին ասելով՝ հասկանում ենք մի գումար, որը գնորդը վճարում է վաճառողին՝ ձեռք բերված ապրանքների և ծառայությունների դիմաց: Այսինքն՝ կարելի է ասել, որ գինը ապրանքի արժեքն է՝ արտահայտված փողով: Երբեմն հարցնելով՝ ինչ արժե այս կամ այն ապրանքը, նկատի ենք ունենում դրա գինը: Գները ոչ միշտ են արտացոլում արտադրանքի որակը, բայց դրանք մատնանշում են, թե սպառողները որքանով են արժևորում տվյալ արտադրանքը: Եթե ապրանքները շուկայում վաճառվում են բարձր գնով, ապա գործարարները շահագրգռված են լինում դրանց արտադրության չափերը մեծացնելու: Իսկ ցածր գները ձեռնտու են սպառողներին, որովհետև այդ դեպքում նրանք կարող են ձեռք բերել ավելի շատ ապրանք:

Գնային համակարգը չի կարող գործել, եթե ապահովված չէ մրցակցությունը: Եթե չկան մրցակիցներ, վաճառողն է թելադրում ապրանքի գինը: Սա է պատճառը, որ ժողովրդավարական երկրներում կառավարությունն ազատ մրցակցություն է ապահովում: Այսինքն՝ ընդունում է օրենքներ կամ ստեղծում պայմաններ, որոնք թույլ չեն տալիս, որ որևէ ապրանքի արտադրությունը կամ ծառայության մատուցումը դառնա անհատ ձեռներեցի կամ որևէ կազմակերպության մենաշնորհը:

Օրինակ՝ ամռանը, երբ շաքարավազ շատ է օգտագործվում պահածոներ պատրաստելու կամ այլ նպատակներով, շաքարավազի գինը բարձրանում է: Այդ ժամանակ ձեռներեցները շտապում են մեծ քանակությամբ շաքարավազ ներմուծել՝ մեծ շահույթ ստանալու համար: Երբ մի քանի ձեռներեցներ շուկան ողողում են շաքարավազով, ապա այդ ապրանքի գինը բնականաբար ընկնում է:

Քննարկում ► *Փորձե՛ք բերել համանման այլ օրինակներ և առաջարկել տարբերակներ շուկայում դրանց գնի կայունացման վերաբերյալ:*

ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Շուկայական տնտեսության պայմաններում ***մրցակցությունը*** գործարարների միջև ընթացող մրցավազքն է ապրանքների արտադրության և առք ու վաճառքի լավագույն պայմանների համար: Մրցակցությունը շուկայական համակարգի առանցքն է: Սեփականատերերը մրցակցում են միմյանց հետ իրենց ռեսուրսներն առավել արդյունավետ օգտագործելու կամ գնորդին առավել մատչելի դարձնելու համար: Օրինակ՝ թափուր աշխատատեղի համար մրցույթ սահմանելիս հաշվի են առնում դիմողի ստացած կրթությունը, փորձն ու հմտությունները: Բնական է, որ մրցակցության ժամանակ պետք է հաղթի նա, ով առավել որակյալ կրթություն է ստացել, ունի աշխատանքային փորձ և հմտություններ:

Շուկայական մրցակցության արդյունքն ավելի շատ և ավելի լավ ապրանքներն են, ռեսուրսների ավելի արդյունավետ օգտագործումը և ավելի բարձր աշխատավարձը: Գործարարներն անընդհատ ձգտում են նորարարության, որպեսզի իրենց կատարած ներդրումներից ավելի բարձր օգուտ ստանան: Իրականում շուկայական մրցակցությունը սպորտային մրցակցությունից տարբերվում է մի կարևոր հատկանիշով. սպորտում հաղթանակը նշանակում է պարտություն մյուսների համար, մինչդեռ գործարարության մեջ կարող են հաղթել շատերը:

Գնից բացի՝ գոյություն ունեն մրցակցության այլ միջոցներ ևս: Օրինակ՝ որոշ ընկերություններ մրցակցում են՝ գովազդելով իրենց արտադրանքի յուրահատկությունները: Մյուսներն ուշադրություն են հրավիրում իրենց կողմից մատուցվող յուրահատուկ ծառայությունների վրա: Ոմանք էլ ընդգծում են, որ իրենք օգտագործում են ավելի բարձրորակ նյութեր և ավելի կատարյալ արտադրաեղանակներ, քան իրենց մրցակիցները, ինչն էլ ապահովում է արտադրանքի ավելի բարձր որակ: Շատ ձեռնարկություններ էլ միաժամանակ դիմում են հաճախորդներին հրապուրելու մի քանի եղանակի:

Այսպիսով՝ ձեռնարկատերերն ու կառավարիչները շարունակ ձգտում են շուկայական դաշտում գտնելու այն ռազմավարությունը, որը կապահովի գործի հաջողությունը:

Գործնական աշխատանք 3

Ուսումնասիրե՛ք ստորև տրված աղյուսակը և փորձե՛ք հիմնավորել, թե ինչու են տարբերվում նշված բջջային հեռախոսների վաճառքի ցուցանիշերը: Ի՞նչն է կարևորվում այդ ապրանքների ընտրության ժամանակ:

«Սամսունգ», «Էյփըլ» և «Նոկիա» ձեռնարկությունների կողմից «ինտելեկտուալ» բջջային հեռախոսների վաճառքի ցուցանիշները 2013 թվականի I և II եռամսյակներում



ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅՈՒՆ

Ձեռներեցին բնութագրում են որպես գործարարի, որը տնտեսական ռիսկի է դիմում առևտրային ծրագրերի իրականացման, հետևաբար նաև շահույթի ստացման համար: Ձեռներեցները ռիսկի են դիմում, որովհետև չգիտեն, թե այդ արտադրանքը շուկայում կիրացվի, թե ոչ: Յուրաքանչյուր ձեռներեց արտադրության կազմակերպման և կառավարման նոր մեթոդներ է կիրառում, որպեսզի քիչ ծախսումներով կարողանա հասնել մեծ արդյունքի:

Այսպիսով՝ *ձեռնարկատիրական գործունեությունը կապված է ռիսկի, նախաձեռնության, ինքնուրույնության, պատասխանատվության և այլ հատկանիշների հետ:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ովքե՞ր են ձեռներեցները: Շարունակե՛ք թվարկումը.

- ստեղծագործ և պրպտող անհատներ.
- քննադատաբար մտածողներ.
- շահույթ ակնկալողներ.
- .....

2. Ո՞րն է գովազդի դերը շուկայական մրցակցության ժամանակ:

3. Օրինակների միջոցով ներկայացրե՛ք, թե ինչպես է մրցակցությունը օգուտ բերում սպառողին:

Դաս 19–20

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ: ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐԻՉ ԴԵՐԸ

Պետությունը մի ամբողջություն է, որ պետք է հոգա իր բաղկացուցիչ մասերի կարիքները և ապահովի ոչ միայն նրանց ֆիզիկական գոյությունը, այլև էն ամեն իրավունքները, որ չեն խանգարում ուրիշների և ամբողջի բարեկեցությանը:

Հ. Թումանյան

Ազատ շուկան չի ենթադրում, թե պետությունն առհասարակ չի միջամտում երկրի տնտեսական գործերին:

Ինչպե՞ս է դրսևորվում պետության կարգավորիչ դերը շուկայական տնտեսության մեջ:

Պետությունը սահմանում է տնտեսական կյանքը կարգավորող իրավական նորմեր, պաշտպանում է սպառողների շահերը, վերահսկում աշխատավարձի չափերը, արտադրանքի որակը, պաշտպանում է երկրի տնտեսական տարածությունը այլ երկրների ապրանք արտադրողներից, և վերջապես՝ պետությունը հնուց ի վեր եղել և մնում է դրամաշրջանառությունը կարգավորողը, որը նրա մենաշնորհներից է:

Ժամանակակից պայմաններում պետությունը նաև տնտեսական բնույթի այլ միջամտություն է ունենում: Պետությունը մշակում և իրագործում է տնտեսական ծրագրեր, որոնք նպատակաուղղված են երկրի տնտեսության որոշակի ճյուղերի առաջնային զարգացմանը, քայլեր է ձեռնարկում կանխելու բնապահպանական աղետալի զարգացումը, ինչը կարող է առաջանալ անվերահսկելի տնտեսական գործունեության դեպքում:

Տնտեսության զարգացման կարևոր նախապայման է պետության հանդեպ ձեռներեցների, առհասարակ բնակչության վստահությունը: Վստահությունը նախաձեռնություն է, ներդրումներ, վարկեր և կայունություն:

Պետությունը՝ ի դեմս կառավարության, իրականացնում է մի շարք գործառույթներ.

• *Ընդունում և կիրառում է մասնավոր սեփականությունը և ընդհանրապես անձի սեփականատիրական իրավունքները պաշտպանող օրենքներ և այլ իրավական ակտեր:*

Եթե սեփականության իրավունքները չպաշտպանվեն, մարդիկ կմտահոգվեն: Հասարակության մեջ, որտեղ չկան հստակ, բոլորի կողմից ընդունելի կանոններ, մարդիկ շահագրգռված չեն լինի կատարելու ներդրումներ:

• *Ապահովում է շուկայական մրցակցություն:*

Երբ մրցակցությունը սահմանափակվում է, սպառողներն ունենում են ընտրության ավելի քիչ հնարավորություն: Հայաստանում շուկայական մրցակցություն ապահովելու համար ընդունվել է համապատասխան օրենսդրություն:

• *Պաշտպանում է սպառողների շահերը:*

Պետությունն ընդունում է օրենքներ, որոնք կանխում են հնարավոր չարաշահումները ձեռներեցների կողմից, իր ձեռքում է պահում մի շարք ծառայություններ ու արտադրություններ: Օրինակ՝ անհատները չեն կարող ճանապարհ կառուցել, քանի որ նրանք այդ հողատարածքի տերը չեն և այդպիսի շինարարության համար բավարար ռեսուրսներ չունեն: Կառավարությունն ինքն է կազմակերպում կամ իրականացնում այդ աշխատանքները:

Քաղվածք իրավական ակտից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հիմնական հասկացությունները

Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

սպառող՝ բացառապես անձնական, ընտանեկան, տնային կամ այլ օգտագործման համար նախատեսված, ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) պատվիրման կամ ձեռքբերման մտադրություն ունեցող քաղաքացի.

սպառողների անորոշ շրջանակ՝ արտադրանքի (աշխատանքի, ծառայության) հնարավոր սպառողներ.

արտադրող՝ իրացման համար ապրանքներ արտադրող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր.

կատարող՝ սպառողների համար պայմանագրով աշխատանք կատարող կամ ծառայություն մատուցող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր.

վաճառող՝ առուվաճառքի պայմանագրով սպառողներին ապրանք իրացնող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր.

նորմատիվ փաստաթուղթ՝ օրենքներ, օրենքով սահմանված կարգով նախատեսված այլ իրավական ակտեր (տեխնիկական կանոնակարգեր), որոնցով սահմանված են պարտադիր պահանջներ ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) վերաբերյալ.

ապրանքի (աշխատանքի, ծառայության) թերություն՝ ապրանքի (աշխատանքի, ծառայության) անհամապատասխանությունը նորմատիվ փաստաթղթերին, պայմա-

նագրի պայմաններին կամ ապրանքի (աշխատանքի, ծառայության) որակին սովորաբար ներկայացվող պահանջներին.

ապրանքի (աշխատանքի, ծառայության) որակի էական խախտում՝ ապրանքի (աշխատանքի, ծառայության) որակին առաջադրվող պահանջների էական խախտումներ (չվերացվող, ինչպես նաև այնպիսի խախտումներ, որոնք չեն կարող վերացվել առանց անհամաչափ ծախսերի կամ ժամանակի կորստի, կամ այնպիսիք, որոնք բազմիցս կամ կրկին ի հայտ են գալիս դրանք վերացնելուց հետո և նման բնույթի այլ խախտումներ), որոնց դեպքում սպառողն իրավունք ունի իր ընտրությամբ հրաժարվելու պայմանագիրը կատարելուց և պահանջելու վերադարձնել ապրանքի (աշխատանքի, ծառայության) համար վճարված գումարը կամ պահանջել ոչ պատշաճ որակի ապրանքը (աշխատանքը, ծառայությունը) փոխարինելու պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով (աշխատանքով, ծառայությամբ).

ապրանքի (աշխատանքի, ծառայության) անվտանգություն՝ սպառողի կյանքի, առողջության, գույքի և շրջակա միջավայրի համար ապրանքի (աշխատանքի, ծառայության) անվտանգությունը սովորական պայմաններում՝ դրա օգտագործման, պահման, փոխադրման, օգտահանման ժամանակ, ինչպես նաև աշխատանքի կատարման (ծառայության մատուցման) գործընթացի անվտանգությունը.

ծառայության ժամկետ՝ ապրանքի շահագործման տևողությունը շահագործման կամ նորոգումից հետո շահագործումը վերսկսելու օրից մինչև իր նշանակությամբ օգտագործման անհնարինությունը: Այն կարող է հաշվարկվել ժամանակի, ինչպես նաև չափման այլ միավորներով (կիլոմետրով, տարիներով և այլն).

պիտանիության ժամկետ՝ ժամանակահատված, որի ավարտից հետո ապրանքն իր նշանակությամբ օգտագործման համար պիտանի չէ.

երաշխիքային ժամկետ՝ ժամանակահատված, որի ընթացքում ապրանքի (աշխատանքի) թերության հայտնաբերման դեպքում արտադրողը (կատարողը, վաճառողը) պարտավոր է բավարարել սույն օրենքով սահմանված սպառողի պահանջները:

Ներկայացնենք հաճախ հանդիպող իրավիճակ. գրեթե բոլոր խանութներում խոշոր տառերով գրված ու տեսանելի վայրում փակցված *«Գնված ապրանքը հետ չի ընդունվում և չի փոխանակվում»* գրությունն անօրինական է և ոտնահարում է սպառողների իրավունքները:

«Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ **սպառողն իրավունք ունի 14-օրյա ժամկետում ոչ պարենային ապրանքը փոխանակելու նմանատիպ այլ ապրանքի հետ խնդիրների առաջաց-**

ման կամ թերությունների բացահայտման դեպքում, իսկ անորակ ապրանքը պարտավոր են հետ ընդունել:

Հայաստանում սպառողների իրավունքները խախտվում են գրեթե բոլոր բնագավառներում: Ստեղծված իրավիճակում իրենց մեղքի բաժինն ունեն նաև սպառողները, ովքեր անտեղյակության կամ անտարբերության պատճառով չեն պաշտպանում իրենց իրավունքները:

Գործնական աշխատանք 1

Ներկայացրեք իրավիճակներ, երբ ոտնահարվել են սպառողի իրավունքները: Ձեր տեսակետը հիմնավորեք՝ օգտագործելով նաև «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի համապատասխան հոդվածները:

Պետության գործառույթներից է նաև *տնտեսության կայունացումը*: Կառավարությունը փորձում է կարգավորել գործազրկության մակարդակը, գների ընդհանուր մակարդակը, համապատասխան օղակների միջոցով կարգավորում է փողի առաջարկը, ազդում է տոկոսադրույքների վրա:

Գործառույթների մեջ է մտնում *սոցիալական ապահովության հոգածությունը*: Մշակվում են տարբեր ծրագրեր, որ ապահովեն յուրաքանչյուր քաղաքացու նվազագույն կենսամակարդակը, այսինքն՝ անապահով մարդկանց տրամադրվեն լրացուցիչ եկամուտ, առողջապահական և այլ ծառայություններից օգտվելու հնարավորություններ, օժանդակեն կենսաթոշակառուներին և հաշմանդամներին:

Փորձեք թվարկել, թե ինչ պետական ծառայություններից ենք օգտվում: Արդյոք բոլո՞ր պետք է վճարեն այդ ծառայությունների համար: Ինչո՞ւ:

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՏԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Հարց է ծագում՝ որտեղի՞ց է պետությունը հայթայթում համապատասխան միջոցներ և ինչպե՞ս:

Դրանք գոյանում են հարկերից, տուրքերից, միջազգային կազմակերպություններից և այլ պետություններից ստացած վարկերից, միջազգային օգնությունից և այլ աղբյուրներից:

Պետության տնտեսական քաղաքականության իրականացման միջոցներից մեկն էլ ***պետական բյուջեն*** է:

Արքեմենյան տերության հպատակ երկրների ներկայացուցիչները հարկ են վճարում Իրանի արքա Դարեհին:
Բարձրաքանդակ Պերսեպոլիսից

Երբ բյուջեի ծախսերը հավասար են եկամուտներին, բյուջեն կոչվում է հաշվեկշռված: Իսկ երբ նախատեսված ծախսերը գերազանցում են եկամուտները, ուրեմն բյուջեն դեֆիցիտ ունի կամ, ինչպես ասում են, ունի ճեղքվածք:

Պետական բյուջեն օգտագործվում է պետության ծախսերը հոգալու համար: Պետական և համայնքի բյուջեները պետության և տեղական ինքնակառավարման մարմինների՝ Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների ձևավորման և ծախսման որոշակի ժամանակահատվածի ֆինանսական ծրագրեր են: Հայաստանի Հանրապետության համախմբված բյուջեն պետական և համայնքների բյուջեների եկամուտների ու ծախսերի հանրագումարն է:

Բյուջետային գործընթացը յուրաքանչյուր բյուջետային տարվա բյուջեները կազմելու, քննարկելու, հաստատելու և կատարելու, դրանց տարեկան հաշվետվությունը հաստատելու ուղղությամբ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների՝ օրենքով կարգավորված գործունեությունն է: Բյուջեների նախագծերը կազմվում են կառավարության գործունեության, ինչպես նաև համայնքների զարգացման ծրագրերին համապատասխան:

Գործնական աշխատանք 2

Պլանավորելով բյուջեն՝ դուք կկարողանաք բացահայտել ձեր ֆինանսական հնարավորությունների չափը, ինչպես նաև հստակեցնել ձեր ծրագրերի իրագործման ժամկետներն ու ձևերը:

Ստորև նկարագրված իրավիճակի համար փորձեք պլանավորել ձեր բյուջեն:

Իրավիճակ

Դուք նախատեսում եք գնել ավտոմեքենա, ճանապարհորդել, անդամագրվել որևէ մարզական ակումբի: Կարճ ասած՝ ունեք բազմաթիվ ծրագրեր, բայց չգիտեք՝ կարող եք դրանք իրականացնել, թե ոչ: Հասկանալի է, որ գլխավոր նախապայմանն այստեղ համապատասխան ֆինանսական միջոցների առկայությունն է:

Քաղվածք իրավական ակտից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 3. Հարկը պետական և հասարակական կարիքների բավարարման նպատակով համապարտադիր և անհատույց վճար է, որը գանձվում է ֆիզիկական և իրավաբանական անձանցից (այդ թվում՝ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանցից, օտարերկրյա իրավաբանական անձի հիմնարկներից, օտարերկրյա իրավաբանական անձանց

մասնաճյուղերից, ներկայացուցչություններից), հիմնարկներից, տեղական ինքնակառավարման մարմիններից՝ հարկային օրենսդրությամբ նախատեսված կարգով, չափերով և սահմանված ժամկետներում:

Հոդված 4. Սույն օրենքով սահմանված հարկերը վճարվում են Հայաստանի Հանրապետության պետական և (կամ) համայնքների բյուջեներ:

Հոդված 5. Հայաստանի Հանրապետությունում գործում է միասնական հարկային համակարգ: Հայաստանի Հանրապետությունում ֆիզիկական և իրավաբանական անձինք (այդ թվում՝ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք, օտարերկրյա իրավաբանական անձանց հիմնարկները, օտարերկրյա իրավաբանական անձանց մասնաճյուղերը, ներկայացուցչությունները), հիմնարկները, տեղական ինքնակառավարման մարմինները (այսուհետ՝ հարկ վճարողներ) պարտավոր են վճարել հարկեր, եթե հարկային օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ

Հոդված 2. *Պետական տուրքի հասկացությունը*

Հայաստանի Հանրապետությունում պետական տուրքը պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորվածՄսույն օրենքով սահմանված ծառայությունների կամ գործողությունների համար ֆիզիկական և իրավաբանական անձանցից Հայաստանի Հանրապետության պետական և (կամ) համայնքների բյուջեներ մուծվող օրենքով սահմանված պարտադիր վճար է:

Հոդված 4. *Պետական տուրք վճարողների իրավունքները*

Պետական տուրք վճարողներն իրավունք ունենՄ

- պահանջելու պետական տուրք գանձող մարմնիցՄկատարելու տուրքի հաշվարկ, իսկ անհրաժեշտության դեպքումՄնաև վերահաշվարկ.
- վերադասության, ինչպես նաև դատական կարգով գանգատարկելու պետական տուրք գանձող մարմնի կամ պաշտոնատար անձանց գործողությունները.
- դիմելու համապատասխան պետական մարմիններՄպետական տուրքի վճարման արտոնություններ ստանալու համար.
- ստանալու պետական տուրքի վճարման մասին տեղեկանք.
- սույն օրենքով սահմանված դեպքերում պահանջելու և ստանալու վերադարձման ենթակա պետական տուրքի գումարը:

Հոդված 5. Պետական տուրք վճարողների պարտականությունները

Պետական տուրք վճարողները պարտավոր ենՄ

- ժամանակին և լրիվ վճարել սույն օրենքով սահմանված պետական տուրքերը.
- պետական տուրքի վճարումով ծառայություններ կամ գործողություններ իրականացնող մարմիններ կամ պաշտոնատար անձանց ներկայացնել պետական տուրքի վճարումը հիմնավորող փաստաթղթերը, բացառությամբ այն դեպքերի, երբ պետական

տուրքը վճարվում է լիցենզիայի կամ դրա կրկնօրինակի տրման, լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման, լիցենզիայի վերաձևակերպման, այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու համար.

- ներկայացնել պետական տուրքի վճարման գծով իրեն վերապահված արտոնությունները հաստատող փաստաթղթերը.
- սույն օրենքով սահմանված դեպքերում պետական բյուջե վճարել պետական տուրքը ժամանակին չվճարելու համար հաշվարկված տույժի գումարները:

Հոդված 7. Պետական տուրքի գանձման օբյեկտները

Հայաստանի Հանրապետությունում պետական տուրքը գանձվում է՝

ա) դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար.

բ) ***(կետը հանվել է 28.12.98)***

գ) նոտարի կողմից նոտարական գործողություններ կատարելու համար.

դ) քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկնակի վկայականներ, քաղաքացիական կացության ակտերում կատարված գրառումների փոփոխությունների, լրացումների, ուղղումների և վերականգնման վկայականներ տալու համար.

ե) Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելու համար.

զ) հյուպատոսական ծառայություններ կամ գործողություններ իրականացնելու համար.

է) պետական գրանցման համար.

ը) մշակութային արժեքները արտահանելու կամ ժամանակավոր արտահանելու իրավունքի վկայագիր տալու համար.

թ) գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային նշանների, աշխարհագրական նշումների, ծագման տեղանունների, երաշխավորված ավանդական արտադրանքի, ֆիրմային անվանումների (արդյունաբերական սեփականության օբյեկտների), ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պահպանության հետ կապված իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների համար.

ժ) ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար.

ժա) լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ տալու համար.

ժբ) սույն օրենքի 19^1, 19^2, 19^4 և 20 հոդվածներով սահմանված ծառայությունների կամ գործողությունների համար:

Գործնական աշխատանք 3

Օգտվելով վերը բերված քաղվածքներից՝ փորձեք պարզաբանել *հարկ, պետական տուրք, տուրք վճարողների իրավունքներ և պարտականություններ, սպառող, պիտանիության ժամկետ, երաշխիքային ժամկետ* **հասկացությունները:**

ԳԼՈՒԽ 6

ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՀԻՄՆԱՐԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դաս 21

«ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ: ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍԵՐՈՒՆԴՆԵՐԸ

Մարդկային ընտանիքի բոլոր անդամներին ներհատուկ արժանապատվության և հավասար ու անօտարելի իրավունքների ճանաչումն աշխարհում ազատության, արդարության և խաղաղության հիմքն է:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի նախաբանը

ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Իրավական կանոնները (նորմերը) հաճախ համեմատում են բարոյական կանոնների հետ, քանի որ դրանք երկուսն էլ ունեն որոշակի կարգավորող գործառույթ: Բարոյական կանոնները հենվում են հասարակական կարծիքի, ավանդույթի ուժի վրա: Հաճախ դրանք ամրապնդվել են կրոնի հեղինակությամբ: Օրինակ՝ *մի՛ սպիր, մի՛ շնացիր* պատվիրանները:

Թեև իրավական կանոնները նույնպես բարոյական բովանդակություն են կրում, սակայն դրանք ամրապնդվում են պետական հարկադրանքի ուժով և օրենքի հեղինակությամբ: Այսպես՝ *մի՛ սպիր* պատվիրանն այս դեպքում կարող է վերափոխվել *կեղծ վկայություն տալու* վերաբերյալ իրավական պահանջի: Իրավունքի նորմերը սահմանվում են պետության կողմից և կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները:

«ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Մարդու իրավունքները՝

- նման են զրահի. դրանք պաշտպանում են մեզ,
- նման են կանոնների, քանի որ վարքագիծ են սահմանում,
- նման են դատավորների, քանի որ կարող ենք դիմել նրանց,
- նման են բնությանը, քանի որ կարող են ոտնահարվել,
- նման են հոգու, քանի որ հնարավոր չէ ոչնչացնել:

Մարդու իրավունքները հավասարապես վերաբերում են բոլորին՝ լինի մարդը հարուստ թե աղքատ, ծեր թե երիտասարդ, բարձրահասակ թե կարճահասակ: Մարդու իրավունքները անձին օժտում են արժանապատվությամբ և պարտավորեցնում, որ հարգալից վերաբերվի այլոց: Ինչպես առաքինության, ճշմարտության և արդարության սահմանումների, այնպես էլ մարդու իրավունքների սահմանման վերաբերյալ շատ տարաձայնություններ կան, սակայն դրանց առնչվելով՝ մարդը ավելի խոր է գիտակցում դրանց իմաստը:

Իրավունքը մարդու կողմից ներկայացված արդարացի պահանջն է: Օրինակ՝ քաղաքացիները ընտրելու իրավունք ունեն, եթե պետության սահմանադրության մեջ դա ամրագրված է: Մարդիկ իրավասու են ակնկալելու այդ ամենը, եթե նրանց այդ իրավունքների իրականացման երաշխիքներ կամ խոստումներ են տրվել:

Սակայն մարդու իրավունքները, պահանջ լինելով հանդերձ, վերջինից տարբերվում են նրանով, որ կախված չեն որևէ խոստումից կամ որևէ մեկի տված երաշխիքից: Մի անձի կյանքի իրավունքը կախված չէ մեկ ուրիշի՝ նրան չսպանելու խոստումից. գուցե նրա կյանքն է կախված դրանից, բայց ոչ՝ կյանքի իրավունքը:

Ընդունել մարդու իրավունքները նշանակում է ընդունել, որ բոլորն իրավասու են ներկայացնելու այդ պահանջը: Մարդու իրավունքները հավասարապես բոլորինն են:

Բոլոր մարդիկ հավասարապես և մշտապես օժտված են մարդու իրավունքներով:

Մարդու իրավունքները՝

- **համընդհանուր են.** աշխարհում ամենուր դրանք նույնն են բոլոր մարդկանց համար: Մարդիկ իրավունքներով օժտված են այն պատճառով, որ ոչ միայն որևէ երկրի քաղաքացի են, այլև մարդկային ընտանիքի անդամներ.
- **անկապտելի են.** մենք ձեռք ենք բերել դրանք մեր ծննդյան օրից և չենք կարող կորցնել.
- **անբաժանելի են.** ոչ ոք չի կարող զրկել մարդուն որևէ իրավունքից՝ վերջինիս «պակաս կարևոր» կամ «ոչ էական» լինելու պատճառով.
- **փոխկապակցված են.** մարդու բոլոր իրավունքները միասին կազմում են մեկ միասնական համակարգ:

Ընդունելով իր իրավունքները՝ յուրաքանչյուր ոք ընդունում է նաև պարտավորություններ՝ հարգելու և պաշտպանելու այլոց իրավունքները:

Քննարկում ► *Մարդու իրավունքները համընդհանուր են և հավասարապես վերաբերում են բոլորին: Չնայած դրան՝ աշխարհում կան բազմաթիվ մարդիկ, որոնց իրավունքները ոտնահարված են:*

Պատմական ակնարկ

Այն տեսակետը, որ մարդիկ օժտված են անկապտելի իրավունքներով, արտացոլված է բազմաթիվ մշակույթներում և ավանդույթներում: Բազմաթիվ փաստեր ցույց են տալիս, որ մարդու իրավունքներում արտացոլված արժեքները չեն պատկանում ո՛չ «արևմտյան» արժեքների, ո՛չ էլ 20–րդ դարի գյուտերի շարքին:

- Համմուրապիի օրենքների ժողովածուն (Ք. ա. 18–րդ դար) Բաբելոնի թագավորի կողմից կազմված առաջին գրավոր օրենսգիրքն է: Դրանում երդում է տրվում՝«հաստատելու արդարություն թագավորությունում, վերացնելու չարիքն ու բռնությունը, թույլ չտալու, որ ուժեղները ճնշեն թույլերին...., կրթելու երկիրն ու ապահովելու ժողովրդի բարեկեցությունը»:
- Հայտնի են Հին Եգիպտոսի փարավոնի (Ք. ա. 2000 թ.) հրահանգներն իր ենթականերին. «.... Երբ հայցվոր է գալիս Վերին կամ Ներքին Եգիպտոսից, ապահովե՛ք, որ ամեն ինչ կատարվի օրենքին համապատասխան, պահպանվի ավանդույթը, և հարգվի յուրաքանչյուր մարդու իրավունքը»:
- Պարսից արքա Կյուրոսի հրովարտակը (Ք. ա. 570 թ.) ուղղված էր թագավորությունում ապրող ժողովրդին և ճանաչում էր ազատության, անվտանգության, ազատ տեղաշարժման և այլ իրավունքներ:

Կյուրոսի հրովարտակը

ԲՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԾՆՈՒՆԴԸ

17–18–րդ դարերի ընթացքում եվրոպացի մի շարք իմաստասերներ առաջադրել են *բնական իրավունքների* մասին հայեցակարգը: Դրանք բնորոշ են ոչ թե որևէ երկրի քաղաքացու, որևէ կրոնի կամ ազգության ներկայացուցչի, այլ անհատին՝ որպես մարդկային էակի:

Քաղաքացիական իրավունքների «եռյակ բանաձևը»

Ջոն Լոք
(1632–1704)

«Պետական կառավարման մասին տրակտատում» **Ջոն Լոքը** ձևակերպում է անձի երեք հիմնական բնածին իրավունքները, որոնք երաշխավորվում են պետության կողմից. դրանք **կյանքի, ազատության և սեփականության** իրավունքներն են:

«Բնական վիճակում,— գրում է Լոքը,— յուրաքանչյուր մարդ այն գիտակցությունն ունի, որ չպետք է, բացի հանցագործի նկատմամբ արդարադատություն իրականացնելուց..., ձեռնարկի այնպիսի գործողություններ, որոնք կանդրադառնան մեկ ուրիշի կյանքի, ազատության, առողջության ... և սեփականության վրա: Համապատասխանաբար, նաև պետության՝ բանականության վրա հենվող հարկադրական իշխանությունը երբևէ չպետք է իրավունք ունենա ոչնչացնելու, ձնշելու կամ գիտակցաբար քայքայելու հպատակներին: ... Չէ՞ որ մարդիկ հրաժարվել են բնական վիճակի ազատությունից և համապատասխան կապանքներով իրենց կապել՝ հանուն իրենց կյանքի, ազատության և ունեցվածքի պահպանման»:

Այդ երեք իրավունքները, համաձայն Լոքի, կազմում են իրավական պետության սահմանադրական հիմքը: *«Չնայած ամենատարբեր կեղծ մեկնաբանություններին,— գրում է Լոքը,— օրենքի նպատակը ոչ թե ազատության ոչնչացումն ու սահմանափակումն է, այլ դրա պահպանումն ու ընդարձակումը»*:

Լոքի իրավական եռյակ բանաձևը (կյանք, ազատություն, սեփականություն) վաղ բուրժուական սահմանադրությունների մաս կազմեց և դարձավ այն «բջիջը», որից հետո աճեց «մարդու և քաղաքացու իրավունքների» ավելի տարբերակված բովանդակությունը:

Ըստ Է. Սոլովյովի
«Անցյալը հրում է մեզ. փիլիսոփայության և մշակույթի պատմության ակնարկներ» գրքի

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍԵՐՈՒՆԴՆԵՐԸ

Սովորաբար առանձնացվում են մարդու իրավունքների մի քանի սերունդներ:

Առաջին սերնդի իրավունքներ (քաղաքացիական և քաղաքական իրավունքներ)

Մարդու իրավունքների առաջին սերունդը հաճախ կոչում են քաղաքացիական և քաղաքական իրավունքներ: Դրանք ձևակերպվել են 18–րդ դարում Ֆրանսիայում և Հյուսիսային Ամերիկայում: Իրավունքների առաջին սերունդը շեշտը դնում էր անձի ազատության և սեփականության իրավունքի վրա:

Մարդու իրավունքների առաջին սերունդը եկավ լուծելու մարդու անձնական և քաղաքական **ազատության** խնդիրը:

Տեղեկատու նյութ

1689 թ. — Իրավունքների մասին օրենք: Ընդունեց անգլիական խորհրդարանը: Օրենքը սահմանեց այնպիսի իրավունքներ, ինչպիսիք են խորհրդարանում խոսքի և վիճաբանության ազատությունը, հպատակների իրավունքը՝ պահանջագիր ներկայացնելու թագավորին:

1776 թ. — ԱՄՆ–ի Անկախության հռչակագիր: Հռչակագրի հայրն էր ժամանակի առաջադեմ մտածող, փաստաբան Թոմաս Ջեֆերսոնը (հետագայում՝ ԱՄՆ–ի նախագահ):

1789 թ. — Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիր: Ընդունվեց Ֆրանսիայում Մեծ հեղափոխության ժամանակ:

Երկրորդ սերնդի իրավունքներ (հասարակական, տնտեսական և մշակութային իրավունքներ)

Հասարակական (սոցիալական) իրավունքները հասարակության կյանքին լիարժեք մասնակցությունն ապահովող իրավունքներն են: Դրանք են *կրթության, ընտանիք կազմելու* և *ընտանիքի բարեկեցության ապահովման* իրավունքները, ինչպես նաև այն իրավունքներից շատերը, որոնք հաճախ համարվում են **քաղաքացիական իրավունքներ.** օրինակ՝ *հանգստի, առողջության պահպանման, անձնական կյանքի անձեռնմխելիության* և այլն:

Տնտեսական իրավունքների շարքում սովորաբար ներառվում են *աշխատանքի, պատշաճ կենսամակարդակի, բնակարանի, կենսաթոշակի իրավունքները:* Տնտեսական իրավունքներն արտացոլում են այն հանգամանքը, որ մարդկային արժանապատվության համար անհրաժեշտ է նյութական ապահովության որոշակի նվազագույն մակարդակ:

Մշակութային իրավունքները վերաբերում են ստեղծագործության ազատությանը, հասարակության մշակութային կյանքին ազատորեն մասնակցելուն, մտավոր սեփականության պաշտպանությանը և համանման այլ խնդիրների:

Մարդու իրավունքների երկրորդ սերունդը եկավ լուծելու **հավասարության** խնդիրը:

Երրորդ սերնդի իրավունքներ (համերաշխության իրավունքներ)

Երրորդ սերնդի իրավունքներն ընդգրկում են կայուն զարգացման, խաղաղության, առողջ շրջակա միջավայր ունենալու, մարդկության ընդհանուր ժառանգության համատեղ օգտագործման, հաղորդակցվելու, մարդասիրական օգնության և այլ իրավունքներ:

Մարդու իրավունքների երրորդ սերունդը առաջ մղեց **եղբայրության** գաղափարը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ են մարդու իրավունքները: Ինչո՞ւ են դրանք անհրաժեշտ:

2. Թվարկե՛ք և պարզաբանե՛ք մարդու իրավունքների մի քանի հիմնական հատկանիշներ:

3. Դասում եղածից բացի՝ ի՞նչ իրավական փաստաթղթեր կարող եք նշել: Հարցին պատասխանելու համար օգտվե՛ք պատմության դասագրքերից և լրացուցիչ այլ աղբյուրներից:

Firefox https://ebooks.bonee.net/fumf/nnme/

ՀԱՏՎԱԾՆԵՐ ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ ԴԱՏԱՍՏԱՆԱԳՐՔԻՑ

Գլուխ ԻԱ. Հինականների դատաստանի մասին

Մարդկային բնությունը Արարչի կողմից ազատ է ստեղծվել, իսկ տերերի պետքերին ծառայելու համար արարվել է հողից և ջրից: Եվ այս դատաստանն եմ պատշաճ համարում, որ, հեռանալով տերերից, անձը ազատ է բնակվելու ուր և կամենա: Իսկ եթե տերերից մեկը այս բանը չների և բռնադատի հեռացածներին, որ վերադառնան, ապա ուրիշ վայրում և ոչ տերերի մոտ ծնված որդիները հոր մահից հետո ազատ են:

Գլուխ ԻԴ. Մանուկների՝ ջրում իրար վնասելու դատաստանի մասին

Ջրում լողալիս մանուկները խեղդում են միմյանց: Երբ բացահայտվում է, որոշում են՝ խաղի ժամանակ միամտաբա՞ր է եղել, թե՞ քինախնդրությունից, թե՞ (խեղդվածը) կամովին է խորացել ջրի մեջ, և ուրիշները չեն կարողացել նրան դուրս հանել: Այդպիսիք պետք է դատվեն սպանությանը համապատասխան, և այդ ձևով տրվի իրավացի վճիռ:

Գլուխ ՃԻԸ. Իրավունքները ոտնահարողների դատաստանի մասին

Մի՛ ոտնահարիր կնոջ, որբի և այրու իրավունքները: Դատավորների վրա օրենք է դրվում չվարվել կաշառքով և այլ պատրանքներով, ինչպես իրենք են ուրիշներից պահանջում, և եթե այս բանն արվի, պատվից զրկվի:

Մխիթար Գոշի հուշարձանը Մատենադարանի մոտ
Քանդակագործ՝ Ղուկաս Չուբարյան, 1967 թ.

Գլուխ ՃՀԹ. Հափշտակիչ արհեստավորների դատաստանի մասին

Արհեստավորները, որ հափշտակել են ուրիշների ինչքը, պետք է փոխհատուցեն մեկին չորս կամ պետք է ապաշխարեն վարդապետի հրամանով:

Բացահայտվածը և դատաստանի դուռն ընկածը պետք է հատուցի, ով կարողություն ունի, իսկ ովքեր կարողություն չունեն կամ չեն բացահայտվել, ապաշխարեն:

Գլուխ ՃՂԳ. Նույն մոր կաթով սնվածների դատաստանի մասին

Հարց. «Եթե մի մոր կաթով սնվել են օտար երեխաները, իրավունք ունե՞ն նրանք ամուսնանալու, երբ դառնան չափահաս:

Պատասխան. «Իրավունք չունեն, քանզի ծնողն ու ստնտուն նույնն են համարվում»:

110 von 146 12.02.2021, 12:07

Դաս 22–23

ՄԱՐԴՈՒ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մարդու քաղաքացիական և քաղաքական իրավունքներն են՝

- կյանքի իրավունքը,
- ազատության և անձեռնմխելիության իրավունքը,
- իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունքը,
- մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը,
- բնակարանի անձեռնմխելիության իրավունքը,

- ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունքը,
- մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը,
- իր կարծիքն ազատ արտահայտելու, խոսքի ազատության իրավունքը, ներառյալ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը,
- այլ անձանց հետ միավորումներ կազմելու, այդ թվում՝ արհեստակցական միություններ կազմելու և դրանց անդամագրվելու իրավունքը, այլ քաղաքացիների հետ կուսակցություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքը,
- խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունքը,
- ընտրելու և հանրաքվեներին մասնակցելու, ինչպես նաև անմիջականորեն և կամքի ազատ արտահայտությամբ ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով պետական կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունքը և այլն:

ՄԱՐԴՈՒ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Մարդու կարևորագույն իրավունքներից մեկը, եթե ոչ ամենակարևորը, կյանքի իրավունքն է: Այդ իրավունքն ամրագրված է մարդու իրավունքներին վերաբերող մի շարք հիմնարար փաստաթղթերում և մեր երկրի Սահմանադրությունում:

Կյանքի իրավունքի երաշխավորը ցանկացած դեպքում պետությունն է: Պետությունը պարտավոր է բոլոր միջոցներով ապահովել և պաշտպանել մարդու

կյանքի իրավունքը: Պետությունը ծրագրում և իրականացնում է հանցագործության կանխարգելմանն ուղղված միջոցառումներ: Սակայն պետության պաշտպանիչ գործառույթի նշանակությունը չի կարելի ծայրահեղացնել:

Այս դրույթը պարզաբանելու համար նկարագրենք մի քանի իրավիճակ:

Իրավիճակ 1. Ալկոհոլը չարաշահած վարորդը, խախտելով երթևեկության կանոնները, վրաերթի է ենթարկում քաղաքացուն, որի հետևանքով վերջինս մահանում է:

Իրավիճակ 2. Մննդամթերքի չարտոնված վաճառքի հետևանքով տասնյակ մարդիկ են թունավորվել, գրանցվել են նաև մահացության դեպքեր:

Քննարկում

- *Վերլուծելով տրված իրավիճակները՝ ներկայացրե՛ք մարդու (անհատի, քաղաքացու) պատասխանատվությունը ուրիշին կյանքից զրկելու կամ առողջությանը ծանր վնաս հասցնելու դեպքում:*
- *Միաժամանակ մեկնաբանե՛ք պետության դերը համանման դեպքերը կանխելու ուղղությամբ:*

Իլյա Ռեպին. «Իվան Ահեղը և նրա որդի Իվանը»

Կյանքի իրավունքի գլխավոր երաշխիքը այս դեպքում օրենքն է, այն է՝ Սահմանադրությունը, միջազգային այն փաստաթղթերը, որոնց միացել է մեր երկիրը (օրինակ՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային

դաշնագիրը, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիան), քրեական օրենսգիրքը և այլն:

Կյանքի իրավունքին վերաբերող կարևոր հարցերից մեկը պետության՝ մահապատիժ իրականացնելու գործառույթն է: Աշխարհի շատ երկրներում պատժի առավելագույն տեսակը շարունակում է գործել:

Մեր երկրում նույնպես 1995 թ. ընդունված Սահմանադրությունը թույլատրում էր մահապատիժը՝ որպես բացառիկ պատժամիջոց: Շարունակելով մարդու իրավունքների բնագավառում բարեփոխումները՝ ՀՀ Սահմանադրության 2005 թ. խմբագրությամբ մահապատիժն արգելվեց: Սահմանադրական այդ կարևորագույն դրույթը պահպանվեց նաև 2015 թ. ընդունված տարբերակում *(տե՛ս ՀՀ Սահմանադրություն, հոդված 24):*

Քննարկում

► *Եթե լինեիք որոշման պատասխանատուն, այսինքն՝ 2005 թ. նոյեմբերի 27–ին մասնակցեիք Սահմանադրության նոր խմբագրության հանրաքվեին, ի՞նչ կլիներ ձեր որոշումը. կքվեարկեիք այդ դրույթին կո՞ղմ, թե՞ դեմ: Հիմնավորե՛ք ձեր տեսակետը: Ո՞ր դեպքում կպահպանեիք մահապատիժը:*

Եվ վերջապես՝ կյանքի իրավունքին վերաբերող բարդ և լուրջ վերլուծության ենթակա խնդիր է *ինքնասպանությունը:* Այս խնդիրն, անշուշտ, ունի նաև բարոյական, հոգեբանական, հասարակական և այլ կողմեր, սակայն տվյալ դեպքում մեր քննարկման հարցը խնդրի իրավական կողմն է: Օրինակ՝ մարդու՝ բացառապես իր կամքով կյանքից հեռանալը, նրան այս կամ այն կերպ ինքնասպանության հասցնելը: Այդպիսի պատճառներ կարող են լինել անձի արժանապատվության պարբերաբար նվաստացումը, հասարակական ծանր վիճակի մեջ դնելը, վտանգավոր աղանդներին անդամակցելը և այլն:

ՄԱՐԴՈՒ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Քննարկում

► *Ձեր կարծիքով ի՞նչ է արժանապատվությունը, և ո՞ր դեպքում եք այն համարում ոտնահարված:*

Հարցը հասկանալու համար քննարկե՛ք տարբեր տեսանկյուններից, կյանքի տարբեր ոլորտներում: Օրինակ՝ հասարակական ծանր պայմանները մարդու մեջ կարող են առաջացնել իր արժանապատվության ոտնահարված լինելու զգացողություն: Նույն զգացողությունը կարող է առաջանալ նաև, երբ մարդը, ստանա-

լով բարձրագույն կրթություն և ունենալով մասնագիտական բարձր որակավորում, երկար ժամանակ չի կարողանում աշխատանք գտնել և հարկադրված է լինում համաձայնելու ցածր որակավորման աշխատանքի:

Շատ լուրջ հետևանքներ կարող է ունենալ մարդու անունը, բարի համբավը արատավորող տեղեկություններ հրապարակելը աշխատավայրում, ուսումնական հաստատությունում, բնակավայրում, զանգվածային լրատվամիջոցներում և այլն:

Քննարկում ► *Ուսումնասիրե՛ք ՀՀ Սահմանադրությունը, հայտնե՛ք ձեր կարծիքն այն մասին, թե մարդն ի՞նչ միջոցներով կարող է պաշտպանել իր արժանապատվությունը:*

ԱՆՁՆԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Անձնական անձեռնմխելիություն ասելով՝ պետք է հասկանալ մարդու ոչ միայն մարմնական, այլև հոգևոր ազատությունը:

Մարմնական ազատությունը մարդուն տրված է ծննդյան պահից և դասվում է նրա բնական իրավունքների շարքին: Մարդուն կարելի է ազատությունից զրկել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով: Այս դեպքում մարդուն ազատությունից զրկելը հիմնավորվում է այլոց իրավունքները պաշտպանելու նկատառումով: Օրինակ՝ վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով մարդուն կարող են զրկել ազատ տեղաշարժվելու իրավունքից: Համանման սահմանափակումներ կարող են գործադրվել թմրամոլների և հասարակության համար վտանգ ներկայացնող այլ անձանց նկատմամբ:

Գործնական աշխատանք 1

Ընթերցե՛ք ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածը և նշե՛ք, թե որ դեպքերում է թույլատրվում մարդուն ազատությունից զրկելը:

Մարդու իրավունքների տեսանկյունից շատ կարևոր է ոչ միայն մարդուն ազատությունից զրկելու հիմքերը, այլև կարգը: Օրինակ՝ բնակարանը չի կարելի խուզարկել՝ առանց դատարանի որոշման:

Մարդու քաղաքացիական իրավունքների շարքում շատ կարևոր տեղ ունեն նաև մտքի, խղճի, կրոնի ազատության և կարծիքի ու դրա արտահայտման ազատության իրավունքները:

Գործնական աշխատանք 2

Ուսումնասիրելով Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի և ՀՀ Սահմանադրության մեջբերված հոդվածները՝ համեմատեք դրանցում ներկայացված մարդու իրավունքները: Համեմատություն կատարելիս միավորեք մի դեպքում՝ հռչակագրի 18–րդ և Սահմանադրության 41–րդ, մյուս դեպքում՝ հռչակագրի 19–րդ և Սահմանադրության 42–րդ հոդվածների բովանդակությունը:

ՀՀ Սահմանադրություն	Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր
Հոդված 41. 1. Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի, կրոնի ազատության իրավունք: Այս իրավունքը ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով՝ քարոզի, եկեղեցական արարողությունների, պաշտամունքի այլ ծիսակատարությունների կամ այլ ձևերով արտահայտելու ազատությունը: 2. Մտքի, խղճի և կրոնի ազատության արտահայտումը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:	**Հոդված 18.** Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի ու կրոնի ազատության իրավունք. այս իրավունքը ներառում է իր կրոնը կամ համոզմունքը փոխելու ազատություն և միանձնյա կամ այլոց հետ համատեղ հրապարակավ կամ մասնավոր կարգով իր կրոնը կամ համոզմունքը քարոզելու, արարողությունների, պաշտամունքի և ծեսերի միջոցով արտահայտելու ազատություն:
Հոդված 42. 1. Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը: 2. Մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է: Պետությունը երաշխավորում է տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն առաջարկող անկախ հանրային հեռուստատեսության և ռադիոյի գործունեությունը: 3. Կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:	**Հոդված 19.** Յուրաքանչյուր ոք ունի կարծիքի և այն արտահայտելու ազատություն. այս իրավունքը ներառում է կարծիքներն առանց միջամտության ունենալու, անկախ պետական սահմաններից տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, լրատվության ցանկացած միջոցով ստանալու ու տարածելու ազատությունը:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Քաղաքական իրավունքը սահմանում է կողմերի իրավունքներն ու պարտականությունները քաղաքացի — հասարակություն — պետություն հարաբերություններում:

Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 3

Մեզ արդեն ծանոթ այս սահմանադրական դրույթի ուսումնասիրությամբ կարող ենք բացահայտել, թե որքանով է քաղաքացին ներգրավված պետական իշխանության ձևավորման գործում և որքանով է կարողանում իրականացնել վերահսկողություն պետական իշխանության նկատմամբ:

Նախ պետք է դիտարկել անձնական ազատությունն ու քաղաքական ազատությունը, որոնք սերտ կապված են միմյանց հետ. անձնական ազատությունից բխում է քաղաքական ազատությունը:

Անձնական ազատությունով է պայմանավորված, թե հասարակության կողմից ինչ պետություն է ստեղծված, ինչ վարչակարգ (ռեժիմ) է գործում, և հակառակը՝ պետական վարչակարգից է բխում, թե ինչքանով են երաշխավորված քաղաքացու անձնական և քաղաքական ազատությունները:

Անհնար է ունենալ ժողովրդավարական ու ազատ երկիր ոչ ազատ և ստրկամիտ քաղաքացիներով, և անհնար է ունենալ բռնապետական վարչակարգ ու ազատ քաղաքացիներ:

Քննարկում

► *Պատկերացրե՛ք, թե քաղաքացին չունի մտքերն ազատ արտահայտելու իրավունք կամ անձնական անձեռնմխելիության իրավունք: Ինչպե՞ս կարող է այդպիսի քաղաքացին ստեղծել ազատ, ժողովրդավարական պետություն, կամ եթե երկիրը բռնապետական է, ինչպե՞ս կարող են նրանում լինել ազատ քաղաքացիներ:*

Օրինակ՝ Կորեայի Ժողովրդադեմոկրատական Հանրապետությունում, որտեղ իրենց ղեկավարի մահվան կապակցությամբ ժողովուրդը հավաքվում էր հասարակական տարբեր վայրերում, որպեսզի արտասվի, «վատ արտասվողները»

կամ, ինչպես իրենք են ասում, «համապատասխան հուզականության բացակայություն ցուցաբերած» քաղաքացիները հանրային այդ արարողությունից հետո վեց ամսով աքսորվում էին հարկադիր աշխատանքի: Այդպիսի երկրում դժվար է լինել ազատ քաղաքացի:

Քաղաքական իրավունքն ուսումնասիրելու համար պետք է բացահայտել, թե պետությունը քաղաքացուն ինչ «գործիքներ» է տալիս, որ նա կարողանա արդյունավետ իրականացնել իր իրավունքները թե՛ իշխանության ձևավորման, թե՛ նրա գործունեության վերահսկողության նկատմամբ: Գործիքներն օրենքներն են, որոնք սահմանում են վարքագծի ընդհանուր կանոններ, իսկ դրանք օգտագործելու համար անհրաժեշտ են պետության կողմից երաշխիքներ:

ՀՀ բոլոր քաղաքացիների համար օրենքը տալիս է հետևյալ քաղաքական իրավունքները.

Քաղաքացիության իրավունք.

Քաղաքացիությամբ է, որ մարդն ունենում է տվյալ պետության հանդեպ պարտականություններ և իրավունքներ: Օրինակ՝ ՀՀ քաղաքացու անձնագրի վերջին էջում գրված է. *«Անձնագիրը կրողի հովանավորն է Հայաստանի Հանրապետությունը»:*

Քաղաքացուն են վերապահված քաղաքական մի շարք իրավունքներ, օրինակ՝ կուսակցության ղեկավար մարմնում լինելը:

Քաղաքացիությամբ մարդն ամուր կապ է ունենում տվյալ պետության հետ, և ոչ ոքի չի կարելի զրկել քաղաքացիությունից: Զրկելը լինում է բացառիկ դեպքերում, եթե, օրինակ՝ կեղծ փաստաթղթերով է ձեռք բերվել քաղաքացիությունը:

Միավորումներ կազմելու և դրանց անդամագրվելու իրավունք.

Հաճախ առաջանում են խնդիրներ, որոնք քաղաքացին ինքնուրույն չի կարող լուծել, և միավորումներ ստեղծելու անհրաժեշտություն է առաջանում՝ գաղափարական կամ այլ շահերից ելնելով:

Միավորումներն ընդհանուր շահեր ունեցող քաղաքացիների կողմից կամավոր ստեղծված հասարակական կառույցներ են, որոնց նպատակը հոգևոր կամ ոչ նյութական այլ պահանջմունքների բավարարումն է: Դրանք քաղաքական և հասարակական գործունեության կարևորագույն տարրերից են, առանց որոնց անհնար են քաղաքական մի շարք իրավունքներ:

Օրինակ՝ ընտրություններին համամասնական կարգով մասնակցում են միայն կուսակցությունները, որոնց գործունեության նպատակը հասարակության և պետության քաղաքական կյանքին մասնակցելն է:

Շատ են դեպքերը, երբ տարբեր խնդիրների շուրջ ստեղծվում են քաղաքացիական տարբեր նախաձեռնություններ (բնապահպանական, մարդու իրավունքների պաշտպանության և այլն), շատ քաղաքացիներ հավաքվում են մեկ ընդհանուր

գաղափարի շուրջ (օրինակ՝ փրկել կանաչ գոտին ապօրինի ծառահատումներից) և, ներդնելով իրենց ուժերը, կարողանում են լուծել տվյալ խնդիրը:

Հասարակական կյանքին մասնակցելու համար միավորման լավագույն տեսակը հասարակական կազմակերպություններն են:

Տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասը կազմակերպությանը կարող է անդամագրվել իր դիմումի հիման վրա՝ օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությամբ:

Հրապարակային հավաքների անցկացման իրավունք.

Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ՝ առանց զենքի հավաքների մասնակցելու իրավունք: Մարդը կամ քաղաքացին իր գաղափարները արտահայտելու կամ բողոքը լսելի դարձնելու համար կարող է կազմակերպել խաղաղ՝ առանց զենքի հավաքներ: Հավաքները կարևորագույն տեղ են զբաղեցնում քաղաքական և հասարակական գործունեության ոլորտում: Ներկայումս կան էլեկտրոնային կապի միջոցով հավաքներ կազմակերպելու տարբեր հնարավորություններ:

Հանրային կառավարմանը մասնակցելու իրավունք.

Ժողովրդավարության հիմքը ընտրություններն են, որոնք քաղաքական իրավունքի միջուկն են: Քանի որ ժողովուրդը չի կարող ամբողջ ծավալով իրականացնել իր իշխանությունը, ուստի իր լիազորությունների մի մասը պատվիրակում է պետական մարմիններին՝ մասնակցելով պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին և հանրաքվեի միջոցով երկրի համար կարևորագույն հարցերի լուծմանը:

Ցանկացած քաղաքացի իրավունք ունի ընտրելու (գործուն իրավունք) կամ ընտրվելու (կրուն իրավունք) միջոցով մասնակցելու պետական իշխանության ձևավորմանը:

Հանրային ծառայության ընդունվելու իրավունք.

Յուրաքանչյուր քաղաքացու հնարավորություն է տրված մասնակցելու ընտրությունների, մրցույթների և դառնալու հանրային ծառայող: Հանրային ծառայությունը պետությանը Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացումն է. ընդգրկում է պետական ծառա-

յությունը, համայնքային ծառայությունը, պետական և համայնքային պաշտոնները:

Պետական ծառայության տեսակներ են, օրինակ՝ քաղաքացիական, դատական, դիվանագիտական ծառայությունները, ինչպես նաև հատուկ ծառայությունները՝ պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության, հարկային, մաքսային ծառայություններ և այլն:

Դիմելու և պատշաճ պատասխան ստանալու իրավունք.

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի դիմելու ցանկացած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ պաշտոնատար անձի՝ իրեն հուզող հարցի վերաբերյալ խնդրանքով կամ առաջարկությամբ:

Այս իրավունքով քաղաքացիները կարողանում են լուծել իրենց խնդիրները կամ տարբեր առաջարկություններով բարելավել պետական մարմինների աշխատանքի որակը և արդյունավետությունը:

Պետք է հիշել, որ ՀՀ Սահմանադրության համաձայն՝ *պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար* ***լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:***

Հարցեր և առաջադրանքներ

1. Համացանցից կամ որևէ այլ աղբյուրից ընթերցեք Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի նախաբանը: Ո՞ր դրույթները կառանձնացնեիք առաջին հերթին:

2. Առաջնահերթության կարգով (ձեր տեսակետից) թվարկեք մարդու քաղաքացիական և քաղաքական իրավունքները:

3. Փորձեք ինքնուրույն մեկնաբանել արժանապատվության իրավունքը: Ո՞ր իրավունքը կնշեիք առաջին հերթին՝ կյանքի՞, թե՞ արժանապատվության:

4. Ինչպե՞ս եք գնահատում մեր երկրում իշխանության ձևավորման և նրա գործունեության նկատմամբ վերահսկողության ուղղությամբ քաղաքացուն տրված «գործիքները»: Ինչքանո՞վ են արդյունավետ օգտագործվում դրանք:

5. Ի՞նչ հասարակական կազմակերպություններ գիտեք և քանիսի՞ն եք անդամակցում:

Դաս 24–25

ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Ինչ ազդեցություն պետք է ունենա պետությունը տնտեսական հարաբերությունների վրա: Ո՞րն է նախընտրելի՝ ազատ շուկայական տնտեսական հարաբերությունները, թե՞ պետության կողմից կենտրոնացված կերպով կառավարվող տնտեսական հարաբերությունները: Այս բարդ և հակասական հարցը խնդրահարույց է եղել տարբեր ժամանակներում և շատ երկրներում: Խնդիրը փորձենք պարզաբանել որևէ երկրի օրինակով:

Ժամանակակից Բելառուսում մի շարք առումներով գործում է սոցիալիստական տնտեսական համակարգ, այսինքն՝ հիմնական բոլոր միջոցները՝ գործարաններ, շենքեր և այլն, պատկանում են պետությանը, և մարդիկ զրկված են արտադրության հիմնական միջոցները որպես մասնավոր սեփականություն ունենալու հնարավորությունից: Երկրի նախագահն այդ հանգամանքը բացատրում է նրանով, որ սեփականաշնորհելուց հետո այդ միջոցները կվաճառվեն և կփոշիացվեն:



Կեցությունն է որոշում գիտակցությունը:

Կարլ Մարքս

Քննարկում

► *Ձեր կարծիքով ո՞րն է ճիշտ՝ հիմնական միջոցների (գործարաններ, խոշոր հիմնարկներ) պետակա՞ն, թե՞ մասնավոր լինելը: Երկու դեպքերի համար էլ նշե՛ք դրական և բացասական կողմեր:*

Ազատ տնտեսական հարաբերությունների և ազատ շուկայի գոյությունն ամենևին չի նշանակում, որ պետությունն ամբողջությամբ մի կողմ է քաշվում և հրաժարվում տնտեսության բնագավառում իր գործառույթներից: Պետությունն ունի ազդեցության տնտեսական լծակներ, որոնք պետք է օգտագործի խելամիտ՝ տնտեսական մրցակցությունը խթանելու համար: Միաժամանակ՝ երկրի տնտեսությունը չպետք է դառնա պետական իշխանության թելադրանքի առարկա:

Պետության կարևորագույն գործառույթներից է մենաշնորհների դեմ պայքարը, քանի որ ազատ մրցակցությունն է ապահովում երկրի զարգացումը: Մենաշնորհ կարող է գոյություն ունենալ այն դեպքում, եթե դա պատկանում է պետությանը:

Պետությունը պետք է ապահովի բոլորի համար հավասար պայմաններ՝ օրենքով սահմանված ցանկացած տնտեսական գործունեություն իրականացնելու համար: Հասարակական տնտեսական հարաբերությունների հիմքը սեփականության ձևն է: Սեփականությունը տնտեսական և քաղաքական համակարգի էությունն է և անձի իրական ազատությունների երաշխավորման հիմնական բնութագրիչը:

Սեփականությունը լինում է *հանրային* և *մասնավոր:* Հանրային է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների սեփականությունը, օրինակ՝ մանկապարտեզի, պոլիկլինիկայի շենքերը: Իսկ մասնավոր սեփականություն կարող են ունենալ քաղաքացիները (ինչպես նաև օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք) և կազմակերպությունները:

Սեփականության իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

2. Ժառանգելու իրավունքը երաշխավորվում է:

3. Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

4. Ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի:

5. Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարումն իրականացվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով՝ միայն նախնական և համարժեք փոխհատուցմամբ:

6. Հողի սեփականության իրավունքից չեն օգտվում օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

7. Մտավոր սեփականությունը պաշտպանվում է օրենքով: …

ՀՀ Սահմանադրություն, հոդված 60

ՏԻՐԱՊԵՏԵԼ, ՕԳՏԱԳՈՐԾԵԼ, ՏՆՕՐԻՆԵԼ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Սեփականության իրավունքի բովանդակությունը ենթադրում է սեփականատիրոջ երեք իրավազորություն.

1. ***Տիրապետել գույքը.***

Տիրապետման իրավունքով գույքը գտնվում է սեփականատիրոջ տնտեսությունում, նրա փաստացի տնտեսական իշխանության ներքո, այսինքն՝ փաստացի

ունի տվյալ գույքը: Օրինակ՝ դուք ունեք մեքենա, որը կանգնած է ձեր ավտոտնակում: Սա նշանակում է, որ դուք փաստացի ունեք տվյալ գույքը: Տիրապետումը լինում է օրինական և անօրինական, ինչպես նաև բարեխիղճ և անբարեխիղճ: Օրինակ՝ օրինական է այն տիրապետումը, որն իր հիմքում ունի օրինական փաստաթուղթ՝ պայմանագիր, վարչական ակտ, իսկ անօրինական՝ դրանց բացակայությունը:

2. ***Օգտագործել գույքը.***

Օգտագործման իրավունքով սեփականատերը կարող է օգուտ ստանալ իր գույքից: Օգուտը կարող է լինել գույքի օգտագործումը, սպառումը, պտուղները: Սեփականատերն է որոշում՝ ինչպես օգտագործի իր գույքը:

3. ***Տնօրինել գույքը.***

Տիրապետման իրավունքով սեփականատերը որոշում է գույքի ճակատագիրը: Օրինակ՝ եթե դուք ունեք գույք, այն կարող եք վաճառել, նվիրել կամ դեն նետել:

Սեփականության իրավունքը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը:

Օրինակ, եթե որևէ մեկը ձեռք է բերում բերրի հողատարածք, և քանի որ հողատարածքն իրենն է, և ինքն է որոշում դրա ճակատագիրը, ապա այն կարող է դարձնել ճահիճ:

Կան նաև բացառություններ, օրինակ՝ հողի սեփականության իրավունքից չեն օգտվում օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք: Որոշ երկրներում այդ հարցն այլ կերպ է լուծվել: Օրինակ՝ Հունաստանում հողի սեփականատեր կարող են լինել այն երկրների քաղաքացիները, որտեղ թույլատրվում է Հունաստանի քաղաքացիներին լինել հողի սեփականատեր:



Էյֆելյան աշտարակը Փարիզում

1889 թ. մարտի 31–ին կայացավ աշտարակի հանդիսավոր բացումը: Այն մոտ 25 տարի Գ. Էյֆելի սեփականությունն էր: Նա մեծ գումարներ վաստակեց զբոսաշրջիկների այցելություններից և աշտարակի վարձակալությունից: Աշտարակը դարձել է Ֆրանսիայի խորհրդանիշը և տարեկան ընդունում է մոտ 250 մլն զբոսաշրջիկ:

Քննարկում

► *Ի՞նչ եք կարծում, վերը բերված օրինակը խտրականությո՞ւն է, թե՞ ոչ: Փորձե՛ք հիմնավորել ձեր կարծիքը:*

Հանրային գերակա շահ

Սեփականությունից զրկելու դեպք է, օրինակ՝ սեփականության օտարումը հասարակության և պետության կարիքների համար, որը պարտադիր պետք է ապահովված լինի երկու պայմանով.

1. *Բացառիկ՝ հանրային գերակա շահ,* որը որոշում է կառավարությունը (օրինակ՝ կառուցվում է մայրուղի, որը պետության և հասարակության համար շատ կարևոր է, և ձեր հողակտորը այդ տարածքի մեջ է հայտնվում).

2. *Նախնական՝ համարժեք փոխհատուցում,* որը նախ քննարկում են սեփականատիրոջ հետ, համաձանության դեպքում օտարումը լինում է կամավոր, իսկ համաձայնության չգալու դեպքում սեփականատերը կարող է դիմել դատարան:

Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք

Հասարակության անդամներն իրենց կենսագործունեությունն ապահովելու համար հանդես են գալիս որպես գնորդ և վաճառող՝ տարբեր ծառայություններից և աշխատանքներից օգտվողի, սպառողի կարգավիճակում:

Սեփականատերը կարողանում է արդյունավետ օգտվել իր սեփականության իրավունքից, եթե ստեղծված են սեփականությունից շահույթ ստանալու հնարավորություններ (վաճառելուց, օգտագործելուց կամ սպառելուց):

Պետությունը ստեղծում է պայմաններ, որպեսզի մարդիկ կարողանան անարգել ստեղծել առևտրային կազմակերպություններ, վարել առևտուր, ստանալ շահույթ և զբաղվել օրենքով չարգելված այլ ձեռնարկատիրական գործունեությամբ: Պետության կարևոր գործառույթը ոլորտը պետական պաշտոնյաների կամայականությունից, հանցագործություններից, մենաշնորհներից պաշտպանելն է: Ձեռնարկատիրությամբ զբաղվելն օգտակար է ոչ միայն անհատների, այլև պետության համար: Պետությունը ստեղծում է բարենպաստ պայմաններ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար: Ձեռնարկատիրական գործունեությամբ ապահովվում են աշխատատեղեր, և հարստանում է պետական բյուջեն:

Աշխատանքի ազատության իրավունք

Աշխատանքը մարդու կյանքի գոյատևման միակ աղբյուրն է, և աշխատանքով են ստեղծվում հանրային բոլոր բարիքները, գիտության, արվեստի, մշակույթի արժեքները: Բացի արժեքներ ստեղծելուց՝ աշխատանքը նաև գործունեություն է, որտեղ մարդը, ներդնելով սեփական կարողություններն ու ունակությունները, կարողանում է վաստակել:

Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է ոչ թե աշխատանքի իրավունքը, այլ աշխատանքի ազատությունը: Ո՞րն է տարբերությունը:

Աշխատանքի իրավունք նշանակում է, որ պետությունը յուրաքանչյուր անձի, քաղաքացու պարտավոր է ապահովել իր մասնագիտությանը, որակավորմանը համապատասխան աշխատանքով: Քանի որ այսօր Հայաստանում գործող ձեռնարկությունների մեծ մասը մասնավոր սեփականություն է, մասնավոր ընկե-

ռություններն են որոշում իրենց աշխատողների քանակը և անհրաժեշտ մասնագիտական որակը:

Իսկ *աշխատանքի ազատ ընտրության իրավունքն* այն է, որ յուրաքանչյուր ոք ազատ է ընտրելու իր մասնագիտությունը և զբաղմունքի տեսակը: *Աշխատանքի ազատությունը բացառում է հարկադիր աշխատանքը:*

Յուրաքանչյուր աշխատող ունի արդարացի և օրենքով սահմանված նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի իրավունք: *Աշխատավարձն* աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարելու դիմաց աշխատողին վճարվող հատուցումն է:

Յուրաքանչյուր աշխատող ունի անվտանգության ու հիգիենայի պահանջները բավարարող աշխատանքային պայմանների իրավունք:

Աշխատանքի ժամանակ յուրաքանչյուր աշխատողի համար պետք է երաշխավորվեն պատշաճ, անվտանգ և առողջության համար անվնաս պայմաններ, որոնց կատարման նկատմամբ պետությունը պարտավոր է իրականացնել հսկողություն և վերահսկողություն:

Գործնական աշխատանք 1

Համացանցից օգտվելով՝ գտեք ՀՀ-ում սահմանված նվազագույն աշխատավարձի չափը: Փորձեք պլանավորել ձեր ամսական բյուջեն:

Հանգստի իրավունք

Առավելագույն աշխատաժամանակը, հանգստյան օրերը և ամենամյա վճարովի արձակուրդի նվազագույն տևողությունը սահմանվում են օրենքով:

Հանգիստը որևէ գործունեությամբ զբաղվող, աշխատող յուրաքանչյուր մարդու բնական պահանջմունքն է, և առանց հանգստի անհնար է գործունեություն և աշխատանք: Օրենքը սահմանում է նաև, որ հանգստի իրավունքից հրաժարվելը առոչինչ է, այսինքն՝ ոչ ոք չի կարող հրաժարվել իր հանգստի իրավունքից:



Կլոդ Մոնե.
«Նախաճաշ բնության գրկում»

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կայքն է.
http://www.mss.am/

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Շուկայական տնտեսության պայմաններում բնակչության տարբեր շերտերի եկամուտները խիստ տարբեր են, ինչը տանում է սոցիալական բևեռացման, այսինքն՝ կան մարդիկ, ովքեր ապրում են ճոխ ու շռայլ կյանքով, և նրանց կողքին կան մարդիկ, ովքեր օրվա հացի խնդիր ունեն:

Թողնելով հարցի բարոյական կողմը, թե ինչն է ավելի արժանապատիվ, այն քննարկենք իրավական տեսանկյունից:

Պետության խնդիրն այն չէ, որ բոլորին ապահովի ցանկալի ֆինանսական միջոցներով: Պետության խնդիրը այնպիսի միջավայր ապահովելն է, որտեղ մարդը կարողանա ապահովել իր և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակ և կարողանա ապրել արժանապատիվ կյանքով, նաև օգնություն ցույց տալ, ձեռք մեկնել այն անձանց, ովքեր հայտնվել են այնպիսի իրավիճակում, որ չեն կարող ապահովել իրենց նվազագույն կենսապայմանները (հիվանդության, անաշխատունակության, հաշմանդամության և այլ դեպքերում):

Օրենքը սահմանում է՝ յուրաքանչյուր ոք ունի իր և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ բնակարանի, ինչպես նաև կենսապայմանների բարելավման իրավունք:

Պետությունն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում քաղաքացիների այս իրավունքի իրականացման համար:

Նախ պետք է հասկանալ, թե ինչ են *կենսապայմանը, կենսամակարդակը:*

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի համաձայն *(հոդված 25)*՝ կենսապայմանների մեջ են մտնում սնունդը, հագուստը, բնակարանը, սոցիալական և առողջապահական ծառայությունները: Պարզ է, որ ցանկացած մարդու համար բավարար կենսամակարդակը տարբեր է, բայց պետությունը երաշխավորում է նվազագույն կենսամակարդակ:

Իսկ ինչպե՞ս է որոշվում, թե որն է նվազագույն կենսամակարդակը, որ պետք է ապահովի պետությունը:

Կենսապահովման նվազագույն «զամբյուղը» մարդու առողջության պահպանման և կենսագործունեության ապահովման համար անհրաժեշտ՝ միջազգայնորեն ընդունված ֆիզիոլոգիական, առողջապահական և սոցիալական նորմատիվներով հաշվարկված սննդամթերքի և հիմնավորված գործակիցներով հաշվարկված ոչ պարենային ապրանքների և ծառայությունների կազմն ու կառուցվածքը սահմանող նվազագույն քանակն է, այսինքն՝ մարդուն ամսական ինչ է անհրաժեշտ, որպեսզի կարողանա ապրել՝ ինչ քանակի և որակի սնունդ, ինչքան էլեկտրաէներգիա, հագուստ և այլն:

Կենսապահովման նվազագույն բյուջեն այն գումարն է, որն անհրաժեշտ է և բավարար նվազագույն զամբյուղի մեջ մտնող բարիքներն ու ծառայությունները ձեռք բերելու համար: Այսինքն՝ պետությունը, հաշվելով, թե ինչքան է անհրաժեշտ մարդուն նվազագույն հագուստի, սննդի և տարբեր ծառայություններից օգտվելու համար, դրանով իսկ որոշում է երկրում աղքատության շեմը, նպաստի, կենսաթոշակի, նվազագույն աշխատավարձի չափը և այլն:



Մեր երկրում նվազագույն աշխատավարձի չափը կազմում է 55 000 դրամ:

Քննարկում

► *Ի՞նչ եք կարծում, նվազագույն աշխատավարձի չափը բավարա՞ր է վերը նշված կարիքների բավարարման համար: Եթե ոչ, ապա որքա՞ն գումար դուք կառաջարկեիք դրա փոխարեն:*

Ոչ միայն ՀՀ օրենքներով, այլև տարբեր միջազգային ակտերով առանձին սահմանված է *բնակարանի իրավունքը:*

Բնակարան է համարվում ցանկացած կացարան, որը նախատեսված է մարդու ինչպես մշտական, այնպես էլ ժամանակավոր բնակության համար, օրինակ՝ առանձնատունը, բազմաբնակարան շենքի բնակարանը, այգետնակը, հյուրանոցային համարը, հանրակացարանի սենյակը:

Օրենքով յուրաքանչյուրին իրավունք է տրված ունենալու բնակարան: Իսկ որքանո՞վ է ապահովված, ինչ երաշխիքներ են ստեղծված պետության կողմից այս իրավունքն իրացնելու համար:

Գաղտնիք չէ, որ բնակարանների գները բավականին բարձր են և բոլորի համար մատչելի չեն: Կան տարբեր տեսակի հիփոթեքային վարկավորման ծրագրեր, որոնք որոշ չափով կարողանում են լուծել այս խնդիրը: Պետության կողմից օգնության օրինակ է աղետի գոտում բնակարանների տրամադրումը այն քաղաքացիներին, որոնք երկրաշարժի հետևանքով կորցրել էին բնակարանները: Բնակարան է տրամադրվում նաև մանկատան չափահաս սաներին, զինծառայողների ընտանիքներին և այլն: Վերջին տարիներին շահեկան պայմաններով բնակարաններ են տրամադրվում երիտասարդ ընտանիքներին, մասնավորապես՝ երիտասարդ գիտնականներին:

Սոցիալական ապահովությունը

Յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի մայրության, բազմազավակության, հիվանդության, հաշմանդամության, աշխատավայրում դժբախտ պատահարների, խնամքի կարիք ունենալու, կերակրողին կորցնելու, ծերության, գործազրկության, աշխատանքը կորցնելու և այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 83

Սոցիալական ապահովությունը պետության կողմից մատուցվող գոյության բավարար միջոցների քանակն է այն մարդկանց, ովքեր լրիվ կամ մասնակի զրկված են աշխատելու և եկամուտ ստանալու հնարավորությունից:

Սոցիալական օգնության ծավալը կախված է պետության բյուջեից: Հայաստանում սոցիալական ապահովության հիմնական ձևերն են կենսաթոշակները, նպաստները, սոցիալական ծառայությունները: Սոցիալական նպաստները հիմնականում լինում են դրամական ձևով, սակայն կարող են լինել նաև բնամթերային ձևով:

Հայաստանի Հանրապետությունում կան սոցիալական ապահովության հետևյալ տեսակները.

- **Ծերության.** տրամադրվում է սահմանված տարիքի հասած անձանց՝ ցմահ:
- **Հաշմանդամության.** տրամադրվում է այն անձանց, ովքեր ունեն հաշմանդամության կարգ (տրամադրվում է ցմահ):
- **Հիվանդության.** տրամադրվում է այն քաղաքացիներին, ովքեր հիվանդության պատճառով զրկված են աշխատելու հնարավորությունից (տրվում է մինչև հիվանդության բուժումը):
- **Կերակրողին կորցնելու դեպքում.** տրամադրվում է այն անչափահասներին, որոնց ընտանիքի հիմնական եկամուտ բերողը մահանում է (տրվում է մինչև երեխաների չափահաս դառնալը):
- **Գործազրկության դեպքում.** տրամադրվում է գործազուրկներին՝ որոշակի ժամանակով:

Այս ցանկը սպառիչ չէ, և պետությունը կարող է սահմանել այլ դեպքերի համար նույնպես, օրինակ՝ ծննդաբերության, հղիության կամ հուղարկավորության:

Առողջության պահպանությունը

1. *Յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի առողջության պահպանման իրավունք:*
2. *Օրենքը սահմանում է անվճար հիմնական բժշկական ծառայությունների ցանկը և մատուցման կարգը:*

ՀՀ Սահմանադրություն, հոդված 85

Առողջություն նշանակում է ոչ միայն մարդու սոսկ գոյությունն առանց հիվանդությունների կամ ֆիզիկական արատների, այլև կենսական էներգիայով լեցուն, հասարակական կյանքին ակտիվորեն մասնակցելու, մարդու իրավունքներից անկաշկանդ ձևով օգտվելու և արժանապատիվ կյանքով ապրելու ընդունակություն: Պետությունն ինչպիսի միջոցառումներ էլ որ ձեռնարկի, չի կարող լիովին երաշխավորել հասարակության բոլոր անդամների առողջությունը, քանի որ առանձին հիվանդություններ դեռևս համարվում են անբուժելի կամ տեղի են ունենում աղետների, դժբախտ պատահարների հետևանքով կամ պայմանավորված են ժառանգական առանձնահատկություններով, բնածին արատներով: Այս իրավունքը բաղկացած է երկու մասից.

Բժշկությունը Հին Հռոմում

1. Առողջական խնդիրներ ունեցող անձանց բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք.
2. Առողջության համար անհրաժեշտ նախապայմանների ապահովման իրավունք (օրինակ՝ շրջակա միջավայրի մաքրություն, անվտանգ խմելու ջուր):

Եվրոպական շատ երկրներում, օրինակ՝ մարդու առողջ ապրելու իրավունքի երաշխավորման և ապահովման նպատակով մարդու կյանքի միջին տևողությունը հաշվարկելիս նկատի է առնվում նրա առողջ կյանքի միջին տևողությունը:

Բժշկական օգնությունը վճարովի է, բայց պետությունը երաշխավորում է հիմնական բժշկական ծառայություններն անվճար ստանալու իրավունքը: Օրինակ՝ առաջնային բժշկական օգնությունն անվճար է:

Քննարկում ► *Շտապօգնությունը անվճար ծառայություն է, և եթե մենք կանչի դեպքում վճարում ենք, արդյոք չե՞նք խախտում օրենքը:*

Անվճար բժշկական օգնության իրավունք ունեն նաև ձերբակալված, կալանավորված, ազատազրկման վայրում պատիժ կրող անձինք, զինծառայողները և զորակոչիկները, արտակարգ իրավիճակներից տուժած անձինք:

ՀՀ առողջապահության նախարարության կայքն է. http://www.moh.am/

Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը

1. Պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև:

2. Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 12

Շրջակա միջավայրն այն է, որտեղ ապրում կամ աշխատում է մարդը, ինչը շրջապատում է նրան և ազդում նրա վրա: Այսինքն՝ եթե մարդը ապրում է աղտոտված միջավայրում (օրինակ՝ հանք է շահագործվում, որը մարդու առողջության համար վտանգավոր է), ապա իմաստազրկվում են նրա մնացած բոլոր իրավունքները: Մարդը պետք է ունենա արժանապատիվ, առողջ կյանքին և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայր:

Բացի այն, որ պետությունն իր վրա է վերցնում շրջակա միջավայրի պաշտպանությունը և անվտանգությունը, նաև օրենքով պարտականություն է սահմանում՝ բոլորի համար պահպանել և բարելավել շրջակա միջավայրը:

Օրենքը նաև պարտականություն է դնում պետական մարմինների և պաշտոնատար անձանց վրա՝ հասարակությանը տեղեկատվություն տրամադրելու էկոլոգիական վիճակի մասին, ինչպես նաև պատասխանատվություն է սահմանում բնապահպանական տեղեկատվությունը թաքցնելու կամ տրամադրումը մերժելու համար:

ՀՀ բնապահպանության նախարարության կայքն է. *http://www.mnp.am/*

ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ: ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՄԱՐԴՈՒ ՀՈԳԵՎՈՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՐԱՇԽԻՔ

Մարդու և քաղաքացու մշակութային իրավունքներն են կրթության, ստեղծագործության ազատության, գիտության նվաճումներից օգտվելու և հասարակության մշակութային կյանքին մասնակցելու և այլ իրավունքներ:

Կրթությունը հասարակության տնտեսական, հոգևոր և սոցիալական առաջընթացի հիմնական միջոցն է: Միաժամանակ՝ կրթությունը յուրաքանչյուր մարդու զարգացման, նրա դաստիարակության և բարեկեցության կարևոր պայման է:

Քաղաքակիրթ երկրները հսկայական միջոցներ են ծախսում կրթության և դաստիարակության ուղղությամբ՝ գիտակցելով, որ այդ միջոցները ապագայում

կվերադարձվեն հասարակությանը՝ գիտական հայտնագործությունների, մշակութային արժեքների, որակյալ աշխատուժի և այլ տեսքով:

Կրթության իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: … Պետական ուսումնական հաստատություններում միջնակարգ կրթությունն անվճար է:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 38

Կրթությունն անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելու և սերունդներին փոխանցելու համար:

Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է:

Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է:

Մասնագիտական կրթությունն ուղղված է համապատասխան որակավորման մասնագետների պատրաստմանը, կարողությունների և հմտությունների ձևավորմանը, գիտելիքների ծավալի ընդլայնմանն ու որակավորման բարձրացմանը: Այն իրականացվում է արհեստագործական ուսումնարաններում, քոլեջներում և բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Հայաստանում գործում են բարձրագույն ուսումնական հաստատությունների հետևյալ տարատեսակները՝ համալսարան, ինստիտուտ, ակադեմիա, կոնսերվատորիա:

Կրթության իրավունքը բարձրագույն կրթության դեպքում պետք է հասկանալ հետևյալ կերպ. ոչ թե յուրաքանչյուր ցանկացող կարող է ընդունվել բարձրագույն ուսումնական հաստատություն և սովորել, քանի որ նա ունի կրթության իրավունք, այլ այդ իրավունքի իրագործումն ապահովվում է օրենքով սահմանված մրցութային հիմունքներով:

Քննարկում

► *Ի՞նչ եք կարծում, արդյոք ավելի ճիշտ չի՞ լինի ընդունելության քննությունները վերացնել՝ դրանով իսկ հնարավորություն տալով յուրաքանչյուրին սովորելու իր ցանկացած մասնագիտությամբ: Առաջարկե՛ք տարբերակներ, թե այդ դեպքում ինչ կարգի մրցույթ պետք է փոխարինի քննությունների՝ ներկայումս գործող համակարգին:*

ՀՀ կրթության և գիտության նախարարության կայքն է. http://www.edu.am/

Ստեղծագործության ազատությունը

Յուրաքանչյուր ոք ունի գրական, գեղարվեստական, գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատություն:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 43

Ստեղծագործել նշանակում է մարդկային գործունեություն, որն ուղղված է որակապես նորի, նախկինում երբեք չեղածի ստեղծմանը, արարմանը, կերտմանը, կառուցելուն, գոյացնելուն: Ստեղծագործել հնարավոր է մարդկային գործունեության բազմաթիվ ոլորտներում՝ արվեստի և գրականության, հոգևոր արժեքների ստեղծման, գիտական, տեխնիկական և այլ բնագավառներում:



Կարլ Շպիցվեգ.
«Գրքասոլը», 1850 թ.

Ստեղծագործական ազատությունը ենթադրում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, պաշտոնատար անձինք չեն կարող միջամտել մարդկանց կամ նրանց միավորումների ստեղծագործական գործունեությանը, չեն կարող նրանց ստիպել ընտրելու ստեղծագործության ուղղությունը, թեման, չեն կարող թելադրել, թե մարդիկ ինչի մասին և ինչ գրեն, ինչ նկարեն և այլն:

Ստեղծագործելու իրավունքների և ազատությունների մասին խոսելիս պետք է նաև խոսել մտավոր սեփականության իրավունքի մասին:

Մտավոր սեփականությունը պաշտպանվում է օրենքով: Մտավոր սեփականության օբյեկտներ են՝

- գիտության, գրականության և արվեստի ստեղծագործությունները,
- կատարումները, հնչյունագրերը (ֆոնոգրամաներ),
- հեռարձակվող կազմակերպությունների հաղորդումները,
- գյուտերը, օգտակար մոդելները, արդյունաբերական նմուշները և այլն:

Պետությունը երաշխավորում է նաև գիտության նվաճումներից օգտվելու և հասարակու-

թյան մշակութային կյանքին մասնակցելու յուրաքանչյուրի իրավունքը: Այս իրավունքն իր մեջ ներառում է հետևյալ երեք բաղադրիչները.

1. Յուրաքանչյուր ոք հնարավորություն ունի հաղորդակցվելու մշակույթին, լինելու մշակույթի տարածման կենտրոններում, ստանալու մշակութային (երաժշտական, թատերական, նկարչական և այլն) կրթություն.

2. Յուրաքանչյուր ոք հնարավորություն ունի հաղորդակցվելու մշակութային արժեքներին, օրինակ՝ այցելելու գրադարան, թանգարան, օգտվելու արխիվային պահոցներից և այլն.

3. Յուրաքանչյուր ոք հնարավորություն ունի մշակութային արժեքների հետ հաղորդակցվելու, օրինակ՝ բարոյական իդեալները, լեզուները, բարբառները, ժողովրդական բանահյուսությունը և այլն:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ձեր կարծիքով պետությունը պե՞տք է արդյոք միջամտի երկրի տնտեսական հարաբերությունների կարգավորմանը: Եթե այո, ապա ինչի՞ն պետք է ուղղված լինի այդ միջամտությունը:

2. Նշե՛ք սեփականության իրավունքի երեք իրավազորությունները: Պարզաբանե՛ք դրանք մեկ–երկու օրինակով:

3. Ձեր կարծիքով ինչո՞ւ սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը: Փորձե՛ք հիմնավորել:

4. Ո՞ր դեպքում է հնարավոր սեփականության օտարումը հասարակության և պետության կարիքների համար: Հիմնավորե՛ք պատասխանը օրինակներով:

5. Ինչո՞ւ է ձեռնարկատիրությամբ զբաղվելն օգտակար անհատների և պետության համար:

6. Որքանո՞վ է այսօր մեր երկրում աշխատանքի ազատ ընտրության իրավունքը մարդկանց հնարավորություն տալիս ունենալու մասնագիտություն և զբաղմունք:

7. Եթե ընտանիքներին օգնելու նպատակով անչափահասները վաղ տարիքից ուսմանը զուգահեռ աշխատում են, արդյոք գործատուները պահպանո՞ւմ են անչափահաս երեխաների համար նախատեսված աշխատանքային իրավունքները:

8. Փորձե՛ք մեր երկրում առկա կենսապայմանները համեմատել այլ երկրներում եղածի հետ: Ի՞նչ քայլեր կառաջարկեիք այդ առումով իրավիճակը բարելավելու ուղղությամբ:

9. Սեփականության իրավունքով ձեզ պատկանող բնակարանը վարձակալության հանձնելու դեպքում ո՞ր իրավունքն է պատկանում ձեզ, ո՞ր՝ վարձակալին:

Դաս 26 –27

ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ: ՀԱՀՄԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Սույն Կոնվենցիայի մասնակից պետությունները,

… ճանաչելով, որ Միավորված ազգերի կազմակերպությունը Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում և մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային դաշնագրերում հռչակել ու համաձայնել է, որ յուրաքանչյուր մարդ օժտված է դրանցում ամրագրված բոլոր իրավունքներով ու ազատություններով՝ առանց որևէ տարբերակման այնպիսի հիմքով, ինչպիսիք են ռասան, մաշկի գույնը, սեռը, լեզուն, կրոնը, քաղաքական և այլ համոզմունքը, ազգային կամ հասարակական ծագումը, գույքային դրությունը, ծնունդը կամ այլ կարգավիճակը,

հիշելով, որ Միավորված ազգերի կազմակերպությունը Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում հռչակել է, որ երեխաներն ունեն հատուկ հոգածության և օժանդակության իրավունք,

համոզված լինելով, որ ընտանիքին՝ որպես հասարակության հիմնարար խմբային միավորի և նրա բոլոր անդամների ու հատկապես երեխաների աճի ու բարեկեցության բնական միջավայրի, պետք է ցուցաբերվի անհրաժեշտ պաշտպանություն և աջակցություն, որպեսզի կարողանա լիարժեք կերպով ստանձնել իր պարտականությունները հասարակության շրջանակներում,

ճանաչելով, որ երեխան իր անհատականության լիակատար և բազմակողմանի զարգացման համար պետք է մեծանա ընտանեկան միջավայրում, երջանկության, սիրո և ըմբռնման մթնոլորտում,

համարելով, որ երեխան լիարժեք կերպով պետք է նախապատրաստվի հասարակության մեջ անհատական կյանքով ապրելուն և դաստիարակվի Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության մեջ հռչակված իդեալների և հատկապես խաղաղության, արժանապատվության, հանդուրժողականության, ազատության, հավասարության ու համերաշխության ոգով,

… հաշվի առնելով, որ ըստ Երեխայի իրավունքների հռչակագրի՝ «երեխան, նկատի ունենալով նրա մարմնական և մտավոր անհասությունը, կարիք ունի հատուկ պաշտպանության և հատուկ հոգատարության՝ ներառյալ պատշաճ իրավական պաշտպանությունը ծնվելուց առաջ և հետո»,

… ընդունելով, որ աշխարհի բոլոր երկրներում կան բացառիկ ծանր պայմաններում ապրող երեխաներ, և այդ երեխաները կարիք ունեն հատուկ ուշադրության,

պատշաճ կերպով հաշվի առնելով երեխայի պաշտպանության և ներդաշնակ զարգացման համար յուրաքանչյուր ժողովրդի ավանդույթների և մշակութային արժեքների կարևորությունը,

ընդունելով յուրաքանչյուր երկրում, մասնավորապես՝ զարգացող երկրներում երեխաների կյանքի բարելավման համար միջազգային համագործակցության կարևորությունը, համաձայնեցին ներքոհիշյալի մասին….

Կոնվենցիա երեխայի իրավունքների մասին

Ընդունված է ՄԱԿ–ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1989 թ. նոյեմբերի 20–ին

Երեխա է համարվում 18 տարին չլրացած յուրաքանչյուր ոք:

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք, հոդված 1

Միքելանջելո. «Սուրբ ընտանիք», 1507 թ.

Յուրաքանչյուր նորաստեղծ ընտանիքի գերագույն նպատակը զավակ ունենալն ու նրան երջանիկ մեծացնելն է: Ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման և կրթության համար:

Ինչո՞ւ են այսքան կարևորվում և առանձին ներկայացվում երեխայի իրավունքները: Կարելի է առանձնացնել առնվազն երկու կարևոր հատկանիշ.

• Երեխան, չունենալով բավականաչափ գիտելիքներ և հասունություն, չի կարող «հավասար» իրավունքների հարթությունում լինել չափահաս անձանց հետ, և նրա համար պետությունը պետք է երաշխավորի որոշակի «արտոնություններ»: Երեխային առնչվող բոլոր գործողություններում կողմնորոշիչ գործոն պետք է լինի երեխայի շահը:

• Մարդը անչափահաս տարիքում է ձևավորվում ու զարգանում որպես անհատ, և ինչպես որ դաստիարակվի, ինչպիսի գիտելիքներ ու կարողություններ ստանա, այնպես էլ կզարգանա նրա հետագա կյանքը:

Պարզ է, որ կան իրավունքներ, որոնք բոլորի համար նույնն են, և կարիք չկա առանձնացնելու՝ երեխա է անձը, թե ոչ, բայց դրանով հանդերձ պետք է խոսել երեխաների համար առանձին՝ պետության կողմից սահմանված երաշխիքների մասին:

Բոլոր երեխաներն ունեն հավասար իրավունքներ՝ անկախ իրենց և ծնողների ազգությունից, սեռից, լեզվից, ծագումից, գույքային կամ այլ դրությունից, կրթությունից և այլ հատկանիշերից:

Երեխայի խնամքն ու դաստիարակությունն իրականացվում են հիմնականում ընտանիքում, ինչի համար պատասխանատվություն են կրում ծնողները: Նրանք պետք է ստեղծեն անհրաժեշտ պայմաններ երեխայի լիարժեք զարգացման, դաստիարակության, կրթության, առողջության պահպանման, ընտանիքում և հասարակության մեջ ինքնուրույն կյանքի նախապատրաստման համար:

Ընտանիքում երեխայի լիարժեք խնամքն ու դաստիարակությունն ապահովելու նպատակով պետությունը և նրա համապատասխան մարմիններն օգնություն են ցույց տալիս ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչների՝ երեխայի բարեկեցությունն ապահովելու համար, խրախուսում են ընտանիքին աջակցող հոգեբանական, մանկավարժական, խորհրդատվական ծառայությունների գործունեությունը:

Հաջորդաբար անդրադառնանք երեխայի մի շարք իրավունքների:

Յուրաքանչյուր երեխա ունի կյանքի իրավունք:

Պետությունն ու նրա համապատասխան մարմինները ստեղծում են անհրաժեշտ պայմաններ երեխայի ապրելու և զարգանալու համար (մարդու կյանքի իրավունքը քննարկվել է նախորդ դասերին):

Յուրաքանչյուր երեխա ծննդյան պահից ունի անվան և քաղաքացիության իրավունք:

Քաղաքացիության մասին արդեն խոսվել է, այժմ խոսենք անվան մասին: Բոլորին կարող է թվալ, որ անունն ընդամենը սովորական բառ է և առանձնապես որևէ արժեք չի ներկայացնում, բայց դա այդպես չէ: Մարդը ներկայանում է հասարակության մեջ իր անունով, և բոլորը պարտավոր են ճանաչել այդ անունը: Երեխայի անունը պետք է լինի հաճելի, որպեսզի նա հպարտությամբ կրի այն:

Երեխայի անունն ու ազգանունը որոշում են նրա ծնողները: Ընդունված է, որ հիմնականում հոր ազգանունն է տրվում երեխային, բայց օրենքը նման բան չի սահմանում. ուղղակի դա մեզանում ձևավորված ավանդույթ է:

16 տարին լրացած երեխան կարող է փոխել իր անունը՝ դիմելով խնամակալության և հոգաբարձության մարմնին:

Քննարկում ► *Ի՞նչ զավեշտալի անուններ գիտեք, որոնք երեխաներին դուր չեն գալիս, բայց ստիպված են կրել:*

Յուրաքանչյուր երեխա ունի առողջության պահպանման և ամրապնդման իրավունք:

Յուրաքանչյուր ծնող ցանկանում է մեծացնել ու դաստիարակել առողջ երեխա: Երեխան պետք է ապահովված լինի իր տարիքին համապատասխան սնունդով, հանգստի և կենսական այլ անհրաժեշտ պայմաններով:

Պետական համապատասխան մարմիններն ապահովում են առողջապահական ծառայություններից երեխայի անվճար կամ արտոնյալ պայմաններով օգտվելու հնարավորությունը՝ ամենամյա առողջապահական նպատակային ծրագրերի շրջանակներում:

Յուրաքանչյուր երեխա ունի մարմնական, մտավոր և հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմանների իրավունք:

Երեխայի զարգացման համար անհրաժեշտ կենսապայմանների ապահովման հարցում հիմնական պատասխանատվությունը կրում են ծնողները:

Ծնողների կամ օրինական այլ ներկայացուցիչների կողմից երեխայի համար անհրաժեշտ կենսապայմանների ապահովման անկարողության կամ անհնարինության դեպքում պետությունը ցուցաբերում է համապատասխան օգնություն:

Յուրաքանչյուր երեխա ունի ամեն տեսակի (մարմնական, հոգեկան և այլ) բռնությունից պաշտպանության իրավունք:

Ցանկացած անձի, այդ թվում՝ ծնողներին, արգելվում է երեխային ենթարկել բռնության կամ նրա արժանապատվությունը նվաստացնող պատժի կամ նմանօրինակ այլ վերաբերմունքի, օրինակ՝ երեխային որպես պատիժ ծեծելը կամ ցուրտ եղանակին դրսում թողնելը: Շատ են դեպքերը, երբ երեխան չի ցանկանում ենթարկվել իր ծնողներին և կարծում է, որ ծնողները «անարդարացի» են իր նկատմամբ: Հասկանալի է, որ հիմնականում դա այդպես չի լինում, սակայն հնարավոր է նաև հակառակը:

Երեխայի իրավունքների և օրինական շահերի ոտնահարման դեպքում խախտողը (ծնողը, որդեգրողը, խնամակալը, հոգաբարձուն կամ ցանկացած այլ անձ) պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Յուրաքանչյուր երեխա ունի մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունք:

Յուրաքանչյուր երեխա իրավունք ունի ազատորեն արտահայտելու իր կարծիքը, որոնելու, ստանալու և հաղորդելու գաղափարներ ու տեղեկություններ հաղորդակցության ցանկացած միջոցով: Երեխայի՝ տեղեկություն ստանալու իրավունքը կարող է սահմանափակվել օրենքով:

Հինգամյա Նարեն լրագրողներին անկաշկանդ հայտնում է իր կարծիքը սիրելի հեքիաթների ժողովածուի մասին:

Այս իրավունքի շրջանակներում կարևոր է երեխայի ազատ խոսքի և մտածելու կարողությունը զարգացնելը: Դրա հետ մեկտեղ պետությունը սահմանում է նաև որոշակի սահմաններ: Օրինակ՝ ժամանակակից համակարգչային տեխնիկայի պայմաններում երեխան հնարավորություն ունի ստանալու ցանկացած տեղեկություն, մասնակցելու տարբեր քննարկումների և այլն: Սակայն երեխայի առողջության, բարոյական նկարագրի պաշտպանության նկատառումներով ծնողները կարող են արգելել այցելել որոշակի կայքեր:

Յուրաքանչյուր երեխա ունի կրթություն ստանալու և ուսումնական հաստատություն ընտրելու իրավունք:

Պետական համապատասխան մարմինները ստեղծում են անհրաժեշտ պայմաններ երեխայի անհատականության դրսևորման, տաղանդի, մտավոր և մարմնական ունակությունների զարգացման համար՝ հիմնելով հանրակրթական, մասնագիտական դպրոցներ, մարզական, տեխնիկական և մշակութային ստեղծագործական մանկական կենտրոններ և այլն:

Պետությունը, ինչպես հայտնի է, երաշխավորում է անվճար միջնակարգ կրթությունը:

Սակայն երբեմն հագուստ, գրենական պիտույքներ չունենալու և համանման այլ պատճառներով շատ երեխաներ զրկվում են կրթություն ստանալու իրավունքից:

Քննարկում ► *Եթե բոլոր դպրոցները լինեին վճարովի, ի՞նչ եք կարծում, երեխաները կկարողանա՞յին օգտվել կրթության իրենց իրավունքից:*

Արգելվում է առանց ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի համաձայնության մինչև 16 տարեկան երեխայի մասնակցությունը կրոնական կազմակերպություններին:

Կան դեպքեր, երբ ծնողները երեխային ներգրավում են կրոնական տարբեր կազմակերպությունների գործունեությանը:

Քննարկում ► *Չե՞ք կարծում, որ դա երեխայի իրավունքի խախտում է, և անհրաժեշտ է պետության միջամտությունն այդ դեպքերում:*

Յուրաքանչյուր երեխա ունի իր ժողովրդի պատմությանը, ավանդույթներին, հոգևոր արժեքներին և համաշխարհային մշակույթին հաղորդակցվելու իրավունք:

Երեխայի ստեղծագործական հնարավորությունների զարգացման նպատակով պետությունը խրախուսում է ֆիլմերի, հեռուստահաղորդումների թողարկումը, մանկական թերթերի, ամսագրերի, գրքերի հրապարակումը, ապահովում դրանց մատչելիությունը:

Արգելվում է երեխայի առողջության, մտավոր և մարմնական զարգացման, դաստիարակության վրա բացասական ազդեցություն ունեցող, բռնություն և դաժանություն քարոզող, մարդկային արժանապատվությունը նսեմացնող, ընտանիքը վարկաբեկող, իրավախախտումներին նպաստող զանգվածային տեղեկատվության և գրականության տարածումը:

Քննարկում

► *Օրենքով արգելվում է դաստիարակության վրա բացասական ազդեցություն ունեցող, իրավախախտումներին նպաստող տեղեկատվության տարածումը: Ի՞նչ եք կարծում, համակարգչային համանման խաղերի վաճառքը և տարածումը օրենքի խախտո՞ւմ է, թե՞ ոչ:*

Յուրաքանչյուր երեխա ունի իր տարիքային հնարավորություններին, զարգացման առանձնահատկություններին և ունակություններին համապատասխան մասնագիտություն ստանալու, օրենքով չարգելված աշխատանքային գործունեություն ծավալելու իրավունք:

Դեռահասները կամավոր ծառայության աշխատանքներ են կատարում ամառային արձակուրդի օրերին:

Երեխան հիմնական աշխատանքի կարող է ընդունվել 16 տարին լրանալուց հետո:

Մինչև 16 տարեկան երեխան կարող է ընդունվել ժամանակավոր (որոշակի ժամկետով) աշխատանքի՝ ծնողներից մեկի գրավոր համաձայնությամբ, եթե դա չի խանգարում նրա ուսումնառության գործընթացին:

Երեխան ունի աշխատանքի արտոնյալ պայմանների իրավունք: Արգելվում է երեխային ներգրավել ալկոհոլային խմիչքների, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի, ծխախոտի, էրոտիկա և սարսափ բովանդակող գրականության և տեսաերիզների արտադրության, օգտագործման կամ իրացման մեջ, ինչպես նաև այնպիսի աշխատանքներում, որոնք կարող են վնասել նրա առողջությանը, մարմնական և մտավոր զարգացմանը, խոչընդոտել կրթություն ստանալուն:

Յուրաքանչյուր երեխա ունի հանգստի և ժամանցի, իր տարիքին համապատասխան խաղերին ու միջոցառումներին ազատորեն մասնակցելու իրավունք:

Ծնողները և պետությունը պետք է խրախուսեն, նպաստեն, որ երեխայի համար ստեղծվեն նրա հանգստի և ժամանցի կազմակերպման բոլոր պայմանները:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխան ունի պետության և նրա համապատասխան մարմինների կողմից պաշտպանության, խնամքի, դաստիարակության և օգնության իրավունք:

Ցավոք, շատ են դեպքերը, երբ երեխան մնում է առանց ծնողների և զրկվում ծնողական սիրուց, դաստիարակությունից ու խնամքից: Այդպիսի երեխաների համար պետությունն է ապահովում խնամք, օգնություն, դաստիարակություն՝ տեղավորելով նրանց խնամատար ընտանիքներում, իսկ դրանց բացակայության դեպքում՝ մանկատներում:

Խնամքի ձևն ընտրելիս հաշվի են առնվում մայրենի լեզուն, տարիքը, սեռը և այլն: Երեխայի մարմնական, մտավոր և հոգևոր ունակությունների լիարժեք զարգացման, նրան ինքնուրույն կյանքի նախապատրաստելու նպատակով մանկատներում, գիշերօթիկ հաստատություններում ստեղծվում են ընտանեկանին մոտ պայմաններ: Ծնողազուրկ երեխայի անձնական հաշվին փոխանցվում է կենսաթոշակ:

Պետությունը և նրա համապատասխան մարմինները հաշմանդամ երեխային երաշխավորում են անվճար մասնագիտացված բժշկական, արատաբանական և հոգեբանական օգնություն, իր հնարավորություններին համապատասխանող կրթություն ստանալու, աշխատանքի տեղավորվելու հնարավորություն, հասարակական վերականգնում, լիարժեք կյանք՝ նպաստելով նրա ինքնավստահության ամրապնդմանը, դյուրացնելով նրա մասնակցությունը հասարակական կյանքին:

Նման երեխաները կարող են իրենց ցանկությամբ սովորել հանրակրթական դպրոցներում: Անհրաժեշտ է, որ այդպիսի երեխաները հնարավորինս լինեն հասարակության ուշադրության կենտրոնում, և ստեղծվեն այնպիսի պայմաններ, որ նրանք իրենց զգան հասարակության լիիրավ անդամ:

Արգելվում է երեխային ներգրավել ռազմական գործողություններին:

Արգելվում է երեխային ներգրավել ռազմական գործողություններին, զինված ընդհարումներին, ինչպես նաև երեխաների շրջանում պատերազմի և բռնության քարոզչությունը, մանկական ռազմականացված միավորումների ստեղծումը:

Արգելվում է մինչև 15 տարեկան երեխայի մասնակցությունը ռազմական գործողություններին: Օրինակ՝ շատ են նման դեպքերը արաբական մի շարք երկրներում, որտեղ բազմաթիվ երեխաներ մասնակցում են ռազմական գործողությունների:

Զինված հակամարտությունների ժամանակ պետությունն ու նրա համապատասխան մարմիններն ապահովում են երեխայի հատուկ պաշտպանությունը:

ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Հաշմանդամն այն անձն է, որը, առողջության խաթարմամբ պայմանավորված, կենսագործունեության սահմանափակումների հետևանքով ունի հասարակական պաշտպանության անհրաժեշտություն:

Ոչ որ ապահովագրված չէ հաշմանդամությունից:

Արդեն հասկանալի է, որ այսպիսի մարդիկ ունեն օգնության կարիք, և անհրաժեշտ է, որ պետությունը ստեղծի պայմաններ, որպեսզի նրանք կարողանան իրացնել իրենց իրավունքները և դառնալ հասարակության լիիրավ անդամ:

Օրենքը սահմանում է, որ հաշմանդամության հետ կապված խտրականությունն արգելվում է:

Հաշմանդամների իրավունքները երաշխավորված են իրավական տարբեր ակտերով *(Սիրավոր անկիարժեքությամբ անձանց իրավունքների մասին հռչակագիր, Հաշմանդամների իրավունքների մասին հռչակագիր, ՀՀ Սահմանադրություն և այլն):*

Ըստ ՀՀ Սահմանադրության *(հոդված 86)*՝ տնտեսական, հասարակական և մշակութային ոլորտներում պետության հիմնական նպատակներից են՝

- *հաշմանդամության կանխարգելման և բուժման ծրագրեր իրականացնելը,*
- *հաշմանդամների մասնակցությունը հասարակական կյանքին խթանելը:*

Հաշմանդամներն ունեն կենսագործունեության սահմանափակումներ՝ անձի ինքնասպասարկման ունակության, ինքնուրույն տեղաշարժվելու, կողմնորոշվելու, հաղորդակցվելու, սեփական վարքը հսկելու, ուսումնառելու և աշխատանքային գործունեությամբ զբաղվելու (երեխաների համար՝ նաև խաղալու) կարողությունների կամ հնարավորությունների լրիվ կամ մասնակի կորուստ (ներառյալ վերականգնման տեխնիկական միջոցների և օժանդակ այլ պարագաների օգտագործմամբ տեղաշարժվելը, տեսնելը, լսելը, խոսելը):

Նման մարդկանց համար համապատասխան պայմաններ ստեղծելը պետության խնդիրն է, սակայն քաղաքացիները նույնպես պետք է նպաստեն, որ հաշմանդամներն իրենց զգան հասարակության լիիրավ անդամ:

Բազմաթիվ են դեպքերը, երբ հաշմանդամները նույն աշխատանքը՝ մտավոր թե մարմնական, կարողանում են շատ ավելի լավ կատարել, քան հաշմանդամություն չունեցողները: Կան շատ հայտնի հաշմանդամ երաժիշտներ, գրողներ, մարզիկներ և այլն:

Հաշմանդամության պատճառ կարող են լինել ինչպես հիվանդությունները, այնպես էլ աշխատանքային խեղումները կամ վնասվածքները, բնական, տեխնածին և այլ աղետները, երկրի պաշտպանության ժամանակ ստացած վնասվածքները կամ հիվանդությունները և այլն:

Բրայլի համակարգը նախատեսված է տեսողական խնդիրներով անձանց տպագիր արտադրանքով ապահովելու, նրանց ակտիվ հասարակական կյանքից չզրկելու համար:

Հաշմանդամների կրթության իրավունքը

Պետությունը հաշմանդամների համար երաշխավորում է կրթության իրավունք, նաև պատրաստում է դրա համար անհրաժեշտ մասնագետ մանկավարժներ:

Պետությունն ապահովում է հաշմանդամ երեխաների նախադպրոցական դաստիարակությունը, հաշմանդամների՝ հանրակրթական և մասնագիտական կրթություն ստանալու համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը:

Օրինակ՝ տեսողության խանգարումներ ունեցող անձանց համար երաշխավորվում է Բրայլի համակարգով կատարվող ուսուցման ապահովումը:

Հաշմանդամների աշխատանքի իրավունքը

Հաշմանդամների ստեղծագործական և արտադրական ընդունակությունների իրականացման նպատակով և վերականգնման անհատական ծրագրերին համապատասխան՝ նրանց համար աշխատանք են ապահովում սովորական պայմաններ ունեցող ձեռնարկություններում:

Անթույլատրելի են հաշմանդամության պատճառով մարդուն աշխատանքի ընդունման կամ պաշտոնի բարձրացման մերժումը, աշխատանքից հեռացումը կամ այլ աշխատանքի փոխադրումը:

Եվրոպական շատ երկրներում հաշմանդամների համար ամենուր ստեղծված են հարմարավետ պայմաններ:

Անհրաժեշտություն է նաև նրանց տեղաշարժի համար հարմարավետ պայմանների ստեղծումը: Օրենքը երաշխավորում է, որ բնակելի շինություններում ապրող հաշմանդամների համար պետք է սարքավորվեն հատուկ միջոցներ և հարմարանքներ, որոնք կապահովեն նրանց մատչելի և հարմար տեղաշարժը:

ՀՀ կառավարությունը նաև ծրագիր է մշակում հաշմանդամների համար հարմարավետ երթևեկություն ապահովելու համար:

Պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինները պետք է ապահովեն հաշմանդամների համար մշակութային հիմնարկների և մարզական կառույցների մատչելիությունը և դրանցից օգտվելու համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը, մարզական հատուկ գույքի տրամադրումը:

Պետությունը երաշխավորում է հաշմանդամների հասարակական օգնությունը, ինչը կարող է իրականացվել դրամական վճարումների (կենսաթոշակ, նպաստ, այլ վճարումներ) ձևով, տեխնիկական և այլ միջոցների ապահովմամբ (ներառյալ ավտոմեքենաներ, թիկնասայլակներ, պրոթեզաօրթոպեդիկ սարքեր, հատուկ տառատեսակներով տպագիր արտադրանք, ձայնի ուժեղարարներ, ազդանշանային համակարգեր և այլն), ինչպես նաև հաշմանդամների կենցաղային սպասարկման և բժշկական ու հասարակական վերականգնման ծառայությունների տրամադրմամբ:

Հաշմանդամներն ունեն նաև հատուկ պրոթեզաօրթոպեդիկ կոշիկների և բոլոր տեսակի պրոթեզային իրերի (բացառությամբ թանկարժեք մետաղներից պատրաստվող ատամնապրոթեզների) անվճար պատվիրման, նորոգման և ստացման իրավունք:

Հարցեր և առաջադրանքներ

1. Համացանցից կամ այլ աղբյուրից ընթերցեք Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի նախաբանը: Ընտրեք ձեր կարծիքով առավել կարևոր երեք դրույթ և վերլուծեք դրանք:

2. Առօրյա կյանքում երեխայի ո՞ր իրավունքներն են ձեզ ավելի անհրաժեշտ թվում:

3. Ձեր կարծիքով ոտնահարվո՞ւմ են արդյոք երեխայի իրավունքները մեր երկրում: Եթե այո, ապա ավելի շատ որտե՞ղ է դա կատարվում՝ դպրոցո՞ւմ, տա՞նը, թե՞ բակում:

4. Որքանո՞վ են պաշտպանված հաշմանդամների իրավունքները մեր երկրում: Պատասխանը հիմնավորեք օրինակներով:

Firefox https://ebooks.bonee.net/fumf/nnme/

Օրենսդրական փաստաթղթի վերլուծություն՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների համատեքստում

Խմբային աշխատանք

Բաժանվե՛ք խմբերի: Յուրաքանչյուր խումբ պետք է ընտրի նոր մշակվող կամ փոփոխման ենթակա որևէ հանրային քաղաքականության օրինակ: Այդպիսի փաստաթղթերի կարելի է ծանոթանալ հետևյալ եղանակներով.

- Օրենսդրական փաստաթղթերի նախագծեր կարելի է ստանալ ձեր ընտրատարածքի պատգամավորից կամ այցելելով ՀՀ Ազգային ժողովի կայքը. *http://www.parliament.am/*
- Ռազմավարությունների, հայեցակարգերի, որոշումների նախագծեր կարելի է ձեռք բերել՝ դիմելով տվյալ ոլորտին առնչվող նախարարություն, պետական պատասխանատու որևէ մարմին կամ ներբեռնելով համապատասխան կայքից:

Առաջարկված նախագծերի քննարկման ընթացքում վերլուծե՛ք առաջադրված օրենսդրական փաստաթղթերի նախագծերը՝ ներկայացնելով դրանց նպատակը և օրենսդրական փոփոխության անհրաժեշտությունը:

143 von 146 12.02.2021, 12:07

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ 3
Դաս 1–2. Սահմանադրություն և ժողովրդավարություն 3
Դաս 3. Փոքրամասնության իրավունքներ և սեռային իրավահավասարություն 12
Դաս 4. Ընտրություններ 16
Դաս 5. Հանրային բարիք և անձի ինքնագիտակցություն 25
Դաս 6. ՄԱԿ-ի և միջազգային կառույցների դերը ժողովրդավարության կայացման գործում 32
Ամփոփիչ գործնական աշխատանք 39
ԳԼՈՒԽ 2. ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ, ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 40
Դաս 7. Հանրային քաղաքականություն 40
Դաս 8–9. Հանրային քաղաքականության գործընթացը և հիմնախնդիրները 47
Ամփոփիչ գործնական աշխատանք 54
ԳԼՈՒԽ 3. ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ 59
Դաս 10–11. «Քաղաքացիություն» հասկացությունը: Քաղաքացու իրավական կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում 59
Դաս 12. Ակտիվ քաղաքացի 67
Դաս 13. Մասնակցություն և առաջնորդություն 71
ԳԼՈՒԽ 4. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ 78
Դաս 14–15. Քաղաքացիական հասարակություն: Հասարակական կազմակերպություններ 78
Դաս 16. Զանգվածային լրատվության միջոցները և մարդու իրավունքները 83
Ամփոփիչ գործնական աշխատանք 87
ԳԼՈՒԽ 5. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉԸ 88
Դաս 17–18. Հուկայական տնտեսությունը որպես ազատ ձեռնարկատիրության հենասյուն 88
Դաս 19–20. Պետության դերը տնտեսության մեջ: Պետական բյուջե 96
ԳԼՈՒԽ 6. ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՀԻՄՆԱՐԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 103
Դաս 21. «Մարդու իրավունքներ» հասկացությունը: Մարդու իրավունքների սերունդները 103
Դաս 22–23. Մարդու քաղաքացիական և քաղաքական իրավունքներն ու ազատությունները 110
Դաս 24–25. Մարդու և քաղաքացու տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները 119
Դաս 26–27. Երեխայի իրավունքներ: Հաշմանդամների իրավունքներ 132
Ամփոփիչ գործնական աշխատանք 142

ԱՌԱՔԵԼ ՎԱԶԳԵՆԻ ԳՅՈՒԼԲՈՒԴԱՂՅԱՆ, ԿԱՐԻՆԵ ՌԱՖԻԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ,
ՏԻԳՐԱՆ ԱՐՇԱԿԻ ԹՈՎՄԱՍՅԱՆ

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ԴԱՍԱԳԻՐՔ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱՐ

АРАКЕЛ ВАЗГЕНОВИЧ ГЮЛБУДАГЯН, КАРИНЕ РАФИКОВНА АРУТЮНЯН,
ТИГРАН АРШАКОВИЧ ТОВМАСЯН

ОБЩЕСТВОВЕДЕНИЕ

9-ЫЙ КЛАСС

УЧЕБНИК ДЛЯ ОБЩЕОБРАЗОВАТЕЛЬНОЙ ОСНОВНОЙ ШКОЛЫ
(на армянском языке)

Издательство «Зангак», Ереван, 2018

Հեղինակային բոլոր իրավունքները պաշտպանված են:

Օգտագործված նկարներ
(հապավումներ՝ ն — ներքև, վ — վերև, ա — աջ, ձ — ձախ)

էջ 6՝ Լուիս-Ավգուստ Բիսսոն. *«Օնորե դը Բալզակ»*, էջ 7՝ Ջոշուա Ռեյնոլդս. *«Սեմյուել Ջոնսոնի դիմանկարը»*, էջեր 9, 20, 21, 26, 45 (ն), 109, 135՝ © Հովիկ Կարապետյան, էջ 13՝ © John Vachon, էջ 14՝ Ալեքսանդր Կուչարսկի. *«Օլիմպիա դը Գուժ»*, էջ 27՝ © Կոստանդին Ավագյան, էջ 32՝ © iStockphoto.com/Dave Long, էջ 34՝ © Patrick Gruban, էջ 42՝ Չեզարե Մակկարի. «Կիկերոնը մերկացնում է Կատիլինային», էջեր 48, 68՝ © Ֆոտոլուր/Հայկ Բաղդասարյան, էջ 50՝ Ֆրենսիս Բիկնել Քարպենտեր. *«Ազատության հռչակագրի առաջին ընթերցումը նախագահ Լինքոլնի կողմից»*, էջ 71՝ © Dick DeMarsico, էջ 88՝ © Hartsook, էջ 90 (վ)՝ Լիսիպ. *«Արիստոտելի կիսանդրին»*, էջ 106՝ Գոդֆրիդ Քնելեր. *«Ջոն Լոքի դիմանկարը»*, էջ 117՝ © Ֆոտոլուր/Վահրամ Բաղդասարյան, էջ 123՝ © Lewis Hine

Հրատարակչության տնօրեն՝ ԷՄԻՆ ՄԿՐՏՉՅԱՆ
Խմբագիր և սրբագրիչ՝ ՆՎԱՐԴ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ
Համակարգչային ձևավորումը՝ ԳՈՀԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ

Տպագրությունը՝ օֆսետ: Չափսը՝ 70 × 100 1/16: Թուղթը՝ օֆսետ: Ծավալը՝ 9 տպ. մամուլ, 11,61 պայմ. մամուլ:
Տառատեսակը՝ «Ասպետ»: Տպաքանակը՝ 17 789: Պատվեր՝ 03/Հ–17:

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23 25 28
Էլ. փոստ՝ info@zangak.am, էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am
Ֆեյսբուքյան կայքէջ՝ www.facebook.com/zangak